

1. Ես եմ քո Տեր Աստվածը:  
Ինձնից բացի այլ աստվածներ  
չպիտի լինեն քեզ համար:

2. Դու քեզ կուռք չինես:

3. Բո Տեր Աստծո անունը զմբանեցը  
չպիտի արտասանես:

4. Ծարաթ օրը սուրբ պահիր:

5. Պատուիր քո հորև ու քո մորք,  
որպեսզի բարիք գտնես, երկար  
ապրես բարերեր այն երկրի վրա, որ  
Տեր Աստված տալու է քեզ:

6. Մ'ի սպանիր:

7. Մ'ի շնացիր:

8. Մ'ի գողացիր:

9. Բո հարեւանի դեմ ուստ  
վկայություն մի տուր:

10. Ո՛չ քո մերձավորի տան, ո՛չ երա  
ազարակի վրա աչք մի՛ ունեցիր:  
Ո՛չ քո մերձավորի կենօն վրա, ո՛չ երա  
ծառայի վրա, ո՛չ երա աղախնոն վրա,  
ո՛չ երա եզան վրա, ո՛չ երա եշի վրա,  
ո՛չ երա անասունի վրա, ո՛չ այն  
ամենի վրա, ինչ քո մերձավոր  
աչք մի՛ ունեցիր:

**ԱՍԾԸ**  
**ՏԱՎԾ**  
**ՊԱՏՎՀԻՐԱՆՆԵՐԸ**

## ԱՍՏԾՈ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ

Եթե ըստ իմ Հրամանի ընթանաք, իմ պատվիրանները պահպանեք ու կատարեք դրանք, ապա անձրև կուղարկեմ ձեզ իր ժամանակին: Հողն իր բերքը կտա, իսկ դաշտերի ծառերը կը տամ իրենց պտուղները: Զեր կալերում աշխատանքը կը տևի մինչև այգեկութ, իսկ ձեր այգեկութները կտեսն մինչև նոր ցանքսի ժամանակը: Դուք կուշտ հաց կուտեք և ձեր երկրում անհոգ կապրեք: Զեր երկրին խաղաղություն կպարգենմ, և ձեր երկրում պատերազմ չի լինի: Կընեք, և չի լինի մեկը, որ ձեզ վախեցնի: Զեր երկրից կվերացնեմ չարիք պատճառող գաղամներին: Դուք հալածական կանէք ձեր թշնամիներին, և նրանք սպանված կընկնեն ձեր առաջ: Զեր հինգ հոգին հալածական կանի հարյուր հոգու, իսկ ձեր հարյուրը՝ բյուրավորների, ձեր թշնամիները սրի հարվածներից կընկնեն ձեր առաջ: Ես բարի աչքով կնայեմ ձեզ, կածեցնեմ ու կբազմացնեմ ձեզ և կկատարեմ ձեզ տված իմ խոստումը: Այնքան բերք կստանաք, որ նախորդ ու դրանից էլ առաջ ստացած բերքը կբավարարի ձեզ, բայց չին բերքը շտեմարանից միշտ պիտի համեք նոր բերքով լցնելու համար: Ես իմ ուխտատեղին պիտի հաստատեմ ձեր մեջ, և ես ձեզնից չեմ խորչելու: Ես պիտի քայլեմ ձեր մեջ և պիտի լինեմ ձեր Աստվածը, իսկ դուք պիտի լինեք իմ ժողովուրդը:

Մ Ե Տ Հ Ռ Ջ Ի Ժ Ա Ն  
Բ Ա Բ Ա Զ Ա Ն Յ Ա Ն

## ՊՍՏՉՈ ՏՎՈՒ ՊՈՏՎՈՒԹՅՈՒՆԵՐԸ

Կամ  
բացաբարություն գումարանոյացի  
(երրորդ վերանայված Հրատարակություն)



ԵՐԵՎԱՆ - 2003

**ՄԵՀՐՈՒԺԱՆ ՎԱՂԳԵՆԻ ԲԱՔԱՅԱՆՅԱՆ,  
«ԱՍՏՃՈ ՄԱՍԱՐ ԱՊԱՄՎԻՐԱՆՆԵՐԸ»  
ԵՐԿԱՆ 2003**

Այս Գրքույկի նպատակն է ընթերցողին ծանոթացնել Աստծո տասը պատվիրաններին և մեկնաբանել ըստ սուրբ Հայրերի խրատների ու խորհուրդների: Գրքույկում զետեղված են նաև մերժամանակի օրինակներ ու գեղքեր, որպեսզի համոզինք Աստծո խոսքի անփոփոխությանը բոլոր դարերի մեջ, քանզի մեր Տեր Հիսուս Քրիստոսն ասել է:

**«ԵՐԿԻՆքն ու երկիրը կացնեն, բայց իմ խոսքերը չեն անցնի»** (Մարկոս, Ժ 9, 31):

Քահանայական օրհնությամբ ու աղոթքներով հրամցված այս գրքույկը թող օգնի յուրաքանչյուր ընթերցողի կյանք տվող հավիտենական այդ խոսքերի մեջ հաստատվելու:



**«ՃՐԱԳ»**

**Ն Ա Խ Վ Ա Վ Ա Շ Ա**

Տասնաբանյայի բացարությունների այս գրքույկով գովելի աշխատանք է կատարվել: Այն լավ ագույն նվերն է մեր Հայաստանյայց Առաքելական եկեղեցու նորագործ հավատացյալներին: Նման աշխատությունները շատ կան, առկայն ՄԵՀՐՈՒԺԱՆ Բարձաշանյանի **«ԱՍՏՃՈ ՏԱՍԱՐ ԱՊԱՄՎԻՐԱՆՆԵՐԸ»** գրքույկի բացարություններն ու մեկնությունները առանձնահատուկ է իր ռուով, քանզի գրել ու մեկնել է Հավատով ապրելով դրանք, դարձնելով միև ու արյուն, այսինքն՝ կյանք: Գեղեցիկ եւ փոխառվայական մտահղացումներով ոճավորված լեզվով գրողների գործերը ընթերցելոց հետո երբեմն չես տպավորվում, որովհետեւ հաճախ դրանք լոկ խոսքեր են լինում ու կյանքով չաղոթած: Քանի որ մարդը բաղկացած է հոգուց ու մարմնից, ուստի մարդու Փիզիկական գոյության համար մարմինը անհրաժեշտ է կերակրել ու խնամել, ցրաից ու տոլից պաշտպանել, նույնականացնել հոգին, չարից ու ամեն տեսակի փորձություններից կենդանի պահելու համար հարկավոր է հոգեւոր կերակրություն: Խաղ Տասնաբանյայի պատվիրանները մեր հոգու ցանկապատն է, Աստճանակալ տության այբուբենը: Ով ցանկանում է Արարչին ճանաչել, թող հետամուռ լինի ամենօրյա Սուրբ Գրքի ընթերցանությանը, աղոթքով սնի հոգին ու զինվի Աստծո պատվիրանների գիտելիքներով: Հովհաննես առաքյալը ասել է. **«Այս է Աստծո հանդեպ մեր աերը, որ պահենք Նրա պատվիրանները»** (Ա. Հովհ. Ե. 3): Տիրոջ պատվիրանները կարող ենք պահել, եթե խոնարհենք սրտով, քանի որ հապատություններ սրտի պահակն է, որը արգելում է, որ Աստիք ներաբնակվի մեր մեջ:

Աղոթում եմ, որ այս գրքույկով բոլոր ընթերցողներին բերի օրհնություն, հավատ եւ Տեր:


04 գեկտեմբերի 1995 թ.

Սուրբ Էջմիածին

Տեր Հարություն.

Գայանե կանքի

քահանա



ՍԻՆԱ. ԼԵՌՈՅ

(ստորոտում՝ սուրբ եկատերինայի վանքը)

«Ե՞նէ կամենում ես Հավերդենական  
կյանքի մրնել, պահեր պարզության երը»  
(Մատթ. Ժթ. 17)

## ՄՈՒՏՔ

Անշուշտ շատերն են լսել կամ կարդացել Աստծո  
տասը պատվիրանների մասին: Եվ այս գրքույկի  
նպատակն է, թե՛ հիշեցնել մեր Տիրոջ այդ պատվի-  
րանները և թե՛ հաղորդ դարձնել նրանց, ովքեր դեռևս  
անտեղյակ են իրենց Արարչի կամքին:

Այժմ ավելի քան երբեք մեզ՝ հայորդիներիս  
անհրաժեշտ է ճշմարիտ լույսը, որպեսզի թոթափվենք  
անաստվածության տարիների մինչև մեր սրտերը  
թափանցած մահաբեր խավարից, մաքրենք մեր ապա-  
կանված սրտերը և արմատախիլ անենք տարբեր  
աղանդների կողմից մեր ազգի մեջ սերմանված չարի  
ապականիչ ու ժանտահոտ որոմները, որոնց գառնա-  
համ պտուղներից կամա, թե ակամա ճաշակում ենք  
բոլորս, ու դեռ էլի պիտի ճաշակենք եթե նորից մեր  
սուրբ նախնիների ճանապարհը չըռնենք: Իսկ կա՞  
արդյոք մեղքի խավարի դեմ ավելի զորավոր զենք,  
քան Արարչի խոսքը՝ Աստվածաշունչը և մանավանդ  
նրա պատվիրանները, որոնց մասին կիսունք այսու-  
հետեւ:

Մենք երբեմն-երբեմն անսահման ու անհուն տիե-  
զերքի ներդաշնակությանը նայելով արդյոք չե՞նք  
զարմացել, թե այդ ինչ զորությամբ, ու բացարձակ  
ճշգրտությամբ են իրար շուրջ պտտվում ահոելի  
աստղերն ու մոլորակները, կամ էլ ակամա չե՞նք հիա-

ցել բնության զարմանահրաշ գեղեցկությամբ ու անքննին օրենքներով, որոնք Հրաշալի Հաջորդականությամբ, ու մեկը մյուսից անկրկնելի գույներով փոխարինում են միմյանց: Ու մի՞թե այդ ամենը չի հուշում այդ ամենը Կանոնակարգողի, աներեւույթ ու անտեսանելի Արարչի՝ Օրենսդրի գոյության մասին: Ինչպես որ Դավիթ սաղմոսերգուն է ասում. «Երկնքն Աստծո փառքն է պատմում» (Սաղմոս ԺԹ 1): Բայց խոստովանենք, քչերս գիտենք, որ մեր ներսում, այդ նույն Օրենսդրի կողմից տրված են նաև բարոյական անփոփոխ օրենքներ, գրված մեր սրտերում, որոնք ի հայտ են գալիս մեր խղճմտանքի միջոցով: Ինչը և հաստատում է Պողոս առաքյալը. «Նրանք ցույց են տալիս, թե Աստծո օրենքի պահանջները գրված են իրենց սրտերում՝ իրենց խղճի վկայությամբ» (Հռոմ. Բ 15):

Իսկ տասը պատվիրանները, որ արվեց մեզ, Մովսես մարգարեի միջոցով (Բ. Օր. Ե 6-21), Սինա լեռան վրա, գրիելով անձամբ Արարչական Աջով, ինչով Աստված թե՛ Հիշեցրեց և թե՛ հաստատեց համամարդկային այդ օրենքի անփոփոխությունը:

Ահա այդ պատվիրանները.

1. «Ե՛ս եմ քո Տեր Աստվածը, որ քեզ Հանեցի եղիպտացիների երկրից՝ ստրկության տնից»:

Ինձանից բացի այլ աստվածներ չպիտի լինեն քեզ Համար:

2. «Երեւում՝ երկնքում, ներքեւում՝ երկրի վրա, և երկրի խորքի ջրերի մեջ եղած որևէ բանի նմանությամբ քեզ կուռքեր չպիտի կերտես: Չպիտի երկըրպագես ու

չպիտի պաշտես դրանց, որովհետև ե՛ս եմ քո Տեր Աստված՝ մի նախանձու Աստված. Հայրերի մեղքերի համար պատժում եմ որդիներին, ինձ ասող մարդկանց նույնիսկ երրորդ ու չորրորդ սերնդին, իսկ ինձ սիրող ու իմ Հրամանը կատարող մարդկանց մինչև Հազարերրորդ սերնդին ողորմում եմ:

3. Քո Տեր Աստծո անունն զուր տեղը չպիտի արտասանես, որովհետև Տերը արդար չի Համարում նրան, ով իր անունը զուր տեղն է արտասանում:

4. Հիշե՛ր շաբաթ օրը, որպեսզի սուրբ պահես այս: Վեց օր պիտի աշխատես և պիտի կատարես քո բոլոր գործերը: Յոթներորդ օրը քո Տեր Աստծու շաբաթ օրն է: Այդ օրը դու ոչ մի գործ չպիտի անես, ոչ էլ քո տղան ու աղջիկը, քո ծառան ու քո աղախնը, քո էշն ու եղը, քո բոլոր անսառուները, քեզ մոտ գտնվող օտարականն ու քեզ մոտ բնակվող պանդուխտը, որովհետև Տեր Աստված վեց օրում ստեղծեց երկինքն ու երկիրը, ծովն ու այն ամենը, ինչ դրանց մեջ է, իսկ յոթներորդ օրը Հանգստացավ: Դրա համար էլ Տերն օրհնեց յոթներորդ օրը և այն սուրբ Հոչակեց:

5. Պատվի՛ր քո Հորն ու քո մորը, որպեսզի բարիք գտնես, երկար ապրես բարեբեր այն երկրի վրա, որ Տեր Աստված տալու է քեզ:

6. Մի՛ սպանիր:

7. Մի՛ չնացիր:

8. Մի՛ գողացիր:

9. Քո Հարեւանի դեմ սուտ վկայություն մի՛ տուր:

10. Ո՛չ քո մերձավորի տան, ո՛չ նրա ագարակի վրա աչք մի՛ ունեցիր: Ո՛չ քո մերձավորի կնոջ վրա, ո՛չ նրա

ծառայի վրա, ո՞չ նրա աղախնու վրա, ո՞չ նրա եզան վրա, ո՞չ նրա էշի վրա, ո՞չ նրա անսառնի վրա, ո՞չ այն ամենի վրա, ինչ քո մերձավորինն է, աչք մի՛ ունեցիր»:

Իսկ այժմ մեկ առ մեկ, Աստծո խոսքով քննելով փորձենք ի հայտ բերել այն խորհուրդներն ու հորդորները, որ գրել է իր պատվիրանների մեջ Արարիչ ու Տեր Աստված ամենայնի<sup>†</sup>:

Մի անգամ մեր Տեր Հիսուս Քրիստոսը՝ երբ ուսուցանում էր պատվիրանների մասին, գգուշացրեց. «Ովոր այս պատվիրաններից, փոքրերից անգամ մի բան կշնչի և մարդկանց այդպե՞ս կուսուցանի, երիսքի արքայության մեջ փոքր պիտի համարվի. իսկ ով կկատարի և կուսուցանի, երկնքի արքայության մեջ նա մեծ պիտի համարվի» (Մատթ. Ե 17-19):

Եկ այսպես.

## ՊԱՏՎԻՐԱՆ ԱՌԱՋԻՆ

«Ե՞՞ Ե՞ Տ՞ ՏԵՐ ԸՍՎԸԸԾԸ»:  
ԻՆՅՆԵՐ ԷՄԳԻ ՊԵԼ ՊԱՐԴԱՆԵՐ ՀԱՐԵՐ ՀԵՆԴԱՐ»:

Տեր ասելով հասկանում ենք մեկին, որ ունի ստացվածք և գրանց վրա իշխելու բացարձակ իրավունք: Լինի դա առարկա, կամ շատ հաճախ նաև մարդկային անձեր, ինչպես եղել է դարերով, երբ թագավորները, իշխաններն ու մեծահարուսանները ունեցել են բազմաթիվ աղախիններ և ծառաներ, երբեմն էլ ճորտեր ու

<sup>†</sup>Այսուհետեւ պատվիրանները հակիրճության նպատակով կներկայցգեն կրծաս ձևով:

ստրուկներ: Իսկ Տեր Աստված ասելով հասկանում ենք Արարիչ, Որը ստեղծել է այն ամենը, ինչ որ տեսնում ենք, թե աներևոյթը՝ որոնց մասին միայն գաղափար ունենք. (օրինակ՝ հրեշտակներ, երկրի ձգողական ուժ, մագնիսական դաշտ, ուաղինակտիվ ճառագայթներ և այլն):

Մեր սբ. Գրիգոր Լուսավորիչ հայրապետը Արարիչ ու Տեր Աստծուն հետեւյալ բնորոշումն է ավել.

«Աստված կենդանի հոգի է, կիզող հուր, անչափելի ու անփոփոխ, անպատում փառք, անբազ զորություն, աննման, զարմանալի գեղեցկություն, անհասանելի մտքերի և խոհերի համար, լեզվով անբացատրելի, մտքում չամփոփող, դուրս ամեն տեսակ խոսքերից, ոչ աչքով տեսանելի, ոչ ականջով լսելի, ոչ էլ սրտի կարծիքով կարող ենք հասնել Նրան: Երկնքն ամբողջովին, ամենայն աշխարհը և տիեզերքը ամբողջովին բավական չեն ընդգրկելու Նրան: Նրա խոսքը ամեն ինչից բարձր է և Նրա հրամանի զորությամբ (տիեզերքը) մնում է կախված, առանց ողի վրա թռչող թևերի, իբրև թռչում է: Ինքը ամեն ինչ պարփակում է, ամեն ինչ Նրանում է, ամեն ինչից գուրս է, ամեն ինչ Նրանով է և ամեն ինչ Նրա փառքի համար է» (Ագաթանգեղոս, «Հայոց պատմություն», էջ 355):

Նաև ավելացրել է.

«Հավատացե՛ք Սուրբ Երրորդությանը, ընդունեք միությունը անշշունդ լուսությամբ և հավատով: Մենք, հողապատյան արարածներս, ինչպե՞ս կարող ենք քննել Անիմանալին, Անքննելին և կամ անճանաչելի

**Բարձրյալին:** *Մենք, որ սկիզբ ենք ունեցել, ինչպե՞ս կարող ենք քննել Անսկզբին, Անհասանելիին»:*

Ու քանի որ Աստված է Ստեղծողն ու Արարիչն ամենի, նշանակում է Նա Տերն է ամեն բանի, ու մանավանդ բոլոր մարդկանց, քանզի իր պատկերով ու նմանությամբ ստեղծեց մարդուն: Եթե ընդունում ենք, որ Աստված մեր Տերն է, ապա իմանանք, որ Նա իրավունք ունի թե՛ հրամայելու և թե՛ հնագանդություն պահանջելու յուրաքանչյուրից: Իսկ եթե խախտենք այդ պայմանները, ինքը ամենակարող Աստված լինելով, կարող է թե՛ պատժել անհնագանդներին և թե՛ արդարացիորեն հատուցել:

Բայց ինչպես ասում է Պետրոս առաքյալը. «(Աստված) համբերատար է ձեր հանդեպ, քանզի չի ուզում, որ որևէ մեկը կորսայան մատնի, այլ ուզում է որ ամենքը ապաշխարեն» (Բ Պետրոս Գ 9):

Հիմա նայենք՝ մեզ՝ երկրի երեսին ընակվող մարդկանց: Քանիսի՞ն գիտես, որ ապրում են Տիրոջ պատվիրանների համաձայն և Աստծուն Տեր ընդունելով, ամեն օր Նրա կամքն են փնտրում ու կատարում: Այժմ աշխարհում տեղի ունեցող անօրենությունն ու մեղքը, ահաբեկող և սառսուռ պատճառող դաժանություններն ու շրջապատում տիրող մարդկանց թշվառ վիճակը ապացույց է այն բանի, որ մարդ արարածը վաղուց մոռացել է, որ իր Տերը Աստված է: Բայց Աստված չի մոռացել որ ինքը Տեր է: Նա մեղքն ու անիրավությունը ատող և անբարիշտին ըստ արժանվույն հատուցող նույն Արարիչն է և պատվիրում է մեղ, որ այլ աստվածներ չունենաք, ինչպես շատերն են անում և մոռա-

նալով Աստծո վախը, իրենց համար աստվածացրել են հարստությունը կամ պաշտոնը, կնոջը կամ երեխային, իրենց ստամքսն ու մարմնավոր ցանկությունները և օր ու գիշեր բանալով ծառայում են դրանց հաճեցնելու և բավարարելու համար: Մի չարագուշակ ախտ էլ կա տարածված մեր ազգի մեջ, որը ամենառողակի ձևով հակառակ է Աստծո այս պատվիրանին: Ինչքան էլ տարօրինակ թվա, այն կոչվում է կախարդություն կամ գուշակություն: Բացատրեմ միտքս. եթե իրեն քրիստոնյա համարող մեկը, որը աղոթելիս ասում է. «Հայր մեր որ երկնքում ես...», բայց ինչ-ինչ հոգեկոր կարիքներ բավարարելու կամ զանազան գժվարություններ հաղթահարելու համար բացի Աստծուց գիմում է այլ գորության, ապա բնական է, որ այդ մի այլ գորությունը նա գերադասում է ծշմարիտ Աստծուց, ու ակամա աստվածացնում է այն: Եվ այժմ կամաց-կամաց ետք գետի հեթանոսության խավարը վերագարձողների թիվը բազմապատկվում է, որի համար Պողոս առաքյալն իր ժամանակին գրել է. «Եվ Սուրբ Հոգին հայտնապես ասում է, թե վերջին ժամանակներում ոմանք պիտի հեռանան հավատից և իրենց ուշադրությունը պիտի դարձնեն մոլորեցնող ոգիների վրա» (Ա Տիմ. Դ 1): Եվ աշխարհը, այդ թվում և մեր ազգը, չարին խիստ ուրախություն է պատճառում, թողած Աստծո ծշմարիտ խոսքը, որ է. «Թող ձեր մեջ չգտնվի այնպիսի մեկը, որ զբաղվի դյությությամբ, գուշակությամբ, կախարդությամբ, կամ էլ մեռելահարցությամբ զբաղվի, որովհետև Տիրոջ համար գարշելի է նա, ով այդպիսի քամերով է զբաղվում» (Բ Օքենք ԺՀ 10), ու տարբեր

Հեռուստա-ռադիո ծրագրերով քաղցկեղի պես տարածելով մարդկանց միտքն ու հոգին են են պղողորում զանազան հեթանոսական բախտացույցերով, կենդանակերպերի համաստեղությունների միջոցով՝ (ԳՈՐՈՍԿՈՂ) աստղագուշակություններով ու այլ միջոցներով ճակատագրերի կանխագուշակություններով մոլորեցնում մարդկանց: Մինչեռ լուրջ մարդիկ քննելով դրանց հետ կապված զանազան դիպվածները, իմաստնաբար հրաժարվել են այդ մոլորեցնող ախախց, քանի որ երջանիկ բախտ և հաջորդություն խոստացված բազում մարդկանց հանկարծահաս ու աղետալի մահերը ապացուցել են, որ նման բախտագուշակությունները միայն հիմարների համար են: Բայց շատերի տներում գտնվող կենդանիների պայտերը, դաշտային փշի խրձերը, աչքի ուլունքների շարանները, բախտագուշակության գրքերը, երազահանները, սուրճի բաժակի մրուրով ու խաղաքարտերով ապագան գուշակելը, ամենավառ ապացույցն է, որ նրանք մոռացել են, որ իրենք Արարիչ Աստված ունեն ու չար ու մութ զորությունների դիմելով պատվիրանազանց են եղել, բայց Աստված չի մոռացել, որ ինքը Տէրն է ու Դատաստանով հաշիվ է պահանջելու յուրաքանչյուրից ըստ մեր կատարած գործերի ու խոսքերի: Եսայի մարդարեն այսպես է ասում:

«Երբ ձեզ ասեն թե՝ վհուկներին ու նշանագետներին հարցընք», դուք պատասխանեք. «Մի՞թե ժողովուրդը իր Աստծուն պետք է չհարցնի. կենդանիների համար մեռածներին պիտի հարցնի» (Եսայի Թ. 19):

Այդ պատճառով երբ մկրտության արարողության

ժամանակ երեխային (ինչ տարիքի էլ ուղում է լինի մկրտվողը, կոչվում է երեխա) բերում են եկեղեցի՝ քահանայի մոտ, նա սաղմոսներ և շարականներ երգելով աղօթում է այսպես.

«Ով մարդասեր Աստված, ընդունիր Քեզ ընծայվող երեխային, սրբիր միտքն ու խորհուրդները նրա՝ հակառակորդի ամեն ներգործումից: Արժանացրու Սուրբ Ավագանով լվանալ մեր մեղքերի հնությունը և քո շնորհի լույսով նորոգվել, լցրու նրան երկնային շնորհով և ուրախացրու ամենաբարի կոչումով քրիստոնյա անվանվելու և արժանացրու սրան Մկրտության վերստին ծննդյան սուրբ Ավագանին, ընկունելով Քո Սուրբ Հոգին՝ Քո Սուրբ Եկեղեցու մարմինը և անդամը լինի»: Որից հետո թե՛ մկրտվողը, թե՛ մասնակիցները քահանայի հետ միասին կանգնում են դեմքով դեպի արևմուտք, ձեռքերը դեպի ետ, որը մերժելու և հրաժարվելու խորհուրդն ունի, արտասանում են:

«Հրաժարվում ենք սատանայից  
և խաբեություններից նրա,  
պատրանքներից նրա,  
խորհուրդներից նրա,  
ընթացքից նրա,  
չար կամքից նրա,  
չար հրեշտակներից նրա,  
չար պաշտոնյաներից նրա,  
չար կամքը կատարողներից նրա,  
և ամբողջ չար զորություններից նրա՝  
հրաժարվելով հրաժարվում ենք»:

Որից հետո բոլորը դառնալով դեպի հավատի լույսը՝ այսինքն դեպի արևելք (սր. խորանի կողմը), ձեռքերը առաջ պահած ընթերցում են Ավետարանը:

Կոմունիստական տարիներին, մի բարձրաստիճան ոստիկանի մայր հալածվում էր իր որդու կողմից, հավատքի պատճառով, բայց որոշեց տղայից թափուն իր հիվանդ թոռանը՝ այսինքն ոստիկանի որդուն, տանել և մկրտել: Երեկոյան երբ ամեն բան կատարված էր և երեխան հրաշքով բժշկվել էր, (այդպիսի դեպքեր շատ են կրկնվել՝ նույնիսկ եղել են դեպքեր, երբ մահամերձ երեխային մկրտել են, ու դեռ տուն չհասած նա արդեն ապաքինվել է): Խստասիրու ոստիկանը, որը կոմունիստական աթեիզմի այդ տարիներին պայքարում էր Աստծո դեմ, իմանալով եղելությունը, զայրանալով բարեպաշտ մոր դեմ, երեխայի ձեռքից բռնած տարել է այդ նույն քահանայի մոտ ու բարկացած հրամայել է հետ մկրտել իր երեխային և կնունքը չեղյալ համարել: Խորագետ քահանան հաւականալով թե բանն ինչում է, աղոթքով Աստծոց իմաստություն ստանալով, խոսել է հոր հետ ու ասել, որ մկրտության արարողությամբ քո երեխային ստանայի ձեռքերից «Հրաժարիմք» աղոթքով վերցվել և հանձնվել է Քրիստոսին՝ ի պահպանություն և ի փրկություն: «Եվ քանի որ դու՝ հայրդ, դեմ ես այս բանին, շարունակել է քահանան, –քո իրավունքն է, իսկ հիմա մենք կիսնդրենք Աստծոց, որ քո երեխայից հրաժարվի և նորից կհանձնենք ստանային, ու դու կվերցնես նրա ձեռքից և կդնաս տունդ»: Իմանալով ճշմարտությունը, սարսափած ոստիկանը նե-

րում է խնդրում քահանայից և ուրախ-ուրախ երեխայի հետ տուն վերադառնում, որ իր որդին անմտության պատճառով նորից սատանային չմատնվեց:

Այս փոքրիկ եղելությունը թող դաս լինի յուրաքանչյուր հայորդու համար, որ իրեն քրիստոնյա է անվանում, և թող խորհի, թե անհավատության պատճառով ինքն ու իր երեխաները գեռևս ո՞ւմ ձեռքում են գտնվում: Ավելացնենք, որ այժմյան քրիստոնեական աղանդները չհասկանալով աստվածաշտության հոգևոր խորհուրդը, ասում են, որ Քրիստոսի Խաչը, Տիրամոր և այլ սրբապատկերներ ունենանալը, կամ եկեղեցում այն գնելը կտապաշտություն է նշանակում: Թող այդպիսիներին պատասխանի մեր եռամեծ վարդապետ Գրիգոր Տաթևացին: «Իսկ եթե որևէ մեկը տարակուսի, թե ինչո՞ւ ենք մենք պատկերը պաշտում, համառոտաբար ասենք նրան. պատկերը, որ մենք երկրպագում ենք, ոչ թե ուների ու կուռքերի պատկերն է, այլ Քրիստոսի և Տիրամոր կամ հրեշտակների ու սրբերի: Եվ ոչ թե պատկերները որպես Աստված ենք պաշտում, այլ ում որ նա պատկերում է, նրանք ենք երկրպագում և պատվում: Եվ պետք է իմանանք, որ ոչ միայն այդ օրհնված պատկերներ ենք պատվում, այլև Խաչը, քանի որ Քրիստոս նրան միացած խաչվեց ու անբաժանելի է նրանից» (Տաթևացի, Ամարան Հատոր, էջ 14):

Ուրեմն, եթե ընդունում ենք, որ Տերն է միակ Արարիչն ու մեր Աստվածը, ապա զգույշ լինենք և իմաստությունով ապրենք մեր կյանքի այս կարծ օրերը ու ամեն բանից առաջ մեր Աստծո կամքը փնտրենք և հնագանդությամբ լսենք նրա խոսքերը

ու կատարենք Նրա պատվիրանները, որպեսզի ազատվենք բարկության օրվա ահեղ կրակներից և խոստացված փրկությանը հասնենք: Ուրեմն չչարաշահենք Աստծո համբերությունը և քաղցրությունը և կյանքի մնացած օրերում զղջումով ու ապաշխարությունով մաքրվենք մեր անօրենություններից, որովհետեւ Տեր Աստվածը նաև մաշող կրակ է և Նրա առջև ամբարիշտները չոր հարդի պես պետք է լինեն հատուցման օրը, որն անպայման գալու է աշխարհի վրա, քանզի ինքը՝ Տերն է խոստացել:

«Ահա պիտի գա Տիրոջ օրը՝ Հնոյի նման բորբոքված, և պիտի այրի նրանց բոլոր այլազգիներն ու ովքեր անօրենություն են գործում պիտի վառվեն ինչպես հարդն այն օրը, որ պիտի գա, ասում է Ամենակալ Տերը, - և նրանցից ոչ արմատ և ոչ մի ոստ չի մնա: Բայց ձեզ՝ իմ ամունից երկյուղ կրողներիդ համար արդարության արեգակը պիտի ծագի և բժշկություն պիտի լինի նրա շողերի մեջ և դուք պիտի ենք ու խայտաք, ինչպես կապից արձակված հորթերը, պիտի տրորեք ամօրեններին և նրանք մոխիր պիտի դառնան ձեր ոտքերի տակ այն օրը, որ ես եմ պատրաստել, ասում է Ամենակալ Տերը» (Մատքիս Դ 1-3):



## ՊԱՏՎԻՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

«Դու իւշ կուսակ շշունչ»

Այս պատվիրանը առաջինի շարունակությունն է և հաստատում է «Ուրիշ աստվածներ չունենաս» խոսքը, բայց այս անգամ ավելի հրամայական՝ «Կուռք չլինեն»: Քանզի Արարիչը չափազանց լավ գիտի, որ իր ստեղծած մարդը, իր Տեր Աստծուն երկրպագելու հոգի ունի: Եվ երբ մարդ չի ուզում ճանաչել, կամ էլ թողնում է իր ծշմարիտ Աստծուն ու մոռանում է նրան. ապա այդ հոգին կենսական պահանջ ունենալով իր Արարչին երկրպագելու և հարաբերվելու, հաճախ սկսում է երկրպագել ստեղծվածներին ու ոչ թե՝ Ստեղծողին: Իսկ ինչո՞ւ որովհետեւ երբ դրախտի պարտեզում մարդը մերժեց իր ստեղծող Աստծուն և մոլորված աղամորդիներս, որ ծշմարիտ Աստծո կարիքը ունենք, մեր մեղքերի պատճառով ծշմարտությունից հեռանալով, շատերս կամա, թե ակամա ստությանը հարեցինք և բազում անգամ չաստվածներին աստվածացրեցինք: Օրինակ ե՞ք ուզում, շատ հեռու չնայենք: Անցած 70 կոմունիստական տարիները քըննենք, թե ի՞նչ էինք անում և ում էինք երկրպագում և ո՞ւմ էինք փառք տալիս, հրշեն անգամ ամոթ է, բայց հետեանքն էր սարսափելի: Մոլագարի տենդով բռնված մեր հայրերը իրենց իսկ ձեռքով քանդեցին կամ էլ լավագույն դեպքում գոմերի ու պահեստների վերածեցին աղոթքներով հառնած մեր սուրբ տաճարները և սիրելի ցրտաշունչ ճամբարներ ճամփեցին բազում քահանաների և ազգի անմեղների ու արդարների, որոնք մերժեցին համակերպվել անօրենության

պղծությանը և չուզեցին ճշմարտությունը ստությամբ փոխել: Եվ այժմ մի սերունդ է ապրում, որոնցից շատերը ոչ միայն չեն ճանաչում իրենց Տեր Աստծուն, այլև չեն էլ ուզում ճանաչել և մոլորվելով, զանազան կուռքերի են երկրպագում, որը կարող է լինել թե՛ սիրած երգիչ, դերասան, կամ թե՛ մարմնամարզիկ, որ այդքան առատությամբ հրամցնում է այս աշխարհի հշխանը՝ սատանան և դրանով իսկ մարդկանց հոգիները պղծում:

Իսկ Պողոս առաքյալը նաև ավելացնում է «Ագածությունը նույնակես կրապաշտություն է» (Կողոսացիս Գ 5), երբ մարդը հույսը դնելով հարստության վրա, մերժում է իր Տեր Աստծուն, ինչը որ այժմ տեսնում ենք մեր իսկ աչքերով:

Հնում հեթանոսական մի կուռք կար, որի ներսում կրակ էին գառում այնքան ժամանակ, մինչև երկաթը շիկանում էր կարմրելու աստիճան: Եվ մարդիկ իրենց երեխաներին որպես զոհ, մերկ վիճակում բերում դնում էին կուռքի առաջ պարզած ձեռքերի մեջ ու ողջակեզ անում նրանց: Այս տողերը կարդալուց երեկ շատ ծնողների սիրտը ցավեց՝ պատկերացնելով այդ քսամնելի տեսարանը: Բայց լավ իմացիր, սիրելի հայրենակից, որ դու էլ հեռու չես նույն արարքից, եթե ինչ-ինչ պատճառներով արգելում ես քո երեխաներին իրենց նախնիների ճշշմարիտ Աստծուն՝ զիսու Քրիստոսին դառնայ և նրան երկրպագել: Ու դու ակամա նրանց քո իմացած կուռքերին ես հանձնում, որոնց հետևում սատանան է կանգնած՝ ձեռքերը պահած՝ դիվային ժպիտով հրճվելով: Իսկ ավետարանական ճշմարտությունը զգուշացնում է մեզ, թե ինչ է

սպասվում մարդկանց, որոնք թողել են իրենց Աստծուն.

«Արդար Աստծո բարկությունը երկնքից հայտնվելու է մարդկանց ողջ անհավատության և անիրավության վրա, քանի որ նրանք ճշմարտությունը անիրավությամբ են բոնած պահում: Նրանք փոխանակեցին Աստծու ճշմարտությունը ստով, հնագանդվեցին ու պաշտեցին արարածներին և ոչ Արարչին, որ օրհնյալ է Հավիայանս: Ամեն:

Ահա թե ինչու Աստված նրանց մատնեց անարդ կրքերի. որովհետև նրանց էգերը բնակման կարիքները փոխանակեցին անբնակման կարիքներով: Նույնակես և արուները, թողնելով էգի հանդեպ բնակման կարիքները, իրենց ցանկություններով բորբոքվեցին միմյանց հանդեպ. արուները արուների հետ խայտառակություն էին գործում և փոխարենը իրենք իրենց անձերի մեջ ընդունում էին իրենց մոլորության հատուցումը». (ՄՊԻԴ Հիվանդությունը - Մ.Բ.). (Հոմ. Ա. 18 -27):

Մի հոգեկոր քույր վկայեց իր ալպինիստ ամուսնու մասին, թե ինչպես էր ծաղրում իր հավատը և պարծենալով ցուցադրում իր հզոր բազուկները ու ասում. «Ահա՛, նայի՛ր իմ աստվածներին, իսկ ո՞ւր է քո պաշտած Աստվածը»: Ու եղավ այնպես, որ ամուսինը հիվանդացավ գեղձախտով ու հետզհետե հյուծվելով, թևերը մակարոնի նման բարակեցին, բայց մահվանից առաջ զղումով ապաշխարեց իր անմտության համար, որ իր բազուկներն էր աստվածացրել ու կոապաշտությամբ նրանց զորությանը ապավինել:

Իսկ վերջում, որպես խորհուրդ, այս պատվիրանի առիթով նորից հիշենք, որ Աստծուց առաջ ինչ էլ

գնենք, լինի դա կին, ամուսին, երեխա, հարստություն, պաշտոն, նույնիսկ հայրենիք, ինքնաբերաբար այն վերածում ենք կուռքի և սկսում ենք երկրպագել, պաշտել ու ծառայել դրանց:

Մեր ժողովուրդը քրիստոնավայել մի սքանչելի խոսքաղոթք ունի՝ «Առաջ Աստված», այսինքն ամեն մեր բոնած զորդից ու ծրագրերից առաջ, նախ թող Աստծո կամքը լինի: Իսկ Հակոբոս առաքյալը ավելի է հստակեցնում, ասելով. «Նրանք, որ ասում են. «Եյօր կամ վաղը գնամք այսինչ քաղաքը, մեկ տարի կմնամք այնտեղ, կվաճառենք, կվաստակենք»: Այսպես եք ասում դուք, որ ոչինչ չփխտեք վաղվա մասին, որովհետեւ ի՞նչ է ձեր կյանքը. Հիրավի այն, որ մի պահ երևում է և ապա ամհետանում: Մինչդեռ դուք պետք է ասեք. «Եթե Տերը կամենա, և ապենք, կամենք այս կամ այն բանը» (Հակոբ. Դ 13-15): Այդ չէ<sup>o</sup> պատճառը նման անմիտ քայլերի, երբ բազում հայորդիներ առանց Աստծո կամքը փնտրելու գնացել, պանդխտացել են ոռուսաստաններում ու շատ չանցած նրանց անշնչացած դիակներն են բերել ետք գոնե հայրենիքում թաղվելու միտիթարությամբ: Գրվածի խրատականը այս է. դու քեզ Աստծուց խելոք մի կարծիր, անձդ կուռքի վերածելով և ստանայի լարած թակարդը ընկիր, այլ խոնարհաբար Աստծո կամքը փնտրիր բոլոր հարցերում, Որը ամեն բան ի սկզբան գիտի: Եվ նույն սուրբ Անտոն Անապատականը խրատում է. «Որտեղ էլ լինես, ինչ էլ ամեն՝ Աստծուն միշտ աչքիդ առջեւ ունեցիր»:

Ուրեմն եկեք հենց այդպես էլ ապրենք և մեր Աստծուն ամեն բանից վեր դասենք, որպեսզի նրա հավիտենական օրհնությունները վայելենք:

## ՊԱՏՎԻՐԱՆ ԵՐՐՈՐԴ

«Ք» Տեր Աստծո անունը պարու դեղու շների արդասանենք, «Դ» Համեր անունը պարու դեղու արդասանենք, «Ձ» Իր անունը պարու դեղու արդասանենք»:

Առաջին և երկրորդ պատվիրանները վերաբեր-վում էին մեր էռությանը, որպեսզի Տիրոջը սուրբ պահենք մեր սրտերում, ու չթողնենք, որ այնտեղ՝ Աստծո Գահին, զանազան կուռքեր և չաստվածներ նստեն և նրանց չերկպագենք, քանզի գրված է. «Ամեն զգուշությունով քո սիրտը պահիր, քանզի կյանքի աղբյուրները այնտեղ են» (Առակներ Դ. 23): Գրաբարում և այլ և այլ թարգմանություններում, աղբյուրների փոխարեն գրված է «ելքը», այսինքն, թե ինչ ելք պիտի ունենա այս կյանքի ճանապարհը, կախված է մեր իսկ սրտերի վիճակից: Այդ չէ<sup>o</sup> պատ-ճառը, որ Աստվածային սաղմոսերգու Դավիթը աղոթում է. «Փորձիր ինձ ով Աստված ու ճանաչիր իմ սիրտը, քննիր ինձ ու իմացիր իմ շավիդները, ու նայիր թե արդյոք չար ճանապարհների մեջ եմ, և առաջնոր-դիր ինձ հավիտենական ճանապարհով» (Սաղմոս Ճ. Թ 23-24):

Իսկ այս երրորդ պատվիրանը զգուշացնում է մեզ, որպեսզի Տեր Աստծու անունը չարատավորենք նույնիսկ շրթունքներով, քանզի «Բերանը սրտի լիությունից է խոսում» (Սատթ. ԺԲ. 34), քանզի զուր տեղը Աստծու անունը տվողը անմեղ չի համարվում: Բայց հիշենք թե քանի անդամ ենք հենց այնպես, չնչին անառիթ ու դատարկ տեղը, Աստծու անունը տվել,

կամ էլ ավելի չար բան արել, այսինքն երդվել ենք վկա բերելով Տիրոջը, չերկուղելով որ Նա մեր Արարիչն է, ահավոր (ամեն առումով) և Տերը բոլոր ստեղծվածների: Իսկ շատ անմիտներ մի քանի դրամ նյութական շահի համար երդվում են իրենց ծնողների գերեզմանով, երեխաների արեով կամ էլ այլ սրբություններով:

Անխոհեմաբար երդվելու վտանգի վերաբերյալ մեջբերեմ ավետարանական մի դիպված: Հերովդես արքան իր ծննդյան օրը զվարձանալիս, Հյուրերի առջև երդվեց Հերովդիայի դատերը հաճելի պարի համար, տալ ինչ որ ուզի: Եվ նա իր մոր խրատով Հովհաննես Մկրտչի գլուխն ուզեց: Թագավորը շատ տիրեց իր խոստումից, քանի դիտեր, որ նա Աստծո ծառան է, բայց քանի որ երդվել էր, ստիպված մարդ ուղարկեց և Տիրոջ մեծագույն մարդարեին գլխատեցին այդ անմիտ երդման պատճառով:

Իսկ Հովհան Մայրավանեցին երդման վերաբերյալ ասում է. «Երդումը սատանայի կապանքն է, որ կապում է մարդկանց և չկա ազատվելու միջոց: Երդումը խեղդում է անձին, խեղդում է մարդկանց մինչև մահվան դուռ և տանում դժոխք: Եղբայրներ, երկնչենք երդումից, ինչպես ըոլոր մերքերից»:

Մեր Տիրոջ բարկությունը հատկապես գործում է այն ժամանակ, երբ մարդը իր սուտը ծածկելու համար, նենգամտաբար երդվում է Աստծո անունով, վկա բերելով Արարչին: Այդ պատճառով է, որ քանիցս Տեղը զգուշացրել է. «Գողություն մի արեք, սուտ չխուեք և իրար չխաբեք: Եվ իմ անունով սուտ երդում մի արեք ու ձեր Աստծու անունը մի պղծեք. Ես եմ Տերը»

(Ղևական ԺՀ 12): Իսկ Հիսուսը լրացրեց. «Լսել եք դարձյալ, թե ինչ ասվեց նախնիներին. «Երդմնազանց մի՛ լիներ, այլ արա Տրոջն այն, ինչ երդվել ես»: Իսկ ես ձեզ ասում եմ՝ ամենևի՛ն չերդվել. ո՛չ երկնքի վրա, որովհետև Աստծո աթոռն է, ո՛չ երկրի վրա, որովհետև Նրա ոտքերին պատվանդան է, և ո՛չ երուսաղեմի վրա, որովհետև մեծ Արքայի քաղաքն է: Եվ քո գլխով էլ չերդվես, որովհետև չես կարող մի մազ իսկ սպիտակ կամ սև գարձնել: Այլ ձեր խոսքը լինի՝ այսն՝ այո, և ոչը՝ ոչ որովհետև դրանից ավելին չարից է» (Մատթ. Ե 33-37):

Հիմա անցնենք առաջ և քննենք այն հարցը, որ ցափուտ է դարձել պատերազմական վիճակում գտնվող մեր ժողովրդի համար: Կարելի է արդյոք երդում տալ հայրենիքին, որպես զինվոր:

Երդումը ոչ հոգեոր առումով, դա չփոփոխվող, վստահելի և հաստատուն մի խարիսխի վրա հենված, բանավոր կամ գրավոր մի արարողություն է, որով երկու կողմերը կարող են ուխտի, այսինքն դաշինքի մեջ մտնել: Ու մարդկային և հասարակական կենցաղավարության համար երբեմն օգտագործվում է երդման արարողությունը, որը տարբեր է հոգեոր պատվիրանից: Այդ պատճառով Հովհաննես երգնկացի վարդապետը դրանք տարբերակելու համար գրում է. «Արդ, քրիստոնյան երբ պարտազորվի երդում անել և եկեղեցի գնալով քահանայի միջնորդությամբ հաստատվի, որ արդարացի է հոգու շահ կա, կամ արյան փրկություն, այդ ժամանակ թույլատրվի վկայության այս երդումը»:

Իսկ զինվորը, որին վստահվելու է հայրենիքի և

ժողովուրդի ապահովությունը, պարտավոր է հաստատել իր հավատարմությունը (որ կոչվում է դրոշի երդում), միառժամանակ կրելով նաև այն պատիժը, որ կարող է լինել դավաճանության դեպքում։ Դա անշուշտ բարձրացնում է զինվորի զգաստությունը իր հայրենիքի և ժողովուրդի հանդեպ, որոնց համար նապատերազմելու է։

Բայց երբեմն այս պատվիրանը կեղծ, կամ աղանդավորները զինվորական երդումից հրաժարվելով, թաքցնում են կամ իրենց վախկոտությունը, կամ էլ պատասխանատվություն չկրելու միտումը։

Երդման արարողությունը կատարվում է նաև դատարաններում, որտեղ երդվյալ վկայի խոսքից երբեմն կարող է կյանքի և մահվան հարցեր լուծվել, այդ պատճառով վկայի երդումը և դրանով իսկ վերցված պատասխանատվությունը դառնում է չափազանց կարևոր։ Քրիստոնյա երկրներում մեծ մասամբ երդում են ձեռքը դնելով Սուրբ Գրքի՝ Աստվածաշնչի վրա, մահմեղական երկրներում՝ Ղուրանի վրա, իսկ նախկին սոցիալիստական երկրներում նսեմացնելով Աստծո երկյուղը, ոչ մեր սրբություն չգտան, որպեսզի երդվեն դրա վրա, (դե կոմունիստական մանիֆեստի վրա չէին երդվելու և պատասխանատվության վախ կրելու դրա մեռած առաջնորդներից), ու բոլորս դարձանք ստախոս։

Մեր նախնիները, որոնք մեզանից ոչ պակաս քրիստոնյա են եղել. երդվել են՝ թագավորները, երդվել են նաև կաթողիկոսներն ու քահանաները՝ Աստծուն և ժողովրդին հավատարիմ լինելու։ Ամուսնական խորհրդի կատարման ժամանակ հարսն ու

փեսան Աստծո, քահանայի և ներկանների առջև նույնական պարտավորական իրենց խոսքն են ասում, որը հավասարազոր է երդմանը՝ մինչև ի մահ միմյանց հավատարիմ ծառայելու խոստումով։

Այսքան օրինակները բավական են, որպեսզի հաւանանք մեկ բան, եթե որևէ մեկը ճշմարտությամբ ուզում է մարդկային ուխտի պատասխանատվության վկայություն տալ, ապա կմնա անպարտ իր Արարչի առջև, եթե սիրաը ուղղիղ է Տիրոջ առջև։ Իսկ եթե ծուռ են նրա միտումները, ու նենդավոր նրա մտքերը, ապա վայր նրան, քանզի սարսափելի բան է կենդանի Աստծո ձեռքն ընկնել արդար Դատաստանի օրը։ Իսկ սովորական, առօրյա խոսակցության, կամ կենցաղային հարցերում երդումը արգելված է քրիստոնյաների համար, ինչ պատճառով ուզում է լինի։

Հիշենք, որ երբ ստությամբ ես երդվում, վկա ես բերում ստության հորը՝ սատանային, բայց երբ ճշմարտությունն ես ասում, ապա քեզ վկա է կանգնում մեր Տեր Հիսուս Քրիստոսը, քանզի ինքը վկայեց՝ ասելով. «Ես եմ ձամապարհը, ձշմարտությունը և Կյանքը» (Հովհ. ԺԴ 6), և ավելացրեց. «Ձշմարտությունը ձեզ կապատի» (Հովհ. Լ 32)։ Իսկ Դավիթ թագավորը ճշմարտությունը հավասարեցնում է զենքի. «Ձշմարտությունը որպես զրահ քո շուրջը կլինի» (Սաղմոս Ղ. 4)։

Հայորդիներիս մեջ մնացած հինավուրց մի սովորությամբ, ոմանք նեղության ժամանակ խոստման ուխտ են անում Աստծու հետ, որը հավասարազոր է երդումի։ Այսինքն, ժողովրդական լեզվով ասած, «մատադ» են խոստանում, եթե փորձությունից խաղաղու-

թյամբ գուրս գան, լինի դա հիվանդություն, թե պատահար, կամ էլ այդ անում են դրանցից ազատվելուց հետո: Ու որպեսպի գուր տեղը Աստծո անունը բերանդ առած չլինես և սուս գուրս չգաս, պարտավոր ես ուխտի կատարել. զոհողությունդ անել, ինչպես որ զգուշացնում է Դավիթ թագավորը. «Ուխտ արեք և կատարեք ձեր Տեր Աստծուն» և դարձալ. «Ծնորհակալության զոհ մասուցիր Աստծուն ու քո ուխտերդ կատարիր Բարձրյալին: Ու նեղության օրը կանչիր ինձ, Ես քեզ պիտի ազատեմ ու դու ինձ պիտի փառավորես» (Սաղմոս Ծ 14-15): Բայց երբեմն մարդիկ չհասկանալով դրա հոգեւոր իմաստը, մորթված կենդանու մսից յոթ բաժին դրացիներին բաժանելով, մնացած վերածում են ուտել խմելու, քեփի ու շատ անգամ էլ հարբեցողության արարողության, դրանով իսկ ավելի մեծ փորձանքի և մեղքի մեջ ընկնելով: Որովհետև այդ «մատաղով» միայն իրենց ստամբուրը ուրախացան ու իրենց քիմքերը բավարարվեցին, մոռանալով որ Աստված պատվիրել է հիշել որբերին, աղքատներին ու կարույաներին: Այս առիթով նաև իմանանք, որ եթե դու մատաղ ես անում, բայց ինքդ անարդում ես Աստծո «Մատաղը», որ Հովհաննես Մկրտիչը վկայեց Հիսուսի մասին. «Աչա՛ Գառն Աստծո, որ վերացնում է աշխարհի մեղքը» (Հովհ. Ա 29), այսինքն Քրիստոս Տիրոջ Պատարագն ու Սուրբ Հաղորդությունը, դու դրանով անապական ու հավիտենական կյանք պարգեսող Աստծո Որդուն ես մերժում, ինչպե՞ս ես ուզում, որ Տեղը քո ապականացու մատաղը ընդունի: Միգուցե ընթերցողը ասի, ես չեմ մերժում Աստծո Որդուն, բայց շարունակի Տիրոջ պատվիրաններին

հակառակ կյանքով ապրել, կիրակի օրերը եկեղեցու պատարագներին չմասնակցել, նման քրիստոնյան կեղծավոր է, և Աստծուն միայն շրթունքներով է պաշտում, ինչը անարգանք է սուրբ Աստծո հանդեպ: Դա նման է այն զավակին, որ կրում է իր հոր անունը, օգտվում է նրա ունեցվացքից, բայց մերժում է նրա խրատները ու մեղալից և անառակ կյանք վարում:

Մեր քրիստոնյա նախնիները լավ գիտեին մատաղի տեսքով ողորմություն բաժանելու կարեորությունը, բայց նախ իրենք աշխատել են մաքուր ու արդար ապրել, հետո այդ նպատակով իրենց հոտերից առանձնացրել մատաղացու կենդանիներ (որոնք մատաղենի են կոչվել) և օրհնել տալով քահանայի մոտ, պատվիր են աղքատներին ու կարույաներին, քանզի լսել էին Տիրոջ խոսքը, որ ասել է. «Անողորմ է լինելու դատաստանը նրա հանդեպ, ով ողորմած չի եղել. քանզի ողորմածությունը բարձրավուխ պարծենում է դատաստանի դիմաց» (Հակոբոս Բ 13), և դարձալ. «Ողորմություն տվեք և ահա ձեր ամեն ինչը մաքուր կլինի» (Ղուկ. ԺԱ. 41): Իսկ մատաղի վերաբերյալ մեր սուրբ վարդապետները զգուշացրել են, որ չլինի թիմարդը հանդգնի ու իր գողացածից կամ անօրենության վարձից մատաղը անի, որը Տիրոջ առջև պիղծ է ու անընդունելի, որպես թիմառան փոխարեն շուն մորթած լինեն: Նաև այս առիթով ասենք, որ ժամանակակից աղանդավոր մտածելակերպով իրենց քրիստոնյա համարող անձինք չհասկանալով մեր առաքելական եկեղեցու հինավորց ավանդությունների բուն հոգեւոր նպատակը անմտաբար, կամ անդիտաբար անարգում են մատաղի, մոմի, սրբապատկերների ու

**Նույնիսկ սուրբ Խաչի խորհուրդը, որով իսկ իրենց հոգիները զրկում են դրանց կարևորությունից, էլ չեմ ասում անհրաժեշտությունից, քանզի այդ բոլորը հիշեցնում են աներևույթ Աստծուն:**

Իսկ այժմ, երբ չկան այլևս սեփական հոտերն ու տնային կենդանիները, մարդիկ կարող են մատաղ անել, այսինքն ընծայաբերություն անել սեփական ունեցվածքից՝ կամ իրենց արդար վաստակից, կամ ով ինչով որ կարող է օգնել կարիքավորներին: Բայց ավելացնեք, որ աղքատները ոչ միայն սնունդի և հագուստի կարիք ունեն, այլև սիրո և մխիթարության, այդ պատճառով թող մեր արած ամեն բանը սիրով լինի:

Որպեսզի շեշտենք ողորմության կարևորությունը, մեջ բերենք եկեղեցու հայրերի մի քամի խրատներից.

**«Ամեն տեսակ բարեգործություններից Աստծուն ավելի մոտ ու պատվական է աղքատասիրությունը»:**  
(Սահակ Պարթև)

**«Աստված ոչ միայն երկրի վրա է օգնում ու փրկում ողորմածին, այլև հանդերձյալ կյանքում քաղմապատիկ առատությամբ վերադարձնում նրան իր ողորմությունները»:**

**«Աստված ոչ թե տվածի չափին է նայում, այլ տվողի արամագրությանը»:**

**«Երկրի վրա առատատու մխիթարություն սերմանենք, երկնքի մեջ ողորմություն կհնձենք»:**  
(Հովհան Մանդակունի)

**«Աղքատներին մխիթարի ինչպես որ կարող ես, քանզի նրանք Դատավորին մեր հանդեպ ողորմած են պահում»:**  
(Նեղոս Սինայեցի)

**«Ողորմություն տվողին ձեռք մեկնողը՝ աղքատ մուրացկանն է, բայց ողորմություն առնողը Աստված է»:**

(Հովհաննես Ոսկեբերան)

**«Ողորմությունը ուրիշ բանի կարու չէ բացի մեր կամքից»:**

**«Աղքատները մեղքերը սրբող թաշկինակ են, եթե ողորմություն տաս»:**

(Բարսեղ Մաշկեվորցի)

**Ողորմածի հանդեպ Աստված էլ է ողորմած:**  
(Անանուն)

Իսկ այս բոլորը հաստատվում է աստվածային Դավթի հետևյալ սաղմոսով.

**«Երանի՛ նրան, ով հոգ է տանում աղքատին ու տնամկին.**

Նեղության օրը Տերը կիրկի նրան:

Տերը կիրկի ու կպահպանի նրան,

երանելի կրարձնի երկրի վրա

և չի մատնի նրան իր թշնամիների ձեռքը:

Տերը նրան կզորացնի

տառապանքի մահճում,

և նրա անկողինն ամբողջովին

կմաքրի իր հիվանդությունից»

(Սաղմոս Խ 1-4):

Իսկ Պողոս առաքյալը այս բոլորի վերաբերյալ զգուշացնում է. «Բարերարությունդ հարկադրամքով չլինի, այլ հոգարակամ» (Փիլիմոն 14):

Այսպիսով աղքատներին ու կարիքավորներին հիշենով և Տիրոջ անունով ողորմություն անելով, քո Տեր Աստծու անունը իզուր տեղը հիշած չես լինի և անպարտ կմնաս Տիրոջ առջեւ:

## ՊԱՏՎԻՐԱՆ ԶՈՐՌՈՐԴ

### «Ը մ է ո ՞ ը ս ո ՞ ւ պ ա հ ի ՞ ն»

Ինչպես արդեն ասացինք, առաջին և երկրորդ պատվիրանները սրտի սրբություն, երրորդը նրա բարությունն էր պահանջում, իսկ չորրորդը՝ պահանջում է այդ ամենի գործով հաստատումը: Ինչպե՞ս. շաբաթ օրը սրբությամբ պահելով, այսինքն յոթներորդ օրը, երբ ժողովուրդը և իր հետ կապված ամեն բան պետք է հանգստանար, մինչև իսկ նրանց անասունները: Տերն այդ պատվիրանը հաստատեց, որպեսզի մարդը աշխարհի գործերից կտրվելով, մարմնի ցանկություններից հրաժարվելով այդ օրը մտածի իր հավիտենական հոգու մասին: Այդ պատճառով երբայերենից շաբաթը թարգմանվում հանգիստ, իսկ բառիս բռն իմաստով՝ գործադուլ: Եվ այս պատվիրանը այնքան խիստ էր, որ երբ այն տրվեց Մովսեսի միջոցով և մի հրեա մարդ չէնազանդվելով Աստծո օրենքին, շաբաթ օրը ցախ էր հավաքում կրակի համար, հրամայվեց քարերով սպանել նրան:

Առաջին հայացքից անմեղ թվացող այդ մարդու արարքը իրականում նշանակում էր արհամարհանք գեպի Աստված և նրա օրենքները: Մինչև անգամ որոշված էր, թե հրեա մարդը այդ օրը քանի քայլ իրավունք ուներ անելու, որպեսզի մեղավոր չհամարվեր (2000 քայլ), արգելված էր նաև կրակ վառել, կերակուր պատրաստել և այն: Օրենքի նախանձախնդիր շատ հրեաներ նույնիսկ այդ օրը քայլելիս ոտքերը քայստացնելով էին քայլում, իսկ դերձակնե-

րը իրենց ասեղներն էին հանում հագուստների վրայից, որ չինի թե դրանով գործ արած լինեն և Աստծո առջև պատվիրանզանց լինեն:

Հրեական շաբաթի պահպանման կարևորությունը երևում է Աստվածաշնչային հետեւյալ դըրվագից. երբ գերությունից վերաբրձողները նորից շարունակում էին հեթանոսների նման վարպել սուրբ օրվա հանդեպ, հանդիմանվեցին Տիրոջ ծառա նեեմիի կողմից. «Այս ինչ անօրենություն եք գործում դուք. պղծում եք սուրբ շաբաթի օրերը: Մի՞թե այդպես չարեցին ձեր հայրերը և Աստված նրանց վրա բերեց այս բոլոր չարիքները: Հիմա դուք ինչո՞ւ եք ավելացնում Տիրոջ բարկությունը Խորայելի վրա և պղծում սուրբ շաբաթի օրերը» (Նեեմիա ԺԳ 17-18):

Այս գրքույկի երկրորդ հրատարակությունից շատ չանցած, Տիրոջ ողորմությամբ անարժանս հրավիրվեցի սուրբ երուսաղեմ, մեր սուրբ Հակոբյանց վարժարանում դասավանդելու: Եվ ես այստեղ իմ աչքերով տեսա թե ինչպես են հրեաները պահում այս պատվիրանները: Տեղի աղության պատճառով մեջ բերենք դրանցից մի քանիսը, քանի որ Մովսիսական օրենքը բաղկացած է 613 կետերից, ու բացում ենթակետերից, որոնցից մեծ մասը վերաբերվում է շաբաթին, որովհետև ըստ հրեա ու արքիների մեկնության, ով պահում է շաբաթը, դա հավասարազոր է, որ նա կատարում Հնգամայյանի բոլոր պատվիրանները: Շաբաթապահությանը վերաբերող մանրամասները հրեաները այնքան են «նրբացրել», որ նույնիսկ փորձում են որոշել, շաբաթ օրը հավի ածած ձուն պիղծ է, թե՞ մաքուր և թե ո՞ր օրը կտրել մատների եղունգները, որ այն

չսկսի աճել շաբաթ օրով: Ահա նման անհեթեթության աստիճան հասնող շաբաթի օրենքներից մի քանիսը.

❖ Արգելվում է այդ օրը մոմի լույսի տակ մենակ ժամանակ կարդալ, որովհետև կարող է ինքնաթերաբար ձեռքդ մեկնես և պատրույգը շտկես, որը կրակ վառելուն է հավասարազոր, ինչը խստիվ արգելվում է: (Այդ պատճառով հրեաները իրենց ուտելիքները պատրաստում են ուրբաթ օրը և պահում հատուկ թերմոսների մեջ):

❖ Ծառից ընկած մրգերը չեն կարելի բարձրացնել:   
❖ Ընկույզ և նման ընդդեղնեններ արգելվում է կոտրել, ուտել, որը հավասարազոր է աշխատանքի:   
❖ Եթե այդ օրը ճաշի մեջ ճանճ ընկնի, ապա փչելով հեռացրու մինչեւ ամանի եղրը ու որոշ քանակի հեղուկի հետ դուրս թափիր, որ «որսորդություն» արած չլինես:

❖ Նմանապես, եթե որևէ դարակ ես բացում ու նորից փակում, պետք է զգուշանալ, որ մեջը ճանձ չմտնի, այլապես «որս» արած կլինես ու կիսախտես շաբաթի օրենքը:

❖ Եթե շաբաթ օրը հրդեհվում է տունդ, ապա ջրով կրակը հանգնելը աշխատանք է համարվում, այդ պատճառով թույլատրվում է պոլիէթիլենե տոպրակներով լի ջուրը դնել կրակի կողքը, որը հալվելուց հետո ջուրը ինքնաթերաբար հոսի և կրակը հանգնի, (թե ինչ համբերություն պետք է ցուցաբերի մարդը, երբ տունը կրակի բաժին է դառնում, ես չկարողացա պատկերացնել):

Եկ նման 39 տեսակի արգելող օրենքներ է պա-

րունակում ժամանակակից հրեական շաբաթապահությունը<sup>†</sup>:

Եկ այս փոքրիկ մեջբերումները արվեց, որ ընթերցողը իմանա, թե օրենքի ինչ ահավոր կապանքներից է ազատել մեր Փրկիչ Տերը: Քրիստոնյաների համար Աստծո այս պատվիրանը անշուշտ չի խախտվել, այլ փոխարինվել է կիրակի օրով ու մեզ համար այն Տերունական օր է կոչում, որովհետև այդ օրը մեր Տեր Հիսուս Քրիստոսը մեռեներից հարություն առավ: Այդ օրվա համար մեզ այսպես է խրատում Հովհաննես Երգնկացի վարդապետը.

«Կիրակին Քրիստոսի սուրբ հարության օրն է, և մեր բոլորի հարությունը կիրակի օրը պիտի լինի, երբ Աղամից հետո բոլոր մեռեները հարություն պիտի առնեն: Աստծո դատաստանը ևս պիտի լինի կիրակի օրը, երբ արդարներն ու մեղավորները, իրենց գործերի փոխարեն պիտի ստանան Աստծո արդար դատաստանից»:

Եկ այդ օրը ամեն ճշմարիտ քրիստոնյա գնում է եկեղեցի իր ընտանիքով, մասնակցում սուրբ պատարացին, ըմբուխնում հոգեպարար շարականները և հոգին զվարթացնող երաժշտությունը, այլապես անեծք ու նզորք է դրած սուրբ առաքյալների և հայրապետների կողմից նրանց համար, որոնք կիրակի օրը Ավետարանի ձայնը չեն լսում: Պատկերացնո՞ւմ եք, թե ազգովի ինչ գարշելի ենք Աստծո աչքի առաջ մեր կիրակնօրյա մարդաշատ տանավաճառներով, մասնավանդ, երբ այն համընկնում է Սուրբ Հարությանը՝

† Առավել ժամանական ծանոթանալու համար կարող եք կարդալ սույն հեղինակի «Օք տերունական կամ կիրակի խորհուրդը» գրքույթը:

Զատկին և այլ եկեղեցական տոներին: Ու այս պղծությունը նոր չէ մեր ազգի մեջ տարածվել, որովհետեւ երբ մի քանի տարի առաջ Հարցազրույցի համար հանդիպում ունեցա 103 տարեկան Պողոս վարդապետ Կիլիկիացու հետ, Հարցրեցի նրան հայոց եղեռնի պատճառներից մեկը, քանզի ինքը այդ տարիներին թուրքահայաստանում էր ապրում: Նա մռայլվեց իր խոհերի մեջ ընկնելով և հանկարծ իր տարիքին ոչ յուրահատուկ բռնկումով ասաց. «Կարծում եմ, որ ամենամեծ պատճառը դա Աստծուց մեր ազգի հեռանալն էր: Այն գյուղում, որ մենք էինք բնակվում, եկեղեցի ունեինք ու հայրս այնտեղի քահանան էր, իսկ ես սարկավագը, կիրակի օրվա սուրբ պատարագին այլևս հայերից համարյա ոչ ոք չէր հաճախում, իսկ թուրքերը ներս մտնելով և մեր դատարկ եկեղեցին տեսնելով ծիծաղում ու գլուխները տարուբերելով հեռանում էին, ասելով. «Երեկի հայերի Աստվածը մեռել է...»:

Ու քանի որ մարդը ի ծնե լինելով մեղավոր էությամբ, գործում է կամա թե ակամա, գիտությամբ թե անգիտությամբ բազմաթիվ մեղքեր և ամբողջ շաբաթվա ընթացքում հոգին է աղտոտում ու իր խղճմտանքը բժայնում, այդ պատճառով ինչպես մեր մարմիններն ու հագուստները կարիք ունեն մաքրման և լվացման, այդպես էլ մեր հոգիները առավել ևս կարիք ունեն սրբացման: Դրա համար Հակոբոս առաքյալը մեզ հորդորում է. «Մոտեցե՛ք Աստծուն, և նա կմուտենա ձեզ: Մեղավորնե՛ր, մաքրեցե՛ք ձեր ձեռքերը. երկմիտնե՛ր, ուղղեցեք ձեր սրտերը» (Հակ. Դ. 8): Իսկ կա՞ դրա համար ավելի պատշաճ տեղ, քան եկե-

ղեցին, որ այդպես էլ կոչում են՝ Հրեշտակների բնակրան ու մեղքերի քափարան, որտեղ կարող են աղոթել կամ զղումով խոստովանել քո մեղքերը Տիրոջ և իր քահանայի առջև: Դրա համար, մեր սուրբ հայրերը գրել են խոստովանության հատուկ կարգ, երբ քրիստոնյան գալիս է եկեղեցի, որտեղ կատարվում է այդ կարգը, որի մեջ Սուրբ Հոգու առաջնորդությամբ նշված են այն բոլոր հնարավոր մեղքերը, որոնք կարող է կատարել մարդ արարածը, քանզի գրված է. «Խակ եթե լույսի մեջ ենք քայլում, ինչպես որ ինքն է լույսի մեջ, հաղորդության մեջ ենք լինում միմյանց հետ, և Նրա Որդու՝ Հիսուսի արյունը մաքրում է մեզ ամեն մեղքից: Եթե ասենք՝ «Մենք ոչ մի մեղք չունենք», մենք մեզ ենք խաբում, և ճշմարտություն չկա մեր մեջ: Իսկ եթե խոստովանենք մեր մեղքերը, հավատարիմ է նա և արդար՝ մեր մեղքերը մեզ ներելու և մաքրելու մեզ ամեն անիրավությունից:

Եթե ասենք՝ «Ձենք մեղանչել» սուտ ենք հանում Նրան, և Նրա խոսքը մեր մեջ չէ» (Ա. Հովհ. Ա. 7-10):

Ինչպես ասացինք մեր հայ առաքելական եկեղեցում այժմ առավել գործածական է խոստովանության ընդհանրական ձևը: Կարեռը նա է, որպեսզի մարդը ի սրտ զղա կատարած մեղքերի համար ու ներում խնդրի, և Աստված պատրաստ է որպես սիրող Հայր ներել և թողություն չնորհել բոլոր այդ մեղքերին: Բայց վերը նշված այս կարգը չի հերքում նաև անձնական խոստովանությունը, խոստովանահայր քահանային, որին որ կուզենա ընտրել հավատացյալ անձը, իր սեփական կամքով, քանի որ կան սրբապիղծ մեղքեր, որոնք հատուկ ապաշխարությամբ, աղոթք-

ներով ու աղքատներին առատ ողորմություն բաժանելով են մաքրվում:

Կիրակին մեզ տրված է նաև որպես անջրափեսող մի միջոց, որպեսզի չտարվենք աշխարհի անվերջ ու հոգին մաշեցնող հոգսերով, որը աննկատելիորեն կարող է մեզ Աստծո արքայությունից գրկել ինչպես որ ասաց մեր Տերը. «Զգույշ եղեք ինքներդ ձեզանից, գուցե ձեր սրտերը ծանրանամ զեխությամբ և հարեցողությամբ ու աշխարհիկ հոգսերով. և Հանկարծակի համար ձեր վրա այն օրը. որովհետեւ այդ օրը որոգայթի նման պիտի համար այն ամենքի վրա, որոնք ընակվում են երկրագնդի ամբողջ երեսին: Արթուն կացեք այսուհետեւ, ամեն ժամ աղոթք արեք, որպեսզի կարողանաք զերծ մնալ այն ամենից, որ լինելու է, և արժանի լինեք կանգնելու մարդու Որդու առաջ» (Ղուկ. ԻԱ 34-36):

Իսկ հոգու արթնության ու աղոթքի համար կա՞ ավելի լավ վայր, քան եկեղեցին: Եվ սուրբ Եփրեմ Ասորին այդ առիթով գրել է. «Մի արհամարհիր եկեղեցու արարողությունը որևէ գործի պատճառով, քանզի ինչպես անձրևն է աճեցնում սերմը, այլպես էլ եկեղեցու արարողությունը զորացնում է մարդու հոգին առաքինության համար»:

Եվ այսպես, մարդը Տերունական օրը գնալով եկեղեցի, հնարավորություն է ստանում մաքրվելու իրեն անհանդստացնող մեղքերից, խաղաղվելու և զորանալու հոգով ու սրտով, որպեսզի կարողանա պատերազմել իր մեղավոր ցանկությունների, աշխարհից եկող գայթակղությունների և չարի հնարքների դեմ: Իսկ Հովհաննես Երգնկացի վարդապետը հորդորում է.

«Առավոտից մինչև պատարագի ժամը շուկաներում մի շրջեք, որպեսզի հոգին բազմաթիվ նետեր չընդունի ձեր զգայարանների ճամփով»:

Թե ինչպես պետք է մարդ ծմբարտապես սուրբ պահի շաբաթ օրը, դրա ամենալավ օրինակը նորից մեր Տեր Հիսուսն է, որ մի քանի անդամ այդ օրերին զանազան Հիվանդներ բժշկեց իրենց տանջող ախտերից և ճանապարհ գրեց: Հրեա փարիսեցիները զայրանում էին այդ արարքների պատճառով, քանզի նրանց կարծիքով շաբաթը դրանով պղծըվում էր: Հիսուսը նրանց պատասխանեց. «Կեղծավորներ, ձեզանից յուրաքանչյուրը շաբաթ օրով իր եզր կամ էշը մսուրից չի՝ արձակում և չի տանում ջուր տալու: Իսկ սա Աբրահամի դուստրն էր, որին ստանան ահա տասնութ տարի է, ինչ կապել էր, արժանի չի՝ միթե շաբաթ օրով արձակել նրան կապանքներից» (Ղուկաս ԺԳ. 15-16): Իսկ Տաթևացին այս պատվիրանը մեկնում է այսպես. «Եվ եգին ու էշին ջուր էին տալիս, հորն ընկած անասունին դուրս էին հանում: Ապա, ուրեմն, կիրակի օրը, մեր հոգիները, որոնք ընկղմված են մեղքի խորքերում՝ պետք է գուր հորվի նրանց» (Ամարան հատ. Էջ 18): Իսկ մի այլ տեղ նա ավելացնում է. «Եվ այսպես, կիրակին առավել պատվելի է, քան բոլոր մյուս օրերը. որպես օրերի սկիզբը ըստ ստեղծման, միջին օր, ըստ շարժման, և վերջին օր՝ ըստ դադարման: Այն նաև կրկնակի պատվելի է իր անունով, քանզի կիրակի նշանակում է տեղունական, որովհետև իր մեջ կրում է Տիրոջը» (Զմեռան հատոր, Էջ 669):

Իսկ Հիսուսն ասաց. «Արդ երբ որ մարդու Որդին

գա իր փառքով և բոլոր հրեշտակները իր հետ, այն ժամանակ Նա պիտի նստի իր փառքի գահի վրա, ու Նրա առաջ պիտի հավաքվեն բոլոր ազգերը, և Նա նրանց միմյանցից պիտի զատի, ինչպես մի հովիվ, որ զառում է ոչխարները այծերից: Եվ ոչխարները իր աջին պիտի կանգնեցնի, իսկ այծերին՝ ձախին: Այն ժամանակ Թագավորը պիտի ասի նրանց, որ իր աջն են. «Եկե՛ք, իմ Հոր օրհնյանե՛ր, ժառանգեցե՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայութունը. որովհետև քաղցած էի, և Ինձ ուտելիք տվիք, ծարավ էի, և Ինձ ջուր տվիք՝ խմելու. օտար էի, և Ինձ ձեր մեջ առաք, մերկ էի, և Ինձ հագցրեցիք, հիվանդ էի, և Ինձ տեսնելու եկաք, բանտում էի, և Ինձ այցի եկաք»: Այն ժամանակ արդարները պիտի պատասխանեն նրան ու ասեն. «Տե՛ր ե՞րբ տեսանք քեզ քաղցած ու կերակրեցինք, կամ՝ ծարավ և ջուր տվեցինք. ե՞րբ տեսանք քեզ օտար և մեր մեջ առանք, կամ՝ մերկ և հագցրեցինք. ե՞րբ տեսանք քեզ հիվանդ կամ բանտի մեջ ու եկանք քեզ այցի»: Թագավորը պիտի պատասխանի ու ասի նրանց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, քանի որ Իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ՝ Ինձ համար արեցիք»: Այն ժամանակ Նա պիտի ասի նրանց, որ իր ձախին են. «Անիծյանե՛ր, գնացե՛ք ինձնից հավիտենական կրակը, որ պատրաստված է սատանայի և իր հրեշտակների համար, որովհետև քաղցած էի, և Ինձ ուտելիք չտվիք, ծարավ էի, ու Ինձ ջուր չտվիք, օտար էի, և Ինձ ձեր մեջ չառաք, մերկ էի, և Ինձ չհագցրեցիք, հիվանդ էի ու բանտի մեջ, և Ինձ տեսնելու չեկաք»: Նրանք էլ պիտի պատասխանեն ու ասեն. Տե՛ր, ե՞րբ տեսանք քեզ քաղցած, ծարավ, կամ

օտար, մերկ կամ հիվանդ, կամ բանտում ու Քեզ չծառայեցինք: Այն ժամանակ պիտի պատասխանի նրանց ու ասի. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որովհետեւ այս փոքրերից մեկին այդ չարեցիք, Ինձ համար չարեցիք»: Եվ նրանք պիտի գնան դեպի հավիտենական տանջանք, իսկ արդարները հավիտենական կյանք» (Մատթ. հե 31-46):

Ավետարանից այս ընդարձակ մեջբերումը հանգամանորեն ընթերցողին հրամցվեց, որպեսզի մեկ անգամ ևս համոզվենք, որ Տերունական օրը ոչ թե սեփական ցանկությունները կատարելու համար է տրված, այլ հոգու նորոգության ու նաև բարեգործության, երբ յուրաքանչյուր քրիստոնյայի հնարավորություն ու առիթ է տրվում իմաստությամբ վարվելու շրջապատի կարիքավոր մարդկանց հանդեպ, չէ՞ որ պատվիրան ունենք Տիրոջից. «Սիրեցիք միմյանց, ինչպես որ ես ձեզ սիրեցի», որովհետև դրանից է կախված, թե ինչ խոսք պետք է լսենք դատաստանի օրը, մեր երկնավոր Թագավորից: Քանզի գրված է. «Ինչ չափով որ չափեք, նույն չափով էլ ձեզ է չափվելու», այսինքն սիրեցիք քո նմանին՝ պիտի սիրվես Աստծուց, ներեցի՛ր՝ պիտի ներվես, ողորմեցի՛ր՝ պիտի ողորմություն գտնես, ինչպես որ ասում է Սողոմոն իմաստունը. «Աղքատին ողորմություն անողը Տիրոջը փոխ է տալիս և ըստ նրա տվածի էլ Աստված կհատուցի նրան» (Առակներ ԺԹ. 17):

Կիրակի օրվա սրբության առիթով ուզում եմ մեջ բերել մեր սուրբ հայրերի կանոներից նաև հետևյալը. «Եթե կիրակի օրը մեկը անգիտությամբ իր կնոջը մերձենա, յոթ օր պետք է ապաշխարի, գիտակցաբար

լինելու պարագայում՝ քսան օր, իսկ եթե սովորության է վերածել՝ անծծի ենթարկվի: Նույնպես և եղբ կինը հղի է, պետք չէ նրան մերձենա, մինչև մանուկը ծնվի: Պետք չէ մերձենա կնոջը երբ կինը կանանց ամսայունի մեջ է: Իսկ բեղմնավորվելու պարագայում զանազան հիվանդությունների դուռ է բացում մանուկի համար, այսպես՝ բորոտություն, քոսոտություն, դիվահարություն և այլ գարշելի ու անբժշկելի ցավեր: Հետևաբար նա, որ այս շրջանում մոլեգնելով հարաբերվի, այս չարիքներին պարտական կինի, մանուկներ սպանող է և արժանի մահվան: Եթե կինը ծածկի իրողությունը ամուսնուց, ինքը պարտական կինի այդ մեղքերին» (Հովհաննես Երդնկացի):

Իսկ Տերունական օրվա վերաբերյալ մնում է ավելացնել հետևյալը. ձեզանից շատերն են հիշում իրենց հավատափոր տատիկներին ու մայրերին, որոնք շաբաթ երեկոն իջնելուն պես բոլոր տնային դործերը թողնում էին, մանավանդ լվացք, կար ու կարկատան: Ինչո՞ւ էին այդ անում. որովհետև իրենք բրիստոնյա դաստիրակություն էին ստացել և շատ լավ գիտեին, որ կիրակնամուտ է և արդեն սկսել է Տերունական օրը, քանի որ ըստ եկեղեցական օրենքի օրվա վերջում, արել մայր մտնելուց հետո, սկսվում է հաջորդ օրը և մինչև մյուս մայրամուտը համարվում էր մեկ օր:

Ի՞նչ է, կարծում եք նրանք ավելի քիչ գործ ունեին, քան թե մենք, բայց, ի տարբերություն մեզ, նրանք Աստծո խոսքը երկուղով գործադրել գիտեին, քանզի լսել էին. «Վեց օր քո գործդ գործիր և յոթներորդ օրը համգստացիր» (Ելք հԳ 12):

Ուրեմն յոթներորդ օրը Տիրոջն է: Եթե այդ օրն էլ ենք օգտագործում մեր անձնական, մարմնավոր և կենցաղային կարիքների համար, ապա լավ իմանանաք, որ դրանով Աստծուն ենք կողոպտում:

Եվ վերջապես Աստծուն սիրող քրիստոնյա մարդը կիրակի օրը էլ ո՞ւր կուգենա գնալ, եթե ոչ եկեղեցի, որ մեր հայրերը կոչել են նաև «երկնային հարանարան»: Իսկ Դավիթ արքան, որ թե՛ ինքն էր սիրում Աստծուն և թե՛ սիրված էր Աստծո կողմից, իր սաղմուներից մեկում գրում է. «Ուրախանում էի, երբ ինձ առում էին՝ Տիրոջ տունը գնանք» (Սաղմոս Ճիթ. 1):

Իսկ մեր տգիտությունը այս հարցում իսպառ փարատելու համար, ավելի լավ է լսենք Եսայի մարգարեին, որը մեզ հաղորդում է Արարչի կամքը սուրբ օրվա վերաբերյալ.

«Եթե ոտքդ հետ քաշես և սրբությամբ օրը քո ուղածը չկատարես, զվարճության շաբաթները համարես Աստծուն նվիրված և փառավոր, ոտքդ գուրս չզնես գործի համար ու քո բերանով բարկության ոչ մի խոսք չառես, այն ժամանակ կարող ես ապավինել Տիրոջը ու նա քեզ կառաջնորդի դեպի երկրի բարիքները» (Եսայի ԾՀ 13-14):

Կարդալով այս բոլորը, Տիրոջ սուրբ օրը զգուշությամբ և խորագիտությամբ վարվենք և մեր անձերը անարատությամբ պահենք աշխարհի ապականությունից, որպեսզի սրբության օրհնությունները վայելենք թե՛ այստեղ՝ երկրի վրա, և թե՛ հավիտյաններում:

## ՊԱՏՎԻՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

«Պարվե՛ր ի՞ն հորն ու ի՞ն մորը, որդեսով  
բարի գործու»:

Թող ընթերցողը ուշադրություն դարձնի, որ այս պատվիրանը տասից միակն է, որը իր մեջ նաև խոստում ունի պահած այն կատարողի համար, որովհետև գրված է. «...որպեսզի բարիք գտնես, երկար ապրես», այսինքն բարությունով լի երկար ու երջանիկ կյանք ունենաս: Թե ինչո՞ւ է առանձնահատուկ ուշադրություն դարձվում այս պատվիրանին, մենք կարող ենք հասկանալ, եթե ծնող ենք, իսկ եթե ո՛չ, նայենք մեր ծնողներին: Ո՞րն է նրանց կյանքի իմաստը՝ դեռ օրօրոցից սկսած, գիշեր ցերեկ իրենց զավակներին խնամել, պահպանել, կերակրել, հագցնել, դաստիրակել ու Աստծո և մարդկանց առջև պիտանի և օգտակար էակ դարձնել: Այնքան կարենոր ու անգնահատելի է ծնողների գերը աշխարհում, որ երբեմն նրանց Աստծո փոխանորդներ են անփանում: Ինչպես գրում է Հովհաննես Երգնկացին. «Աստծուց հետո, ծնունդի պատճառն ու միջոցներ են ծնողները, և որպես մարմնավոր աստվածներ են իրենց զավակների համար, որովհետև ծնում են, սնուցում և կյանք պարզեցում»: Հիշենք մեր մանկությունը, երբ դեռ չգիտեինք Աստծո գոյության մասին, արդյո՞ք մեղքի և հանցանքի գեպքում չէինք սպասում մեր ծնողներից արժանի հատուցմանը և շատ անգամ երկյուղով ու վախով, հանդիմանվելով մեր խղճերից գնացել և խոստվանել ենք նրանց առջև մեր արարքները ու

ներում ստանալով, կարծես ծանր բեռ է ընկել մեր սրտերից: Երբ մեծացանք, կամ էլ նրանք այլևս չկան, ո՞ւմ պատմենք մեր հոգսերն ու դառնությունները, իսկ հաճախ նաև մեր մեղքերն ու հանցանքները, որպեսզի միսիթարության և խրատի խոսքեր լսենք: Անշուշտ մեր երկնավոր Հորը, քանզի նա որպես սիրող ծնող սպասում է, ինչպես ավետարանական անառակ որդու հայրն էր սպասում, աչքը կրտսեր որդու ճանապարհին, որ միգուցե կգա, կխոստովանի մեղքերը և հայրական սիրող ու ներող համբույրը կտանա իր ճակատին: Կյանքում ամեն բան կանցնի՝ ունեցվածքն ու հարատությունը, կարողությունն ու առողջությունը, բայց հայրական սիրո այդ ներող համբույրի ջերմությունը, որ մինչև սիրտն է թափանցում՝ երբեք չի անցնի:

Դու ի՞նչ գիտես այն անքուն գիշերների մասին, որ քո հիվանդ ժամանակ, անկողնուդ սնարի մոտ, կապարի նման ծանրացած կոպերով, մաքառելով քնի ու անհուսության գեմ ցամաքել ու մաշվել են քեզ աշխարհ բերող ծնողներդ: Կարո՞ղ ես չափել այն վշտի խորությունը, որ բացել ես ծնողներիդ սրտում քո մեղսալից արարքներով ու անհնագանդ վարքով: Տեսե՞լ ես արդյոք այն աչքերի անհուն թախիծն ու տագնապի ալիքները, որ ալեկոծել են ծնողներիդ գորովալից սրտերը, երբ գու երիտասարդական ցանկություններիդ տրված ուշ գիշերներին ես տուն վերադարձել, և երբ նրանք քեզ նորից տեսել են ողջ ու առողջ, ախրության ու վշտի արցունքները իսկույն փոխվել են ուրախության ու ներողամտության ժպիթի: Իսկ ի՞նչ չափով պիտի չափես օշինդրի պես դառ-

Նահամ այն արցունքների կաթիլները, երբ դու անսիրտ բրտությամբ մի օր լքում ես ծնողներիդ ու հեռանում անվերադարձ:

Կան այլակրոն ազգեր, որոնք անհաղորդ լինելով Աստծո սուրբ պատվիրաններին, դեռևս ողջ, բայց արդեն հիվանդ ու ծերացած իրենց ծնողներին տանից դուքս են Հանում, կամ իրենց ձեռքերով տանում, աղբանոյն են նետում: Քրիստոսի սիրով առաջնորդված մայր Թերեզան տարիներ առաջ Կալկաթայում և Հնդկաստանի այլ քաղաքներում, Հավաքելով աղբանոյներից այդ թշվառ արարածներին, Հոգատարությամբ ինսամել ու կերակրել է նրանց մինչև բնական մահը, դրանով իսկ հիմնելով այժմ աշխարհին հայտնի մայր Թերեզայի միաբանությունը, որոնք մեր երկրաշրժի ժամանակ Սպիտակի որբերին նույնակե գորավիդ եղան:

Նաև մահվան պես չարագույժ է արարքդ, երբ քո իսկ ձեռքերով, քեզ իր կրծքով սնած, իր բազուկների վրա օրորած, քեզ լույս աշխարհ բերած, բայց արդեն պառաված ու սմբած, մորդ կամ հորդ թերից բռնած, տանում ես ծերանոց: Իսկ հետո էլ ալեկոնդված սիրադու խիղճդ ծառս ելած, մեկ-մեկ քեզ այցելության է տանում նրանց մոտ, մի քանի միրդ, մի քանի կտոր թիսվածք պայուսակիդ անկյունում պահած: Լա՛վ իմացիր, ով մարդ, դու ողջ-ողջ գերեզման դրված ծնողներիդ շիրիմին ես այցելում, իսկ քո տարած կերակուրը սգո հաց է նրանց վշտից ցամաքած հոգիների համար:

Ինչո՞ւ այդ քայլին գնացիր՝ նեղվա՞ծք էր բնակարանում, և մի մահճի տեղ Էլ չկար նրանց համար,

կամ ուտելու մի կտոր հաց. ինչ էլ ասես, արդարանայու տեղ չունես: Ու լավ իմացիր որ տանդ օրհնությունը գնացել է, և դժոխվի կրակ է բռնկվել այնտեղ ու լափելու է քեզ ու քո ունեցվածքդ: Կնո՞ջդ ես լսել, նրա գիշերային հեշտալից կրքով հագեցած, նրա հողանի թերերով պարանոցդ գրկած: Բայց այս էլ իմացիր, որ կդա մի օր և այդ թերերը մի-մի գալարուն օձի կվերածվեն, պարանոցդ կրկեն ու քեզ չնչահեղձ կանեն: Իսկ ականջներիդ նրա քնքույց բառեր շնչած շրթունքները, այս անգամ բացվելու են որպես թույնի սրվակ, կյանքդ մահառիթ օրերի շարանի վերածելու համար: Իսկ այն երեխաներդ, որոնց աչքերի առաջ այդ ամենը արեցիր, նույնը քեզ են անելու, որովհետեւ ինչ որ ցանում ես, այդ էլ հնձելու ես. այս բանը հաստատ իմացի՛ր:

Ինչի՞ համար էլ որ դա արեցիր, քավության պատասխան չունես: Թո՞ղ, ամեն պատճառ, ելի՞ր, գնա՞ և նորից ծնողիդ տուն բեր ու մի՛ վախեցիր, Աստված քեզ զորավիդ կլինի, քանզի գու նրա կամքն ես կատարում, որպեսզի կյանքիդ բարի օրերի շարանդ չկտրվի, վերածվելով դառնաշունչ օրերի շղթայի, երբ մահը ավելի գերադասելի է դառնում, քան ապրած օրերը:

Հիշո՞ւմ եք Ավետիք հսահակյանի այն հայտնի պատմվածքը, երբ տղան իր չարաշունչ կնոջ հորդորներին տրված, հարազատ ու արդեն անուժ և ծերացած մորը պարկի մեջ դնելով, տանում մի մութ անտառի խորքերը կորցնելու, ու ծառի տակ դնելով ուղում է իսկույն վերադառնալ, հանկարծ պարկի միջից մոր ծերունական դողդոջուն ու գորովագութ

ձայնն է լսում. «Տղամ՝ պարկը հետդ վերցրու, տանը պետք կդա»: Ո՞վ կարող է նման սիրազեղ ներութամտություն կրել իր մեջ. միայն Արարիչն Աստված, որ այդ մոր սրտի մեջ իր Հայրական սիրուց է դրել:

Ու որպեսզի իմանանք թե Տերը, ինչ կարեռություն է տալիս այս պատվիրանին, ընթերցենք Աստվածաշնչային մի քանի խրատներ, որպեսզի իմաստությամբ ու երկյուղով այն գործադրենք.

«Այն աչքը, որ արհամարում է հորը

և անարգում է մոր ծերությունը,

ձորերի ագռավները պիտի հանեն

և արծիվների ձագերը պիտի հոշոտեն այն»:

(Առակներ 1, 17)

«Անիծյալ լինի նա, ով իր հոր կամ մոր դեմ հայ-հոյություն կանի»:

(Բ Օրին. ԻԵ 16)

«Ով իր հորը կամ իր մորը անիծի, անշուշտ պետք է մեռցվի. նա իր հայրը կամ մայրը անիծեց, նրա արյունը իր գլխին լինի»:

(Ղետական Ի 9)

«Հոր օրգնությունը ամրացնում է որդիների տները, իսկ մոր անեծքը խարիսում է հիմքերը»:

(Միրաք Գ 11)

Եվ որպեսզի գրվածը լոկ մերկախոսություն չլինի, մեջ բերեմ մի դեպք, որը տեղի է ունեցել քրիստոնյա ընտանիքում.

«Մի անգամ մի եպիսկոպոսի մոտ, պիղծ ոդուց տանջվող մի պատանու բերեցին: Միշտ մարդասեր եպիսկոպոսը, առանց խնդրանքների բժշկում էր բոլորին, բայց այս անգամ դժկամություն ցուցաբերեց:

- 46 -

Ծնողները լացակումած աղաչում էին Աստծո մարդուն, որ խնդա իրենց որդուն և ազատի այդ պիղծ ոգուց: Ու ասաց Աստծո մարդը. «Զեր որդին անարժան է բժշկության, այդ տանջող ոգին տրված է նրան որովհետև նա հայրասպան է»: Ծնողները լսելով սարսափեցին: Իսկ եպիսկոպոսը հարցրեց. «Զեր որդին հաճա՞խ է ձեզ անպատվում»: Այդ ճիշտ է - ասաց հայրը: Եվ դուք մի անգամ այդ արարքից խիստ դառնացած աղոթել էիք, որ Աստված պատժի նրան, -շարունակեց եպիսկոպոսը: Մեղք ենք գործել Աստծո առաջ, -հառաչելով պատասխանեցին ծնողները: Ոչ թող ձեր տղան տանջվի, որպես արժանի պատիժ, -ասաց Աստծո մարդը: Բայց դժբախտ ծնողները խղճահարվելով իրենց որդու համար, չին դադարում աղաչել, որ նա Աստծուն խնդրի և բժշկի իրենց որդուն: Ու միայն պատանու ծնողների համար, եպիսկոպոսը օրհնեց և Աստծուն աղոթելով բժշկեց անառակ զավակին»:

Ահա այսչափ կարեռություն ունի ծնողը Աստծո մոտ և նրա աղոթքը իր զավակների համար լսելի ու ընդունելի է մեր Տիրոջ մոտ: Բայց ինչպես նաև նկատեցիք, դառնացած ծնողների աղաղակները մինչև երկինք են հասնում ու Աստծո բարկությունը իջեցնում անառակ որդիների վրա: Զդառնացնենք սիրելի հայորդիներ մեր ծնողներին, այլ հնազանդությամբ ու հոգատարությամբ վարվենք նրանց հետ, ինչպես որ հորդորում է Գրիգոր Տաթևացին».

«Բազում պատճառներով ծնողները պատվի են արժանի: Նախ, որ Աստծո պատկերն են, ինչպես արդեն ասվեց, և խորհրդաբար Աստծուն տրվելիք

- 47 -

**պատվին են արժանի՝ որպես ծնող:** Երկրորդ, քանի որ գործիք են Աստծո պատկերը մեզ վրա [ձեւավորելու] համար, քանի որ առանց ծնողների Աստված ոչ հոգի է ստեղծում, և ոչ էլ մարդ կազմավորում որովայնի մեջ» (Ամարան Հատող, էջ 18):

Որպես օրինակ մեզ պատմում են, որ նույնիսկ արագիլների ծնողները երբ ծերանում են, ձագերը նրանց թերերի տակ մտնելով՝ տեղից տեղ են տանում ու կերակրում են իրենց կտուցներից, ճիշտ այնպես ինչպես ծնողներն են արել իրենց:

Աստվածաշունչը միաժամանակ զգուշացնում է, որ աշխարհի վերջում, Քրիստոսի երկրորդ գալուստից առաջ, մարդիկ խոտորվելու են ծշմարտության ճանապարհից և անօրենությունը սիրելով պիտի արհամարեն Տիրոջ խոսքն ու խրատները, և արդյունքում կլինի... «Ու եղայրը եղբորը կմատնի և հայրը՝ Ռդուն և որդիները իրենց ծնողների վրա պետք է ելնեն ու մեռցնեն նրանց» (Մարկ. ԺԳ 12), և դարձալ. «Այս բանը իմացիր, որ վերջին օրերին չար ժամանակներ պիտի գան, երբ մարդիկ պիտի լինեն անձնասեր, փողասեր, հպարտ, ամբարտավան, հայհոյող, ծնողներին անհնապանդ, անշնորհակալ, անմաքուր, անհաշտ, անգութ, բանսարկու, անժուժկալ, դաժմանաբարո, անբարեսեր, մատնիչ, հանդունգն, մեծամիտ, ավելի շատ հեշտասեր քան աստվածասեր, մարդիկ, որ ունեն աստվածապաշտության կերպարներ, սակայն ուրացել են Նրա զորությունը» (Բ Տիմոթեոս Գ 1-5):

Այս պատվիրանի կատարման համար, մեր Տեր Հիսուս Քրիստոսը հոգատարության իր անձնական օրինակը ցույց տվեց, երբ նա արդեն խաչի վրա գամ-

փած էր, տանջանքների ու ցավի մեջ տառապելիս՝ իր սիրելի աշակերտին՝ Հովհաննեսին ցույց տալով՝ ասաց իր մորը . «Ահա քո որդին», հետո աշակերտին. «Ահա՝ քո մայրը: Եվ այդ աշակերտը նրան իր մոտ առավ!» (Հովհ. ԺԹ 26-27):

Իսկ ամուսնացյալ կանանց հիշեցնենք, որ նրանք ըստ Աստծո խոսքի, թողնելով հայրական տունը, իր ամուսնու հետ դառնում է մեկ մարմին ու այսուհետև սկեսուրն ու սկեսրայրը համարվում են նաև իր ծնողները, ինչպես և հնում էր, երբ տուն բերած հարսը իր ամուսնու ծնողներին կոչել է հայր և մայր, ու որպես խոնարհ գուստը շահել է թե Աստծո օրհնությունները և թե ծնողների գոհությունը: Նման օրինակ հանդիսացավ Աստվածաշնչային հերոսուհիներից մեկը՝ Հոռովթը, որը նույնիսկ իր ամուսնու մահից հետո էլ չլքեց իր սկեսուրին: Տերն էլ նրա հավատարմությանը նայելով թույլ տվեց, որ Հոռովթը գտնվի Հիսուսի սերնդաբանության շառավիղի մեջ:

Եվ որպես վերջաբան, մի փոքրիկ պատմություն ևս մեջբերենք հունական հին ավանդությունից. «Օլիմպիական խաղերին շատ հույներ էին ներկա և բոլորը զբաղեցրել էին նստատեղերը: Ահա մի ծերունի եկավ և շատ այս ու այն կողմ ընկավ ջահելների մեջ ու տեղ չգտավ: Եվ երբ հասավ այն տեղերը, որոնք զբաղեցրել էին սպարտացի երիտասարդները, շատերը իսկույն վեր կացան և հարգալից զիջեցին ծերունուն: Այդ պատճառով հին առածը ասում է. «Աթենացիք զիտեն որն է բարին, իսկ սպարտացիք կատարում են այն»:

Այս խոսքը մեզ էլ է վերաբերում, առաջին քրիս-

տոնյա ազգի հայորդիներիս, որ միայն անունով ու դաշտանությունով չլինենք քրիստոնյա, այլ նաև կյանքով և գործով:

Մի վերջին խորհուրդ ևս. եթե չկան այլևս ծնողներդ և դուք քո արարքներով վշտացրել ես նրանց հոգիները, այժմ էլ դեռ ուչ չէ, որ գնաս և խոստովանես քահանայի մոտ քո հանցանքները ու ինդըբես, որ նա ծնողների հոգիների համար հոգեհանգստայան պատարագ մատուցի, որպեսզի նրանք էլ երկնքում իմանան քո զղման մասին և հոգիներին թեթևություն ու ուրախություն լինի: Ապա գնա այցելության նրանց շիրիմներին, լացով ու զղումով ապաշխարիք արարքներիդ համար ու նրանց անունով աղքատնե-



բին առաստ ողոր-  
մություն բա-  
ժանիք, մանա-  
վանդ մեռելոց՝ այ-  
սինքն նընջեցյալ-  
ների հիշատակի  
օրը։ Այդ ամենը  
կատարելուց հե-  
տո, դու հոգու  
խաղաղություն  
կունենաս և քո  
խաթարված կյան-  
քը հետպհետե  
կուզզվի Աստծո  
տված պատվի-  
ր ա ն ն ե ր ի  
համաձայն։

## ՊԱՏՎԱՐԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ

Մարդը Աստծոն պատկերով ու նմանությամբ է ստեղծված: Այդպես է ցանկացել Արարիչը և ինքն էլ հրամայել. «Մի՛ սպանիր»: Մի՛ սպանիր, ո՞ւմ. մարդուն, որ իր Տիրոջ պատկերն ու նմանությունն է կրում, քանզի գրված է.

«Ով թափի մարդու արյունը, նրա արյան փոխարեն  
թող թափվի իր արյունը, որովհետև Աստված Իր  
պատկերով ստեղծեաց մարդը» (Ծննդոց թ. 6):

Բայց նույն ինքը՝ Արարիչ Տերը Մովսես մարդարե-  
ի միջոցով ասել է.

«Նրան մի՞ ինսայեք: Կյամքի դիմաց՝ կյանք, աչքի դիմաց՝ աչք, ատամի դիմաց՝ ատամ, ձեռքի դիմաց՝ ձեռք, ոտքի դիմաց՝ ոտք» (Երկրորդ Օրենք ԺԹ 21), և դարձյալ. «Արդ, գնա՛ և կոտորի՛ր ամաղեկացիներին ու Հարիմացիներին և ոչնչացրո՛ւ այն ամենը, ինչ նրանց է պատկանում: Նրանցից ոչ ոք չպետք է փրկվի: Կոտորես նրանց ու կոչնչացնես բոլորին՝ տղամարդ լինի թե՛ կին, երեխա լինի թե՛ կաթնակեր մանուկ, արջառ ու ոչխար, ուխտ ու ալիանակ»:

Ինչ է, օրենսդիրը հակասո՞ւմ է իր իսկ պատվիրանի՞ն: Առաջին հայացքից այդպես է թվում, բայց երբ խորը քննենք, ապա կհասկանանք դրանց բուն պատճառը:

Ինչպես ասացինք մարդ արարածը, կրում է իր Արարչի պատկերն ու նմանությունը: Ու քանի գեռ մարդը հնագանդ է իր Տիրոջն և չի մերժում Աստծո

պատվիրանները և իր խղճի ու Տիրոջ դեմ մեղք չի գործում, ապա նա վայելում է Աստծո օրհնությունն ու բարությունը: Բայց երբ նա դրժելով օրենքներն ու պատվիրանները և իր արարքներով ոտնատակ է տալիս սրբությունն ու արդարությունը, և չնայած բազմաթիվ գգուշացումների, նա Տիրոջ դեմ ապստամբ դիրք է բռնում, դրանով իսկ նա հետզհետե կրցնում է իր Արարչային պատվերն ու նմանությունը: Եվ ավերվում է ամեն աստվածայինը մարդու մեջ ու նա սատանային է նմանվում իր գործերով, և ինքը իր կամքով իրեն մահվան է դատապարտում, ու Աստծո պատիքը դառնում է անխուսափելի: Այդպիսի մեկը գարձավ առաջին ծնված մարդը՝ Կայենը, որը նախանձով ու անհնազանդությամբ պատվիրանացանց լինելով սպանեց իր եղբորը և բռնեց անեծքի ճանապարհը:

Աստված մարդուն պատվիրեց՝ «Մի՛ սպանիր», բայց մարդու ձեռքով էլ Տերը պատժում է օրինազանցներին, որի ամենահայտնի օրինակն է Դավիթ թագավորը: Նա չնայած լինելով Աստծո սրտի ուղած մարդը, արյան գետեր էր թափել Նրա հրամանով, բայց շարունակում էր մնալ Տիրոջ սիրելին ու ընտրյալը, մինչեւ այն պահը երբ իր մեղավոր ցանկությունը բավարարելու համար, ուրիշի ձեռքով սպանել տվեց քաջ զինվոր Ուրիշային՝ իր սիրուհու օրինական ամուսնուն:

Չնայած Դավիթը սթափվելով իր գործած մեղքից զղաց Տիրոջ առջև, բայց այնուհանդերձ լսեց Աստծո հետեյալ վճիռը. «Արդ սուրը հավիտյան թող չենուան քո տնից փոխարեն այն բանի, որ ինձ անարգեցիր

և քետացի Ուրիայի կնոջը կնություն առար» (Բ Թագ. ԺԲ 10):

Աստծո ընտիր ծառան՝ Եղիա մարգարեն նույնապես հարյուրավոր քուրմեր սպանեց Տիրոջ հրամանով, բայց դա չխանգարեց նրան երկնային կառքերով վեր համբարձվելու:

Ինչպես տեսնում ենք Տիրոջ դատաստանները անաշառ ու արդար են և միայն ինքը դիտի, թե ով է մահվան արժանի մեղք գործել և ինքն էլ կարող է հրամայել կյանքից զրկել այդպիսինին: Իսկ քանի որ մարդու դատաստանները աչքի երևացածով է լինում և մեծ մասամբ անարդարությամբ է կատարվում, այդ պատճառով մարդուն հրամայված է. «Մի՛ սպանիր»:

Որպեսպի չընկնենք ծայրահեղության մեջ, քըն-նենք նաև հետեյալը. պատերազմելը և այդ ժամանակ մարդ սպանելը վերաբերվո՞ւմ է արդյոք այս պատվի-րանին, քանի որ մեր քրիստոնյա նախնիները իրենց ողջ պատմության ընթացքում միշտ կըսվել են ու անշուշտ սպանել, նույնիսկ շատ պատերազմիկ զին-փորներ արժանացել են սուրբի կոչմանը: Ուրեմն որտե՞ղ է այն ոսկե միջինը, որ զանազանում է սուր-բը՝ մարդասպանից: Այս մասին արժե մանրամասն քննել, որովհետեւ ժամանակակից քրիստոնյա կոչվող աղանդավորները չհասկանալով Աստծո խոսքի հոգեսոր էությունը, մարմնավոր իմաստությամբ առաջնորդվելով օրինազանց են դառնում, թե՛ իրենց պետության դեմ, և թե՛ Աստծո, որը պատվիրել է չնազանդ լինել իշխանավորներին և թագավորներին:

Երբ Ավարայրի դաշտ էին իջնում մեր սուրբ նախնիները, նրանք Քրիստոսի զինվորներն էին ու

գնում էին մեռնելու իրենց Տիրոջ համար՝ «Վասն հայրենյաց, վասն հավատի»։ Նրանք չգնացին սպանելու, այլ դիմականելու անօրենության պղծությանը, որ ուզում էր տիրել մեր լույս հավատի վրա։ Քաջ Վարդանը յուրայինների հետ ելան մեռցնելով մեռնելու, որպեսզի հավատքով ապրեցնեն ազգն հայոց։ Եվ ահա ապրում ենք, որովհետև նրանք սպանելով սպանվեցին։ Այդ պատերազմին մասնակցեցին նաև Աստծո հոգեոր ծառաները, Ղեռնդ երեցի առաջնորդությամբ, որը թշնամու դեմ խաչով ու սրով էր դուրս եկել։ Այն 103 տարեկան Պողոս վարդապետը երբ առաջինը բոլոր հոգեորականներից բարձրացավ Ազատության հրապարակի բեմահարթակ, բազմահազար մարդկանց հորդորեց, ամելով։ «Աստված ասել է թշնամիդ սոված է՝ հաց տուր, ծարավ է՝ ջուր տուր, բայց եթե այդ բոլորից հետո գալիս է ազգի սրբությունները պղծելու, քեզ ու ընտանիքդ ոչնչացնելու, դու նրան որպես արյունաբրու գագան դիմավորի, ու համարձակաբար սպանիր նրան, քանզի Աստծո կամքին հակառակ է եկել»։

Գոյություն ունի մի արտահայտություն՝ «ապրելու իրավունք», թե մարդու, թե ազգի համար։ Ով կփորձի զրկել մարդուն այդ իրավունքից, որ Աստված է չնորհել, ինքը պետք է զրկվի ապրելու իրավունքից, քանի որ գրված է։ «Սուր բարձրացնողը սրով կընկնի»։

Երբ Հովհաննես Մկրտչին մոտեցան զինվորները և հարցորեցին. «Իսկ մենք ի՞նչ անենք», նա պատասխանեց. «Ոչ մեկին մի հարստահարեք և մարդու վրա զրապարտություն մի արեք և ձեր թոշակով բավարար-

վեք» (Ղուկ. Գ 14): Նա չասաց զինվորներին, թե զենքերը մի կողմ նետեք և ուրիշ գործով զբաղվեք, այլ քանի որ կանչված եք ծառայության, ապա այն կատարեք արդարությամբ։

Մեր երանելի կաթողիկոս Ներսես Շնորհալին իր «Թուղթ Ընդհանրականում» նույնպես գրում է զինվորներին. «Զինվորությունը թող պատճառ չլինի, որ արհամարեք Աստծո պատվիրանները ...ու անմեղ արյան հեղումը մեղք չհամարեք, քանզի բացի ընդհանուր պատերազմի մեջ գործած սպանություններից, որոնք թագավորների հրամանով են լինում, ձեր բոլոր գործածների համար Աստված ծանր և անաշառ դատաստանով հաշիվ պիտի պահանջի ձեզանից»։

Իսկ Միսիթար Գոշի դատաստանագիրքը հստակեցնում է. «Պատերազմում սպանությունը մեղք չի համարվում։ Բայց որպեսզի ձեռքերդ լվաս այդ արյունից, սպանողներին օգտակար է երեք տարի հեռու մնալ Սուրբ Հաղորդությունից» (Կանոն 92):

Օգտվելով հնարավորությունից ուզում եմ հիշեցնել մի քանի մոլորված հայորդիների, որոնք «Մի սպանիր» պատվիրանը տգիտորեն ուզում են տարածել նաև կենդանիների վրա և համարում են մեղսագործություն կերակուրի համար ընտանի կենդանիներին մորթելը, իսկ կրիչնայականները՝ նույնիսկ չնչին ճանճի կամ կրծող առնեաների ու մկների ոչնչացումը։ Այս առիթով հիշեցի, թե ինչպես իմ ծանոթներից մեկը մի գիշեր մնացել է իր ընկերոջ տանը, որը կրիչնայական խմբից էր։ Ու երբ կեսգիշերին արթնանալով գնում է խոհանոց ջուր խմելու, լույսը

վառելուց տեսնում է հարյուր-ավոր սկ տարականներ են վիտում այնտեղ։ Նա էլ հողաթափը հանելով ընկ-նում է սրանց հետևից ու կարողանում շատերին սատկացնել, ու իրենից գոհ գնում է քնելու։ Առա-վոյան ծեզին ընկերը արթնանում է, որ իր մանթրա-ները կատարի (այսինքն կրիչնաների աղոթքները), ու տեսնելով խոհանոցում այս ու այն կողմ թափված, սատկած տարականներին, մի վայրենի ճիչ է արձա-կում, կարծես իր երեխաններին մորթված տեսներ ու կատաղած հարձակվում է ընկերոջ վրա ու քիչ էր մնացել խեղեղը նրան այդ «անմարդկային» արարքի համար, որովհետև նրանց համար նույնիսկ ճանճն ու տարական սպանելը մարդասպանությանը համազոր արարքներ են։ Ու հիմա եթե նման մողոյալներին կրավարարի Աստվածաշնչային ճշմարտությունը, սպա ահա այն. ջրհեղեղից հետո Աստված նոյին պատվիրեց. «Ամեն մի կենդանի գեռուն թող կերակուր լինի ձեզ, ինչպես խոտն ու բամջարն եմ տվել։ Կենսատու արյուն պարունակող միս չուտեք» (Ծննդ. թ 3-4): Այսինքն՝ միս կեր, բայց ոչ իր արյունով, իսկ գեռունների ու զանազան վնասատուների գեմ մարդք պարտավոր է ոչնչացնելով պայքարել, քանի որ դրանց առատությունը վտանգ են մարդկային կյանքին, որը ամենաթանկն է Աստծո համար։

Այժմ անցնենք առաջ և քննենք, թե կարելի՞ է արդյոք մեղսագործ ու հանցագործ մարդուն սպանել և Աստծո առաջ անպարտ մնալ։ Ամեն ազգ ու պե-տություն ունի իր կեցության օրենքները, որնք պա-հանջում են իր քաղաքացուց հնազանդություն և օրինականության պահպանություն, ինչպես և գրված

է Սուրբ Գրքում. «Ամեն մարդ, որ իշխանության տակ է, թող հապատակի նրան. քանզի չկա իշխանություն, որ Աստծուց չլինի. և եղած իշխանությունները Աստծուց են կարգված։ Հետևաբար, ով հակառակվում է իշխա-նությանը, Աստծու հրամանին է հակառակում. և նրանք, որ հակառակում են, իրենց դատաստանն են ընդունում. քանի որ իշխանակորները վախ չեն ազդում բարի գործերի համար, այլ՝ չար գործերի։ Ուզո՞ւմ ես չվախենալ իշխանությունից. բարի՞ն գոր-ծիր և նրանից գովասամք կըստանաս, որովհետև նա Աստծու պաշտոնյա է քեզ՝ բարի գործերի համար. իսկ եթե չար գործես, վախեցի՛ր. քանի որ սուրբ մեջքին իզուր չէ կապված։ Աստծու սպասավոր է նա, վրեժինդիր՝ բարկության համար, նրա դեմ, որ չարն է գործում» (Հռոմ. ԺԳ 1-4):

Տիրոջ խոսքը այս հանգամանքում էլ է թույլ տա-լիս մահվան արժանի գործեր կատարողին դատել տվ-յալ պետության օրենքով և սրով պատժել, այսինքն սպանել ու Արարչի առջև անպարտ մնալ։ Իսկ ժամա-նակակից հումանիստական կեղծ գաղափարները, որոնք արգելում են մարդկանց մահապատիժը, փո-խարինելով այն ցմահ բանտարկության, որը ընդամե-նը խանձված խղճմանքի ժամանակավոր բավարա-րում է, որովհետև հենց իրենք՝ մահապարտները, հո-ժար են արագ մահվան, քան ցմահ տանջանքների, որովհետև նրանք այդպես էլ Աստծո և մարդկանց առջև չեն ուզում զըզջալ իրենց կատարած զազրելի արարքների համար։

Իսկ մեր Տեր Հիսուս Քրիստոսը, երբ իր սիրո օրենքը հիմնեց, մարդուն տվեց հոգեոր ամենաբարձր

արժանիքներ, ասելով. «Լսել եք, թե ինչ ասվեց նախնիներին. «Մի՛ սպանիր», որովհետեւ, ով որ սպանի, ենթակա կլինի դատաստանի: Իսկ ես ձեզ ասում եմ, թե ամեն մարդ, որ զուր տեղը բարկանում է իր եղբոր վրա, ենթակա կլինի դատաստանի, և ով որ իր եղբորն ասի՝ Հիմար, ենթակա կլինի ասյանի, և ով որ իր եղբորն ասի՝ ապուշ, ենթակա կլինի գեհնի կրակն» (Մատթ. Ե 21-23):

Հին ազգերի մեջ կա մի չար սովորություն, որ հարազատի արյան վրեմք պիտի ամեն գնով առնել, նույնիսկ պատժապարտին սպանելով: Ու մենք գիտենք, թե քանի՛քանի անմեղ զոհեր ու դարավոր թշնամություններ են առաջել այդ հիմար սովորության պատճառով: Մինչդեռ Աստծո ծառան ասում է. «Զարի փոխարձն չարությամբ մի՛ հատուցեք, ինչ չափով հնարավոր է ձեզ համար, բոլոր մարդկանց հետ խաղաղություն պահեցեք, ինքներդ վրեժինդիր մի՛ եղեք, սիրելիներ, այլ թույլ տվեք Աստծո բարկությունը կատարի այն, որովհետեւ գրված է. «Իմն է վրեժինդրությունը, և ես կհատուցեմ», - ասում է Տերը» (Հոռմ. ԺԱ. 17-19):

Սուրբ Հայրերը մեզ իրասում են, որ մարդը կարող է սպանություն կատարել ոչ միայն գործով, այլև մտքով ու խոսքով: Այդ պատճառով ավելորդ չէ զգուշացնել, որ «Մի՛ սպանիր» պատիրանը գործում է նաև բարոյական իմաստով, որովհետեւ մարդը իրենից ներկայացնում է այնքան քննքուշ և փիրուն էություն, որ կարող է մահու չափ վիրավորվել նաև ...խոսքով: Բայց, ավա՛զ, շատերը կոպտորեն խախտում են այդ նուրբ ներքնաշխարհը և մահաբեր ու թունոտ խոսքերով վիրավորում են նույնիսկ իրենց

ամենասիրելիներին՝ լինի ծնող, կին, եղբայր կամ քույր, և ինչքան մոտ է հարազատը, այնքան սուր է խոսքի խոցող զորությունը: Զգույշ լինենք իրար հանդեպ, մասնավանդ այս չար ժամանակներում, և սիրով ու համբերությամբ, ներողամտությամբ ու երկայնամտությամբ վարվենք միմյանց հետ և հիշենք Սողոմոն իմաստունի հետեւյալ խրատը. «Մարդիկ կան, որ իրենց խոսքով խոցում են թրի պես, բայց իմաստուների լեզուները բուժում են» (Առակներ ԺԲ. 18):

Իսկ երբ ատելությունից դրդված մտքումդ գիմացինիդ մահն ու կորուստն ես ցանկանում, դա հավասարագոր սպանության մեղքին, քանի որ Աստված մեզ պիտի դատի ըստ մեր սրտերի խորհուրդների:

Հատ Միթիթար Գոյի 119-րդ կանոնի, սպանություն է համարվում նաև այն, երբ բժիշկը անհոգության, կամ վարձ չստանալու պատճառով մերժել է հիվանդին և դրա պատճառով նա մեռել է:

Եվ վերջապես, եթե մեկը իրեն համարում է քրիստոնյա, ապա այս պատվիրանը թող զգուշությամբ գործադրի, նաև իր նկատմամբ, որովհետեւ Տերը խիստ է իր պատկերով և նմանությամբ ստեղծված մարդու հանդեպ: Երբ մեկը ուզենա ձեռք բարձրացնել ինքը իր վրա և ինքնասպանությամբ վերջ դնի իր իսկ կյանքին, ապա նույնպես խախտած կլինի Աստծո օրենքը, որ հրամայել է՝ «Մի՛ սպանիր» նաև քեզ նույնպես: Մեր առաքելական եկեղեցին այդպիսիների վրա չի կատարում թաղման կարգը, որպես անիծված և գրանց թաղում են ընդհանուր գերեզմանից դուրս և բերանքսիվայր, այսինքն, դեմքով ոչ թե երկինք, այլ՝ դեպի դժոխք:

Շատերին կարող է տարօրինակ թվալ, բայց Աստծո խոսքի տեսանկյունով մարդասպան են նաև նրանք, որոնք ինչ-ինչ պատճառներով ու արհեստական հնարքներով արգելել են դեռ նոր սաղմնավորված երեխաների ծնունդը։ Նմանները կոչվում են ծնողներ - մարդասպաններ։

Այդ է Հաստատում նաև Դավթի հետևյալ սաղմուր.

Դու ստեղծեցիր իմ երիկամունքները  
Ու մորս որովայնում Դու ծածկեցիր ինձ,  
Գոհանում եմ Քեզանից, որ ահավոր  
Ու զարմանալի կերպով ստեղծվեցի...  
Քո աչքերը իմ ամկատար կազմվածքը տեսան,  
Ու բոլոր անդամներս Քո Գրքի մեջ գրված էին,  
Որոնք ժամանակին պիտի կազմվեին,  
Երբ նրանցից դեռ ոչ մեկը չկար»։

(Սաղմուր ձև. 13.16)

Այսինքն ըստ այս սաղմոսի Արարիչ Տերը գեռ մեր անկատար ու սաղմնային վիճակում մեզ որպես արդեն մարդ է տեսնում։ Իսկ արդեն սասցինք, որ մարդասպանությունը մեղսագործություն ու պատվերանազանցություն է։

Իհարկե շատերը կասեն, որ որդենության հարցում բազում անլուծելի խոչընդոտներ կան, որոնք կապված են կարիքի, չքավորության, մայրելի տկարության, երեխաների խեղանդամության և այլն։ Այս այդպես է, բայց դա նորից Աստծուց ու նրա պատվիրաններից հեռու լինելու հետևանքներն են, քանզի Տերը իրենների համար խոստում ունի. «Հոգ մի արեք ու ասեք՝ ինչ պիտի ուտենք կամ ինչ պիտի խմենք կամ

ինչ պիտի հագնենք, որովհետև հեթանոսներն են այդ բոլոր որոնում, քանի որ ձեր երկնավոր Հայրը գիտե, թե այդ բոլոր ձեզ պետք է։ Դուք նախ ինդրեցեք Աստծո արքայությունը ու նրա արդարությունը, մնացած Աստված ավելիով կտա» (Մատթ. Զ 31-34)։

Ու դժբախտաբար հիմա աշխարհի ամենամեծ եղեննը կատարվում է կանանց որովայնում, ծնողների երկուստեք ու լուռ համաձայնությամբ և բժիշկ կոչեցյալ մարդասպանների աջակցությամբ։ (Մի այդպիսի բժիշկ կոչեցյալի ես անձամբ եմ ծանոթ, որը այնքան չձնված մանուկների սպանության պատճառ դարձավ, որ այժմ իր երկու զավակները այնպիսի ատելություն ունեն նրա նկատմամբ, որ նա ստիպված նրանցից փախուստ տված օտարության մեջ է ապրում)։

Որպեսզի տպետ չլինի մեր քրիստոնյա ազգը, այդ առթիվ մեր վարդապետները ասում են, որ մանուկը դեռ որովայնում կյանքի կոչվելով արդեն հոգի է ստանում։ Իսկ բժիշկ-հոգեբանները վերջին ժամանակներում եկել են այն եղբակացության, որ մոլագար-մանյակները, այսինքն ամենազագրագործ մարդասպանները, դրանք ժամանակին ընկեցիկներ են եղել, այսինքն ծնվելուց հետո ծնողներից մերժված, անցանկալի երեխաններ, որոնցից ամեն գնով ցանկացել են ազատվել, իսկ եթե չի հաջողվել, ապա ծնելուց հետո՝ լքել են։ Եվ նրանք էլ մանկատներում մեծանալով, հասակ առնելով, ամեն գնով վրիժառու են դարձել իրենց հանդեպ տածած մարդկության դաժանությունների համար։ Իսկ մեր քրիստոնյա նախնիները արհեստականորեն վիժված երեխաներին ան-

վանել են «անցուցք», իսկ նրա ծնողներին դրել են մարդասպանության համար ապաշխարողների շարքում: Եվ եկեղեցու սղբեկի տեսիլքների համաձայն, երբ նրանք հոգով դժոխվ են տարվել, ապա իմացել են, որ այդ դժբախտ ծնողները տեսել են իրենց իսկ սպանած երեխաներին ու հոգով ճանաչել նրանց: Պատկերացնում ե՞ք նման մարդկանց վիճակը. և այդքանը դեռ քիչ է, քանի որ ըստ եկեղեցու հայրերի կարծիքի, այդ չծնված երեխաները Աստծո դատաստանի ժամանակ դառնում են առաջին վկաները իրենց իսկ ծնողների դեմ:

Բարսեղ Մեծ սուրբը այս առիթով ասել է. «Որովայնից պտղի վիժեցման նպատակով դեղ ընդունելը հավասարազոր է մարդասպանության, ինչպես որ թունավորելով են մարդասպանություն գործում»:

Ի՞նչ աշակոր ու դաժան վախճան է սպասվում նման մարդկանց, որոնք իրենց մարմնի մեղսալից ցանկությունների ժամանակավոր հաճույքների համար պիտի պատժեն հավիտենական տանջանքներով: Բայց եթե նման ծնողները դարձի գան ու զղջան իրենց զաղելի արարքների համար, Աստված իր մեծ ողբերմությամբ պատրաստ է ներելու, եթե դրանց հետո նման մարդիկ քահանային խոստովանեն իրենց մեղքերը, այցելեն մանկատները ու ընծայաբերություններ ու ողորմություն բաժանեն լրված և դժբախտ մանուկներին:

Միտումնավոր կերպով այս մեղքի մասին գրեցի վերջում, որովհետև այն մեծ մասամբ առնչվում է Աստծո տված յոթերորդ պատվիրանի հետ:

## ՊԱՏՎԻՐԱՆ ՅՈՒԹԵՐՈՐԴԻ

### «ՄԵՇՆԱԿԵՐ»

Այժմ պետք է խոսենք ամենատարածված ախտի՝ շնության և պոռնկության մասին, որով այժմ ապականված է ամբողջ աշխարհը: Լինի դա հետամնաց, թե խիստ զարգացած պետություն, այդ ախտանշանները երևում են բոլոր երկրներում և հաճախ այն դուրս է գալիս մինչև հեռուստաէկրան և իր լավիրշ ժամանակուով ապականում մեր ընտանիքները, Ակելով նույնիսկ մանուկ հոգիները: Այս մեղքը թերևս բոլոր մեղքերից ամենաանվնասն է թվում, հաճախ և ցանկալի, բայց իր կործանիչ զորությամբ չի զիջում և ոչ մի հասարակական խորշակի, որը կարող է մինչև անգամ ներթափանցել ազգի արմատների մեջ: Իզուլ չէ (ինչպես արդեն նշեցինք), որ այս դարի ամենաախտավոր և անբռնելի հիմնադրությունը՝ ՍՊԻԴ-ը դարձավ շնության, արվամոլության և այլասերվածության հետևանքը: Ասածներս լոկ խոսքեր թող չթվան այն ընթերցողի համար, որ մի գուցե ինքն էլ է թեթևամտությամբ վերաբերվում է այս ապականիչ ախտին: Աստվածաշնչային հետևյալ օրինակները թող սթափեցնեն այդպիսիներին: Իսրայելի դատավորներից՝ Սամսոնին Տերը ուխտի նշանով այնքան զորություն և ուժ տվեց, որ նա առյուծին մի ուլի պես պատառուեց, էշի մի ծնուտով հազար այլազգի թշնամի կոտորեց, բայց երբ հրապուրվեց Դալիլա անունով մի կնոջով, շնության հեշտանքի ժամանակ բացեց իր զորության գաղտնիքը և նրան բռնելով, աչքերը

փորեցին, երկաթե կապանքներով կապեցին ու բանտում աղորիքի քար էր պտտեցնում անքան անասունի պես:

Իսկ Սոդոմ և Գոմորի մասին անշուշտ բոլորն են լաել, բայց քչերը գիտեն, որ սեռական այլասերվածության և չնության մեղքի պատճառն էր, որ Արարիչը որոշեց իսպառ ոչնչացնել այդ քաղաքները, չնայած նրանց համար աստվածավախ Աբրահամը ուզեց բարեխոս լինել: Նույնիսկ տասը արդար մարդ չգտնվեց այդ քաղաքներում, որպեսզի նրանց երեսին նայելով Տերը ողորմությամբ վարվեր, քանզի երիտասարդից մինչև ծեր, բոլորը ապականվել էին այդ պիղծ ախտով: Իսկ Տիրոջ ծառան այդ մեղքի վերաբերյալ ասում է. «Մարմինը ոչ թե պոռնկության, այլ Տիրոջ համար է, և Տերը մարմնի համար: Բայց Աստված, որ Տիրոջը հարություն տվեց, ձեզ էլ հարություն պիտի տա իր զորությամբ: Զգիտե՞ք, թե ձեր մարմինները Քրիստոսի անդամներն են: Արդ, Քրիստոսի անդամները առնելով՝ պոռնիկի<sup>o</sup> անդամներ ենք դարձնելու: Քա՛վ լիցի: Զգիտե՞ք թե, ով մերձենում է պոռնիկին, նրա հետ մեկ մարմին է դառնում: «Կիրանեն, - ասում է Գիրքը, - երկուսը մեկ մարմին»: Եվ ով մերձենում է Տիրոջը, մե՛կ հոգի է դառնում նրա հետ: Փախե՞ք պոռնկությունից: Ինչ մեղք էլ որ գործի մարդ, այդ իր մարմնից դուքս է. իսկ ով պոռնկանում է, իր մարմնի դեմ է մեղք գործում» (Ա Կորնթ. Զ 13-18):

Աստված երբ ստեղծեց Ադամին ու Եվային, ասաց. «Տղամարդը թողնելով իր Հորն ու մորը՝ պետք է միանա իր կնոջը, ու երկուսը պետք է լինեն մի մարմին» (Մնդոց Բ 24), և օրհնեց նրանց ու ասաց. «Աճեցե՞ք

բազմացե՞ք, լցըրե՞ք երկիրը» (Մնդոց Ա 28), նաև գրված է. «Ամուսնությունը ըստ ամենայնի հարգելի է և ամուսնական ամկողինը սուրբ: Եվ Աստված պիտի դատի չնացողներին և պոռնիկներին» (Եբր. Ժ 4):

Այսինքն, ինչ որ օրինական է և օրհնված Աստծո կողմից՝ սուրբ է և ընդունելի: Բայց դա իրավունք չի տալիս, որ ամուսինը իր օրինական կնոջ հետ տար-փուհու նման վարվի, որով մի ուրիշ մեղքի ճանապարհ է բացվում, որը կոչվում է այլասերվածություն: Ու որպեսզի մարդը իրեն չխարթի և իսկապես սրբությամբ պահի ոչ միայն իր մարմինը, այլ նաև սիրու, քանզի ինչպես ասացինք, մարդու սրտի մաքրությունից է կախված իր հոգու փրկությունը, որովհետև գրված է. «Երանի սրտով մաքրուներին, քանզի նրանք Աստծուն պետք է տեսնեն» (Մատթ. Ե 8): Իսկ Հիսուսը մի անգամ ասաց. «Լսել եք թե ինչ ասվեց. «Մի՛ չնանար». իսկ Ես ձեզ ասում եմ. ամեն մարդ, որ կնոջ նայում է նրան ցանկանալու համար, արդեն չնացալ նրա հետ իր սըրտում» (Մատթ. Ե 27-28) և «Հիսկապես ասվեց, թե ով որ իր կինը արձակի, թող նրան արձակման թուղթ տա, բայց Ես ձեզ ասում եմ. «Ամեն մարդ, որ իր կնոջը արձակում է առանց պոռնկության պատճառի, նա՛ է, որ նրան չնության է մղում, և ով որ արձակվածին է առնում, չնանում է» (Մատթ. Ե 31-32):

Իմանալով այս ամենի մասին, մենք մեզ անմեղ չհամարենք, երբ մարմնապես չնության չգնալով, իբրև թե արդեն պահած կլինենք այս պատվիրանը ու միաժամանակ տռփալից հայացքներով, կամ կանանց հետեւից ենք նայում, կամ սեռական այլասերվածու-

թյամբ համեմված Փիլմեր կամ ամսագրեր դիտում, կամ էլ համարելով որպես չարիքի փոքրագույն՝ մերկանդամ ու անամոթ հայացքներով զիցուհիների ու զանազան դերասանների պատկերներ կախում տան պատերին:

Մի՛ խաբվիր: Քո Տեր Աստվածը սրտիդ բոլոր գաղտնի ու չար խորհուրդները գիտի և դատաստանի առաջ պիտի լույսի առաջ հանի և հատուցի ըստ արժանվույն, ինչպես որ գրված է. «Զգիտե՞ք թե անիրավներն Աստծու արքայությունը չեն ժառանգում. մի խաբվե՞ք. ո՛չ պոռնիկներ, ո՛չ կըռապաշտներ, ո՛չ շնացողներ, ո՛չ իդացողներ, ո՛չ արվածոլներ, ո՛չ գողեր, ո՛չ ագաճներ, ո՛չ հարբեցողներ, ո՛չ բաժբասողներ, ո՛չ էլ հափշտավորներ Աստծո արքայությունը չպիտի ժառանգեն» (Ա Կորնթ. Զ 9-10):

Այս բոլոր վկայությունները կարծում եմ, բավական են, որպեսզի մարդը իրեն չխարի, այլ իմանաթե ինչ է Տիրոջ կամքը շնության մեղքի վերաբերյալ և սրբությամբ ու անարատությամբ պահի իր մարմինը, որ Աստծո տաճար է համարվում:

Որովհետև այս աշխարհի հշիանը՝ սատանան քաջ գիտակցելով մարդու սեռական ցանկասիրությունների մասին, այդ գայթակղիչ զորությունով մարդուն այն աստիճան է ապականում, որ երբեմն այդ մեղքի մեջ գտնվող այրը, կամ նույնիսկ կինը, դա համարել են սովորական, նույնիսկ գովասանքի արժանի մի բան, և այդ պատճառով ամուսնացածների ստվար մասը սիրուհիներ ու սիրեկաններ է պահում, որը Աստծո աչքի առաջ խիստ գարշելի է, քանզի այդ համարվում է դավաճանություն:

Ու մարդկությունը ողջախոհության դեմ այն աստիճան մեղանչեց, որ իջավ մինչև իսկ անասնական աստիճանի ու եղբեմն էլ ավելի ցածր, աեղի տալով դիվական այլասերվածությանը: Իսկ հիմա, աշխարհի զարգացած երկրներում, և ավա՛ղ նաև մեզ մոտ, կուսությունը, որ կնոջ անարատության պատկն է մինչ ամուսնությունը, արդեն համարվում է այն աստիճանի ծաղրի արժանի արատ, որ վերացնելու կարիք է զգաց-վում, որը ոչնչով չի տարբերվում հեթանոսական ժամանակների բարքերից, երբ հատուկ այդ նպատակի համար կուսուներում ու մեջաններում «սուրբ ցուլեր» կոչվող առնական տղամարդիկ էին պահում, որոնք լկում էին այդտեղ բերված կույս աղջիկներին: Կամ էլ ամերի վատթար մի բան՝ մեկ էլ տեսնում ես պսակադրության արարողության նպատակով, սուրբ եկեղեցի են բերում «բանը բանից անցած» զույգերի, «Հարսի» հղության չգիտես որ ամսում, արդեն կատարվածի խայտառակությունը կոծկելու միտումով: Բայց նման հանդուգները չգիտեն, որ այդ մեծ խորհուրդի կատարման ժամանակ սրանց գըլմին թագ է գրվում, ի նշան մեղավոր ցանկություններին հաղթողների, իսկ հակառակ գեապքում պսակը անեծքի կարող է վերածվել: Հին ուխտի օրենքում նույնիսկ գրված է. «Եթե ճիշտ լինի նրա (փեսայի) ասածը և աղջկա կուսության ապացույց չգտնեն, աղջկան թող բերեն իր հոր դուռը, և քաղաքի բնակիչները քարկոծելով թող սպանեն նրան, որովհետև անպատիվ գործ է արել՝ պոռնկացել է իր հոր տամնը» (Բ Օրենք իթ 21):

Իսկ մի անգամ կրթված մի անձնավորություն, լսելով շնության մեղքի մասին, ինձ հետեւյալ հարցը տվեց.

«Կինս ինձ որպես մարդ էակ գուր չի գալիս և մենք սրտով և նախասիրություններով դարձել ենք ինչպես սար ու ձոր և սառել է մեր առաջվա սերն ու կապվածությունը, իսկ գու ասում ես, որ Հիսուսն ասել է, այր ու կին ցմահ միասին պետք է լինեն և ով որ բաժանվի՝ բացի շնության մեղքի պատճառով, մեղափոր կլինի Աստծո առաջ: Եվ ահա ես չեմ բաժանվում իմ կնոջից, քանզի նա իմ երեխաների մայրն է, և քանի որ դու էլ ավելացրիր, որ բաժանվելը մեղք է, ես նրա բոլոր կարիքները հոգում ու կատարում եմ, նմանապես իմ ամուսնական պարտքը իր հանդեպ, բայց միևնույն ժամանակ գաղտնի կապված եմ ինձ շատ սիրելի մի կնոջ հետ, որը ամուսին չունի և նա էլ ինձ է շատ սիրում և մեզ միմյանց հետ շատ հաճելի է: Հիմա պատասխանիր ինձ, մի՞թե ես էլի Աստծո առաջ մեղափոր եմ»:

Պատասխանի համար սրտումս աղոթք արեցի, որովհետև միգուցե դրանից էր կախված նրա Աստվածանաշողության ճշմարիտ գիրքը, ու քիչ հետո հարցրի նրան. «Հիմա պատկերացնենք ճիշտ հակառակը, այսինքն կինդ հիսաթափված ու օտարացած քեզանից, այլևս չի սիրում քեզ, ինչպիսին որ կաս, բայց կատարում է իր բոլոր պարտականությունները, քո և քո երեխաների հանդեպ, ու միաժամանակ սրտով սիրում է մի ուրիշ տղամարդու և իրեն շատ հաճելի է նրա հետ կենակցելը, ու դու մի օր իմանում ես այդ մասին. ինչպե՞ս կվարվեիր կնոջ հետ»: Մի քանի վայրկյան մտորելուց հետո, նա հայ տղամարդուն բնորոշ կոպտությամբ, հատ-հատ արտասանեց. «Ես կմորթեի կնոջս»: Ես ասացի. «Դու

քո հարցի պատասխանը ինքոր տվեցիր ու վճիռոր ինքոր կայացրիր, այսինքն դու մահվան արժանի մեղքի մեջ ես Աստծո և կնոջը առջև: Դու խաբված ես չարի կողմից, քանզի ասվել է Տիրոջ կողմից. «Դիմացինիդ արա այն, ինչ որ կուզենաս դիմացինդ քեզ անի»:

Իսկ շատերն էլ՝ մանավանդ երիտասարդները, նման ցանկասիրական մեղքերն ուզեցել են ծածկել տարիքային առանձնահատկությունով: Այո՛, հասկանալի է, բայց Աստծո խոսքն ասում է.

«Ուրախացի՛ր, երիտասարդ, քո երիտասարդությամբ, թող սիրուդ զվարճացնի քո երիտասարդ օրերին: Գնա՛ քո սրտի ճանապարհով և քո աչքերի տեսչանքով, բայց և իմացի՛ր, որ այդ բոլորի համար Աստված պիտի քեզ դատաստանի ենթարկի» (Ժողովող ձև 9):

Իսկ նրանք, որոնք ինքնալլկման են ենթարկում իրենց մարմինները ձեռքերի կրքու շարժումներով ու սեռական բավարարվածություն ստանում, նույնպես դասվում են շնացողների շարքում և ստանալու են նույն պատիմը, ինչ որ այդ մեղքը գործողները, որոնք իբր մարմինը անարատ պահելով իրենց հոգին են լլկում, ինչպես որ ասում է Պողոս առաքյալը. «Զեղանից յուրաքանչյուր ոք թող գիտենա իր մարմինը պահել սրբությամբ ու պատվով և ոչ թե ցանկության կրքով» (Ա. Թեսաղ. Դ 4): Էլ չեմ ասում իգացողների, արվամոլների և անասունների հետ պառկողների մասին, որոնք գարշելի ու պիղծ են, թե՛ մարդկանց և թե՛ Աստծո աչքի առջև: Նմաններին եկեղեցին իսպառ զրկում է Սուրբ Հաղորդությունից ու մինչև ի մահ ապաշխարության կարգ դնում:

Այդ է պատճառը, որ Հիսուսը մեծ խստությամբ զգուշացրեց. «Եվ եթե քո աչքն է գայթակղեցնում քեզ, հանիր այն և դեմ գցիր քեզնից. լավ է, որ գումիականի մտնես կյանք, քան երկու աչք ունենաս և ընկնես գեհենի կրակը» (Մատթ. ԺՀ. 9): Այսինքն, գործադրիր ամեն ջանք նման մեղքերից փախչելու համար, քանզի դրանից է կախված Հոգուդ հավիտենականության ելքը:

Թագավոր Սողոմոն իմաստունը, որ մեզանից շատ ավելի լավ գիտեր, թե ով է կինը, քանզի ինքը հազար կին ու հարճ ուներ, իրաստում է մեզ.

❖ «Մի՛ նայիր չար կնոջը, որովհետև պոռնիկ կնոջ շուրթերից մեղը է ծորում, որ առժամանակ պարուրում է քիմքդ, բայց հետո զգում ես, որ ավելի դառն է, քան լեղին, և ավելի սուր, քան երկսարցի սուրը»:

❖ «Մի՛ այցելիր օտար կանանց և մի՛ փարզիր ուրիշի կրծքին, որ քոնը չէ. քանզի տղամարդու ճանապարհներն Աստծու աչքի առջև են, և Նա գիտե նրա բոլոր շավիդները»:

❖ «Օրենքի պատվիրանը ճրագ է, հանդիմանութուն և խրատը լույս են և կյանքի ճանապարհ: Նրանք քեզ հեռու կպահեն ամուսնացած կնոջից և օտար կնոջ չար լեզվից»:

❖ «Որդյան, թող քեզ չհաղթի կնոջ գեղեցկության ցանկությունը, թող չըռնվեն քո աչքերը նրանով, մի հրապուրվիր նրա թարթիչներով, քանզի պոռնիկ կնոջ պատճառով կարող ես մի նկանակ հացի կարոտ մնալ, որովհետև չար կինը որսում է պատվական մարդկանց հոգին»:

❖ «Պոռնիկ կինը պակասամիտ եղողին ասում է.

«Գողացած ջրերը անուշ են և գաղտուկ հայը համով է լինում», բայց նա չգիտի, որ այստեղ մեռեներ կան, ու նրա հրավիրված մարդիկ դժոխաքի մեջ են»:

❖ «Երիտասարդների մեջ պակասամիտ մի տղատեսա, որ փողոցի մեջ (պոռնիկ) կնոջ տան անկյունի մոտով անցալ ու նրա տան ճամփան բռնեց: Երբ իրիկուն եղավ, օրը տարածամեց ու գիշերվա մութը տիրեց, ահա նրա առջև կինը ելավ, նա պոռնիկի կերպարանք ուներ ու նենդավոր սիրտ: Նա աղաղակող էր ու անզգամ և նրա ոտքերը տանը չէին մնում՝ երբեմն դուրսը, երբեմն հրապարակները, և ամեն անկյունի մոտ դարձամուտ էր լինում: Նա բռնեց տղային, համբուրեց ու լիրը երեսով նրան ասաց. «Իմ մոտ խաղողության զոհեր կամ, ես այսօր իմ ուխտերս կատարեցի: Դրա համար ելա քեզ դիմավորելու և գտա քեզ: Իմ անկողինը ծածկոցներով եմ զարդարել ու վրան զմուռս, հալիք ու անովահոտություններ եմ ցանել: Եկ մինչեւ առավոտ սիրով զվարճանանք ու ցանկություններով զբունենք, քանի որ ամուսինս տանը չէ, նա հեռու ճանապարհ է գնացել»: Այսպիսի շատ խոսքերով նրան հրապուրեց ու իր շրթունքների շողոքորթությունով նրան գրավեց: Երիտասարդն էլ կնոջ ետևից սպանդանոց գնացող անսասունի պես, պատժի համար կապված հիմարի պես գնաց, մինչեւ որ նետը նրա լյարդը ծակի, ինչպես մի թոշուն շտապելով դեպի ծուղակն է գնում ու չգիտի, որ դեպի իր անձի կորուստն է գնում:

Հիմա, ո՛վ իմ որդիներ, ինձ լսեք, ու բերանիս խոսքերին ականջ դրեք.

Քո սիրտը դեպի նրա ճանապարհները թող չխո-

տորպի ու նրա շավիդների մեջ թող չմոլորպի, քանի որ նա շատերին խոցոտեց և կործանեց ու նրա բոլոր մեռյած մարդիկ զորավոր էին:

Նրա տունը դժոխքի ճանապարհն է, որ մինչև մահվան շտեմարաններն է իջնում»:

(Առակներ Ե 3-5, 20-21, Զ 23-26, Թ 17, 18, Է 7-27)

Խորհուրդ. եթե մեկը գտնվում է շնության մեղքի մեջ և այս բոլորը իմանալուց հետո կուզենա մաքրվել ու ազատվել Տիրոջ գատաստանից, հրշենք Քրիստոս Տիրոջ հուսադրող խոսքերը, շնության մեղք գործած կնոջը.

«Ես էլ քեզ չեմ դատապարտում, գնա՛ ու այսուհետև մեղք մի՛ գործիր» (Հովհ. Ը 11):

Այո՛, Տերը պատրաստ է ներելու այդպիսիներին, եթե նրանք ճշմարիտ զղումով ապաշխարեն և իսպառ հրաժարվեն իրենց մեղավոր ցանկություններից, ինչպես պոռնիկ Սարիամ Սագդաղենացին արեց և ստացավ թե՛ ներում իր Աստծուց և թե՛ բժշկություն, քանզի Հիսուսը յոթը դև հանեց նրա միջից:

Իսկ Հովհաննես Երզնկացի վարդապետը այս պատվիրանի համար շարունակում է այսպես.

«Շնության մեղքի պատճառով բազմաթիվ պատուհասներ են լինում աշխարհում, երկրի վրա ոով ու ժանտախտ, գերություն ու սպանություն, երկրաշարժ ու հրդեհ. և եթե հետ չդառնան այս չարեքներից, այնպիսիները պատճառ են աշխարհի կործանման, ավերման և արյունահեղության»:

Ահա թե ինչ սարսափելի ու անդառնալի հետեանք է ունենում այդքան աննշան ու հասարակ թվացող շնության մեղքը: Թող սատանան չխարի

մեզ, որ այդ պղծության պատճառով չկորցնենք մեր հավիտենական հոգիները: Տիրոջ երկյուղով այդ ախտից մաքրենք մեր սրտերն ու մարմինները, քանզի դատաստանը ահավոր ու անաչառ է լինելու այդպիսիների հանդեպ:

Աստծո աչքին շնություն է նաև այն, երբ նորաձևության անվան տակ թեթևաբարո կանայք այնպիսի անամոթ ազատությամբ են հագնվում, որ տղամարդիկ ակամա նայելով նրանց, գայթակղվում են մտքով ու սրտում ցանկանում նրան:

Վերջում ավելացնեք, որ Աստվածաշնչում երբեմն Տերը Խսրայելին շնացող կամ պոռնիկ է անվանում, որովհետև այդ ընտրյալ ազգը, որին Աստված զատել էր մնացած հեթանոս ազգերից, որպես իր սեփական ժողովուրդ, տալով իր օրենքներն ու պատվիրանները, բայց նրանք երբեմն-երբեմն թողնելով իրենց Աստծուն, Հարել են մերձակա ազգերի կուռքերին ու չաստվածներին, Երկրապակելով նրանց:

Այստեղից հետեւություն. հոգեոր իմաստով շնանում է այն քրիստոնյա համարվող մարդը, որը թողնելով իր նախնիների սուրբ հավատը ու հարում է աղանդավորական տարանուն խմբերին, մանավանդ, երբ համարձակվում է նորից մկրտվել, անարգելով սուրբ Մեռունը, որով կնվիկ է փրկության համար: Նմաններին խորհուրդ կտայինք լավ մտածել այդ արարքի դառը հետեանքների մասին, քանզի դրանով իսկ անարդում են Աստծո սուրբ խոսքը, որ ասել է. «Մկրտությունը մեկ է», և զղման ապաշխարությամբ մայր եկեղեցու գիրկը վերադառնան:

## ՊԱՏՎԱՐԱՆ ՈՒԹԵՐՈՐԴԻ

### «ՄՇՇ ՇԱՌԱՋԻՇ»

Այս պատվիրանը աշխարհի բոլոր պետությունների և ազգերի օրենսդրության մեջ կա և գործում է ամենայն խստությամբ, որովհետև այն հիմքն է բոլոր տեսակի մարդկային համակեցության՝ այսինքն սեփականության, լինի թե՛ անձնական, թե՛ հանրային:

Ամենազարելի ոճրագործությունները մեծ մասմբ կատարվում են գողության հիմքի վրա: Նույնիսկ եղել են դեպքեր, երբ որդին մահամերձ պառկած մոր զարդերն է գողացել, համարելով, որ միւնույնն է դրանք այլևս պետք չեն գալու նրան, կամ էլ հարբեցող հայրը իր տան հացի վերջին կոպեկներն է գողացել ու տարել իսմել: Եվ ի ցավ բոլորին, լսեցինք, թե ինչպես էին հոգին կորցրած մարդիկ Սպիտակի երկրաշրժի ժամանակ դիակներ թափանում, երեխն էլ անդամահատելով մեռած մարմինները: Ի՞նչ ծանր ապաշխարություն ու մեծ զղում պիտի ապրեն նմանները, մինչև իրենց մեղքերին քավություն գտնեն Աստծո կողմից: Գող էր նաև Հուդան, որի մոտ էր գտնվում գանձանակը, ու նա այդպես էլ մինչև վերջ չհրաժարվելով իր քստմելի արարքից, ի վերջո պարտվեց այդ մեղքից ու վերջում էլ երեսուն արծաթով ծախեց մեր Տիրոջը՝ մատնելով նրան իրեն փնտրողների ձեռքը:

Գողությունը մինչև այսօր աշխարհի համար այդպես էլ չլուծված գերխնդիր մնաց:

Երբ Արարիչը Մովսես մարդարեի միջոցով տվեց

«Մի՛ գողացիր» պատվիրանը, դրա հետ տվեց նաև հետևյալ օրենքները. «Եթե գողին մահացու Հարված հացնես տան պատին անցք բացելիս, թող դա սպանություն չդիտվի» (Ելք ԻԲ. 2): Այսինքն գողությունը Տիրոջ աչքում այնքան չար արարք է համարվում, որ այդ պահին գողին սպանողը Աստծո առջև անպարտ էր մնում:

Իսկ Սողոմոն իմաստունը զգուշացնում է.

«Ով բաժնեկից է դաւնում գողերին, նա առում է իր Հոգին» (Առակներ ԻԹ. 24):

Մեր քրիստոնյա նախնիները Աստծո այս պատվիրանը երկյուղով ու սրբությամբ են գործադրել և աշխարհին հայտնի ազնվարար առևտրականներ են տվել: Նրանք սիրել են կրկնել իրենց որդիներին՝ «Ինչպես կաշխատես, այնպես էլ կծախսես», որը նշանակում է ազնվությամբ, առանց գողանալու ձեռք բերեցիր ունեցվածքը, ազնվությամբ էլ կծախսես և չես մսիի մեղավոր ցանկություններդ բավարարելու համար: Իրենք շատ լավ են իմացել, թե գողացած ապրանքը ինչ գժեախտություն ու անեծք կբերի իր ընտանիքին և միշտ զգուշություն են արել այս բանի համաց:

Մի մարդ պատմում է, թե ինչպես էր իր հայրը «հարամ» բանից վախենում, և մի անգամ նա Աստծով օրհնված իր լիառատ տան նկուղում, մեղքի կարասն էր ուզում տեղափոխել, հանկարծ ի զարմանս նրա, բռնակները մնացին ձեռքում, իսկ կարասը ընկալվեց հողե հատակին: Նա լուռ նայել է թափող մեղքին, հետո ընտանիքի անդամներին և խստորեն ասել է. «Տանս մեջ հարամ բան է մտել»:

Այն ժամանակ մեծ որդին գլխիկոր ու վախեցած խոստովանել է, որ իսկապես գողացված իր է բերել տուն ու թաքցրել: Հայրը խրատելով նրան հորդորել է տանել և տեղը դնել, քանզի դրանով ապականութուն է մուտք գործել իրենց ընտանիքը, և ավելացրել է: «Հարամը հալալն էլ է հետը տանում»:

Թող յուրաքանչյուր անձ քննի, թե ինչ ճանապարհով է ձեռք բերել իր ունեցվածքը, արդյո՞ք անեծքի ու դժբախտության ճանապարհ չի բացել սեփական ընտանիքի համար: Քանզի մենք լավ գիտենք դրա հետևանքները, որովհետև մի սուտանուն համակարգում ապրեցինք, որը ասում էր՝ «Մի՛ գողացիր», բայց ինքն էր առաջին ու ամենամեծ գողը, սկսելով նրանից, որ նախ Տիրոջ եկեղեցին ու նրա ունեցվածքը գողացավ ու թալանեց, սեփականացնելով անգամ աղոթքի տներն ու վանքերը, հետո անցավ մարդկանց ստացվածքին, «Կուլակաթափ» անելով այն դարձրեց հանրային սեփականություն: Եվ վերածվեցինք շատերս գողերի ու կաշառակերների, ու այն աստիճան, որ ժողովուրդը իրեն արդարացնող խոսք էր հնարել. «Պետությունից գողանալը մեղք չէ»:

Ժամանակն է մաքրվելու այդ ախտից. սովորենք ազնվությամբ ու ճշմարտությամբ աշխատել, ինչպես և Տերը հրամայեց Աղամին. «Երեսիդ քրախնքով ուտես քո Հայը» (Ծննդոց Գ 19):

Իսկ այժմ գողության մեղքը նայենք մի ուրիշ տեսանկյունից, երբ գու անձամբ չես գողանում, բայց երբ գողացած իր են բերում և դու իմանալով հանդերձ, այն վերցնում կամ դնում ես նրանից: Արդյո՞ք

անպարտ ես մնում այդ արարքով, թե նույնպես մեղսակից ես դառնում գողին: Մեզ նորից Աստծո խոսքը կօգնի լուսաբանելու, բայց մինչև այդ մի փոքրիկ իրական պատմություն լսենք:

Աստծո ողորմությամբ մի նախկին գողաբարո և կաշառակեր երիտասարդ, լսելով Տիրոջ խոսքը, որ այդպիսի արարքներ գործողը պետք է Աստծո դատաստանի առջև պատասխան տա, իր մեղքը ճանաչելով զղացել ու խոստովանելով դարձի է եկել, հրաժարվելով թե՛ նախկին «փողոս» գործերից և թե՛ այդ մեղքի հետ կապված եկամտաբեր պաշտոնից: Հարազատներից և ծանոթներից շատերը այդ քայլը համարել են մեղմ ասած խելազարութուն: Իսկ նրանցից մեկը, որ թոշակի անցնելուց առաջ մեծ պաշտոն էր ունեցել և արդար մարդու անուն էր հանել իր ազնվության շնորհիվ, ձեռք չմեկնելով պետական ունեցվածքին, երբ իմացավ այդ քայլի մասին, նույնպես զարմացավ այդ անմիտ քայլի համար, և հանդիմանեց նրան՝ նման որոշումը համարելով սխալ: Եվ երբ երիտասարդը զարմացած հարցը է նրան. «Չէ՞ որ դու նույնպես ուզեցել ես նախկին քո պաշտոնում արդարությամբ և ազնվությամբ աշխատել և այդ պատճառով էլ նույնիսկ «միամիտ» մականունն ես վաստակել, և ի վերջո ինքդ էլ թողել ես այդ պաշտոնը»: Դրան հետեւ է անսպասելիորեն մերկացուցիչ պատասխան, քանզի տարեց պաշտոնյա բարեկամը խոստովանության կարգով ասել է. «Ես չէի գողանում և կաշառք չէի վերցնում, որովհետև վախենում էի, քանի որ Ստալինի ժամանակներն էր, ու եթե բոնեին տեղնուտեղը կգնդակահարեին: Ա՛յ, եթե հի-

մա լիներ, լավ էլ կգողանայի ու տունս կլցնեի, ինչպես մեր հարկան խանութիւն վարիչն է անում»:

Փառք Աստծոն, որ մարդկանց սրտի գաղտնիքներն ու բոլոր խորհուրդները գիտի և իր դատաստանը արդարությամբ պետք է լինի, քանզի գրված է. «Նրանք գիտեն Աստծո արդար դատաստանը, թե այդպիսի բաներ գործողները մահվան են արժանի. և ոչ միայն նրանք, որ անում են այդ բաները, այլ նաև նրանք, որ գործողներին հավանություն են տալիս» (Հռմ. Ա. 32):

Երբեմն էլ մարդը իրեն հանդիմանող խիզճը ուղում է հանգստացնել սեփական կեղծ համոզմունքներով, բայց չէ՝ որ ասացինք Աստված մեր սրտերն է քննում ու նույնիսկ տեղյակ է մեր բոլոր գաղտնի մոածմունքներին: Օրինակ, երբ մարդը թերակշռում է, մի՞թե դա նույնը չէ, որ այդ ռոպեին նա դիմացինի գրպանն է մտնում, քանզի գրված է. «Խարդախ կշեռքը պիոդ է Տիրոջ առջև, բայց արդար կշեռքը հաճելի է նրան» (Առակներ ԺԱ. 1):

Որ գողացված հարստությունը երբեք օրհնություն չի բերում, այլ հակառակը, երեսում է այս խոսքերից. «Գանձերը չեն օգնի անօրեններին, մինչդեռ արդարությունը փրկում է մահից» (Առակ. Ժ 2):

Դավիթ թագավորը հիշեցնում է մեզ արդար քրտինքով աշխատողի օրհնությունը. «Մանուկ էի ես և ծերացա, բայց արդարին արհամարված չտեսա, կամ նրա գալակին՝ հաց մուրալիս» (Սաղմոս Լ.Զ. 25):

Եթե լավ քննենք, ապա կտեսնենք, որ գողության արարքի ակն ու աղբյուրը գալիս է մարդու աղահությունից, ինչպես և հաստատում է Տիրոջ խոսքը. «Ամեն

չարիքի արմատը փողասիրությունն է» (Ա. Տիմ. Զ. 10):

Իսկ Հովհաննես երգնկայի վարդապետը զգուշացնում է. «Գողություն է համարվում նաև այն, որ եղբ մեկը մի բան գտնի և չվերադարձնի տիրոջը, երբ նա հայտնվի, ուստի նույն գողի պատիժը պիտի կրի»:

Կարդարով այս պատվիրանի մասին նաև օգտակար է իմանալ Պողոս առաքյալի հետևյալ խոսքերը. «Ով գողանում էր, այլևս թող չգողանա, այլ մանավանդ թող աշխատի իր ձեռքերով բարիք արտադրել, որպեսզի կարո՞ղ լինի տալու նրան, ով կարիքի մեջ է» (Եփես. Դ. 28), և գարձյալ. «Քանզի ով որ գիտի բարին անել և չի անում, այդ մեղք է նրա համար» (Հակ. Դ 17): Այսպիսով Հին ուժատի պատվիրանը հրամայում է չգողանալ, իսկ նոր ուժատով Տերը մեզ հորդորում է ունեցվածքից բաժին հանել կարիքավորներին և աղքատներին, քանզի գրված է նաև. «Երանելի է մանավանդ տալը, քան թե առնելը» (Գործք Ի 35): Ուրեմն, այսուհետեւ ոչ միայն չգողանանք, այլ տանք, որպեսզի Տիրոջ խոստացած երանություններին արժանի լինենք:

Վերջին ժամանակներում, մեր ազգը չունենալով տարրական քրիստոնեական դաստիարակություն, միմյանց դրամ պարտը տալով ընկել են զանազան մեղքերի մեջ, սկսած թշնամություններից, վերջացրած սպանություններով: Սրա մասին գրում եմ մի՝ գողացիր պատվիրանի տակ, որովհետև ըստ սուրբ Հայրերի գողություն է համարվում նաև այն, երբ մի մարդ ուրիշից պարտք է վերցնում ու չի վերադարձնում: Եվ դրա նման է մեղք է նաև ուրիշին վաշխով, այսինքն տոկոսով փող տալը, որի մասին Աստծո խոս-

քը ասում է. «Ով իր տունը լցնում է տոկոսներով ու վաշխով, նա կուտակում է այն մարդու համար, ով ողորմում է աղքատին» (Առակ. իջ 8): Այսինքն՝ Տերն ասում է, որ նման մարդը ինքը իր կենդանության ժամանակ չի վայելելու անօրինությամբ կուտակածը:

Մի՛ գողացիր պատվիրանի վերաբերյալ կարելի է ավելացնել Հետևյալը: Բոլոր մնացած պատվիրաններում մեղանչելիս մարդը զղջումով կարող է արդարանալ, իսկ այս մի պատվիրանը բայց դրանից գործնական քայլ է պահանջում, այսինքն, եթե գողոնը մոտդ է և գիտեն թե ումից ու որտեղից ես գողացել, առանց ափսոսալու և առանց ամաչելու տար ու խոստովանությամբ հետ վերադարձու, ներում խնդրելով արարքիդ համար: Ու գիտեմ, որ շատ դժվար բան է ասածս, բայց Տերը պիտի տեսնի ու ներելով քեզ, ազատի այդ գողության մեղքի համար սպասվող պատժից: Ել չեմ ասում այն մասին, որ ըստ Տիրոջ խոսքի ու հայոց կանոնագրքի, որպես տույժ գողը պարտավոր է գողացվածի չորեքպատիկը վերադարձնել:

Եվ վերջապես Աստծո խոսքը այս մասին հստակորեն ասում է. «Ոչ գոյերը, ո՛չ ապահները Աստծո արքայությունը չեն ժառանգելու» (Ա Կորնթ. Զ 10):

Այս բոլորը կարգալուց ու իմանալուց հետո լավ է Աստծո երկյուղով հեռու մնանք այս հոգեկործան մեղքից ու հույսներս Տիրոջ վրա դնելով մեր ճակատի քրտինքով մեր արդար հացը վաստակենք:



- 81 -

## ՊԱՏՎԱԿԻՐԱՆ ԻՆՆԵՐՈԴ

«Մ՛ ա՞յլ»

Առաջին սուտը աշխարհ մտավ բանսարկու օձի՛ սատանայի կողմից, քանզի Աստված պատվիրել էր մարդուն. «Պարտեզի ամեն ծառից համարձակ կեր, բայց բարու և չարի գիտության ծառից մի կեր, քանզի այն օրը, որ ուտես նրանից, անշուշտ պիտի մեռնես», բայց օձը խարեց Եվային՝ ասելով. «Ձեք մեռնի, այլ աստվածների նման կլինեք՝ բարին և չարը իմացող» (Ծննդոց Բ. 17): Մենք արգեն գիտենք, թե այդ երկու խոսքերից որին ունկնդրեցին Աղամն ու Եվան, և ահա ամբողջ մարդկային սերունդը, իր բոլոր տառապանքներն ու ի վերջո մահը կրում է այդ ստությանը արվելու հետևանքով:

Այդ պատճառով էլ Հիսուսը սատային անվանեց «ստության հայր» (Հովհաննես Հ. 44):

Տիրոջ այս պատվիրանը մեզ զգուշացնում է, որպեսզի նորից չխաբվենք բանսարկուի խոսքերից, որը այժմ այնպես է մոլորեցրել շատերին, որ հիմա էլ համոզել է, թե իբր մի քիչ սուտը եթե կօգնի մարդուն միմիթարելու կամ էլ լավ ապրելու, ապա կարելի է ասել: Անմեղ սուտ չկա. այսպես մտածողները և գործողները նորից են խարվել, քանզի ամեն տեսակի սուտ Տիրոջ առջև մեղք է, ինչպես գրված է.

«Աստված ասում է.

«Այս աչքերը, որ թշնամանքով են նայում,  
այն լեզուն, որ սուտ է խոսում,  
այն ձեռքերը, որ արդար արյուն են թափում,  
այն սիրտը, որ չար խորհուրդներ է հնարում,

- 81 -

այն ոտքերը, որ շտապում են չարիք գործել,  
պիտի ոչնչանան:  
Իսկ անիրավ վկան բորբոքում է ստությունը  
կուիվ է գցում եղբայրների միջև»:

(Առակներ Զ 17-19):

Սուտ խոսող լեզուն ծածկում է կամ իր, կամ դիմացինի մեղքը, որը ի վերջո դատաստանի է տանելու,  
իսկ ճշմարտությունը ի հայտ է բերում այն և տանում  
զդշման ու ապաշխարության:

Մեր անհավատ բժիշկների մոտ տարածված է այն  
կարծիքը, որ մահացու ախտով տառապող հիվանդներից պետք է ամեն գնով հարկավոր է ծածկել իրենց  
կյանքին սպառնացող մոտալուս մահը, դրանով իսկ  
այդ խեղճ մարդկանց զրկելով իր հոգու փրկության  
համար ապաշխարության վերջին հնարավորությունից: Մինչդեռ սուրբ հայրերն ասում են.

«Ինչպես սատանան տեսնելով, որ մարդու կյանքի վերջն է մոտենում, ամեն ջանք գործադրում է, որ նրան կորցնի, այդպես էլ Աստված մահվանից առաջ մի յուրահատուկ միջոց է ուղարկում նրա փրկության համար»:

«Մարմնական հիվանդություններ կան, որ անբուժելի են, բայց հոգունը, եթե ցանկանանք դյուրությամբ կրուժվենք, մանավանդ եթե մտածենք դժոխքի մասին»:

(Հովհաննես Մաշկեվորցի)

«Մահը մուտք է դեպի հավիտենականություն, որը երկուսն է լինելու՝ կամ հավիտենական եղանկություն, կամ հավիտենական տանջանքներ»:

(Գրիգոր Տաթևացի)

Իսկ Հիսուսին մատնող Հուդան՝ ոչ միայն գող էր այլ նաև ստախոս, որի հետևանքը եղավ այն, որ նա ի վերջո հուսահատությունից կախվեց՝ ապաշխարություն չգտնելով: Ստախոս ու պղծաշուրթ էր նաև իսրայելի թագավոր Աքաարի կինը՝ Հեղաբել պոռնիկը, որը ուրիշի այգին զավթելու համար, թագավորի անոնից կեղծ նամակներ գրեց ու կընքելով ուղարկեց ծերերին ու ազնվականներին, որպեսզի սուտ վկաներով այցու տիրոջը հանցավոր հանեն և քարկոծելով սպանեն. այդպես էլ արեցին: Բայց Տերը անպատճի չժողոց նրա այս ու մնացած մեղքերը ու մարդարեկի բերանով ասաց.

«Հեղաբելին պարսպի մոտ չները պիտի ուտեն» (Գ. Թագ. ԻԱ. 23), ու այդպես էլ եղավ, Հեղաբելին սպանեցին և պատուհանից գուրս նետեցին և խրտնած ձիերը կոխված էրին դիակը ու միայն գլուխն ու ոտքերի թաթերը մնացին և դրանք աղբի նման թափեցին թափառող շներին՝ որպես կերակուր:

Այդ պատճառով Տիրոջ ընտրյալ արքան՝ Դավիթ սաղմոսում է. «Ասացի, թե ուշադիր լինեմ ճանապարհներիս, որպեսզի լեզվովս չմեղանչեմ. բերանիս պահապան դրեցի» (Սաղմոս Լ.Ը. 2):

Մեր Տեր Հիսուս Քրիստոսին նույնպես ուզեցին սուտ վկաներով դատապարտել և ի վերջո ճշմարտության համար խաչեցին, քանզի վկայեց, որ ինքը Աստծո Որդին է:

Եվ վերջապես ստի ու կեղծիքի հիմքերի վրա էր կառուցված մեզ ծանոթ կոմունիստական հասարակարգը, ըստ որոնց խոսքերի հիմա մենք պետք է ապրեինք կոմունիզմի անհոգ ու երջանիկ անաստված

տարիներում (մինչև Հիմա իմ ականջներում հնչում է Խրուշչովի ճառի այդ խոսքերը, կոմունիստների համագումարի դահլիճից): Այդ սատանայախորհուրդ պետությունը հենց իր կազմավորման օրերից առաջինը սկսեց ճշմարտության գեմ պայքարել, այսինքն Աստծո ու Նրա եկեղեցու գեմ, որպեսզի հեշտությամբ իր ստուժյունը քողարկի: Եվ այժմ մենք բոլորս կրում ենք դրա ցավոտ հետևանքները, որովհետև գրված է. «Ամբարշտությամբ ցանեցիք, անօրենություն հնձեցիք, ստուժյան պտուղ կերպ» (Օփս Ժ 13), և գարձյալ. «Նրանց ցավերը պիտի շատաման, ովքեր ուրիշ սատվածներ են նախընտրում» (Սաղմոս Ժ 8):

Մենք էլ՝ առաջին քրիստոնյաներս ոչ միայն օտար աստվածներ նախընտրեցինք, այլ նոյնիսկ Աստծո գեմ սկսեցինք մարտնչել, Նրա ծառաներին հալածելով ու սպանելով, և այդքանը քիչ համարելով իր անվան եկեղեցիներն ու վանքերը մինչև գետին խոնարհեցնելով ավերեցինք, կամ էլ գոմերի ու պահեստների վերածեցինք: Եվ մենք ինքներս ականատես եղանք թե ինչպես մեր մոլորված ծնողները թողեցին նախնի հայրերի դաշտանած Աստծուն և նախընտրեցին առանց Աստծո ապրել: Հիմա ինչո՞ւ ենք արտնջում մեր վրա հասած նեղություններից ու փորձություններից, փոխանակ զղջումով ապաշխարհնենք մեր իսկ կատարած զագրելի գործերի համար:

Բայց ի՞նչն էր պատճառը, որ ստության հայրը թեկուզ իր ժամանակավոր հաղթանակը տարավ, որի հետևանքը եղավ միլիոնավոր մարդկանց մահն ու տառապալից թշլառությունը: Պատճառը նույնն էր, ինչ որ ի սկզբանէ էր. մարդը թողեց ճշմարտությունը՝

որն է Աստծո խոսքը և այն ստության հետ փոխելով հրապուրվեց մոլորեցուցիչ գաղափարներով, ինչպես որ գրված էր.

«Եվ Սուրբ Հոգին հայտնապես ասում է, թե վերջին ժամանակներում ոմանք պետք է հեռանան հավատից և իրենց ուշագրությունը դարձնեն մոլորեցնող ոգիների վրա և դևերի վարդապետությունների վրա տարածված սատվասների կեղծավորությամբ, որոնց խղճմանքը խարանված է» (Ա. Տիմոթեոս Դ 1):

Իսկ երբ մեր Տեր Հիսուսը իր սուրբ Արյունով գնված եկեղեցին էր հաստատում, բանսարկու սատանան, նորից իր հնարքներով ուզեց պղծել սրբությունը՝ ստության մեղքի միջոցով: Ահա ավետարանական այդ դիպվածը. «Անամիս ամունով մի մարդ, իր կողմանի համարակալ վաճառեց և նրա գումարից մի մասը կնոջ գիտությամբ թաքցրեց և մյուս մասը բերեց դրեց առաքյալների ոտքերի առաջ: Պետրոսն ասաց. «Անամիա, ինչո՞ւ սատանան լցրեց քո սիրտը, որ դու ստեիր Սուրբ Հոգուն և ագարակի գումարից թաքցնեիր. չէ՞ որ քանի կար, քոն էր այն, և վաճառելիս՝ քո տնօրինության տակ էր. ինչպե՞ս եղավ, որ քո սրտի մեջ այս բաները դրեցիր. մարդկանց չստեցիր, այլ՝ Աստծուն»: Եվ Անամիան, այս խոսքերը լսելով, ընկալ և շունչը փչեց. և մեծ վախ ընկալ բոլոր նրանց վրա, որ այս բանը լսեցին: Երիտասարդները ոտքի ելան, պատաճառքեցին նրան ու տարան թաղեցին: Եվ շուրջ երեք ժամ անցավ. և նրա կինը, որ չգիտեր թե ինչ էր եղել, ներս մտավ: Պետրոսը նրան դիմեց և ասաց. «Ասա՛ դու ինձ, այդչա՞փ գնով ագարակը վաճառեցիք»: Եվ նա ասաց. «Այո՛,

այդչափ»: Եվ Պետրոսը նրան ասաց. «Ինչի՞ համար է, որ դուք միաբանեցիք փորձելու համար Տիրոջ Հոգին. ահա այն մարդիկ, որ թաղեցին քո ամուսնուն, դռան մոտ են. քեզ էլ դուքս կհանեն»: Եվ նա խոկույն ընկալ նրա ոտքերի առաջ և շունչը փչեց:

Երիտասարդները ներս մտան և նրան մեռած գտան. և հանեցին թաղեցին իր ամուսնու մոտ: Եվ մեծ վախ ընկալ ամբողջ եկեղեցու ու բոլոր նրանց վրա, որ այս բանը լսեցին» (Գործե Ե 1-11):

Եթե քննենք մեր բոլորի կյանքը մանկուց սկսած, ապա կհամոզվենք, որ ստության մեղքը առաջիններից է, որ սկսում ենք գործել, չնայած այն կոչում է չգիտակցված մեղք, բայց այն ժանտախտի պես բույն է դմում մարդու հոգում և հետզհետե վարակելով, ապականում է մարդուն ամբողջությամբ:

Լսե՞լ եք, թե ինչպես են դեռ թոթովախոս մանկիկները «անմեղ» ստեր հորինում, որ իրենց արարքի պատիժը չկրեն: Ո՞վ սովորեցրեց նրանց. ոչ ո՞ք, պարզապես բոլորս մեղավոր աղամորդիներ ենք ու մեր ամեն մի սուտը գա սատանայի համար մի-մի ոտնահետք, որ տանում է դեպի մեր սիրարը: Հովհաննեսի ավետարանում գրված է, որ Հիսուսի ձեռքից պատառը վերցնելուց հետո սատանան Հուգայի ներսը մտավ (Հովհ. ԺԴ 27): Եթե գոնե մեկ օր ուշադրությամբ դիտենք մեր շրջապատը կողքից, և յուրաքանչյուր խոսք ու արարք ճշմարտությամբ լույսի տակ բերենք, ապա աշխարհի իրական ու ապականված պատկերը կտեսնենք և կհաստատի Հիսուսի խոսքերը.

«Ինչո՞ւ դուք իմ խոսածը չեք հասկանում. որովհետեւ իմ խոսքը չեք կարող լսել: Դուք հոր կողմից

սատանայի զավակներ եք, և ձեր հոր ցանկություններն եք ուզում կատարել, թեև նա ի սկզբանե մարդասպան էր և ճշմարտության մեջ չմնաց, որովհետեւ նրա մեջ ճշմարտություն չկար: Երբ նա սուտ խոսի, ինքն իրենից է խոսում, քանի որ նա սուտ է և ստի հայր» (Հովհ. Ը 43-44):

Մեր ժողովուրդը մի խոսք ունի. «Մի սուտ ասելուց հետո, յոթին էլ պատրաստի, որ այն ծածկես»:

Թե քանի-քանի անգամ ենք ստությամբ առաջնորդվել, մենք շատ լավ գիտենք, թե քանի անգամ ենք մեր ընտանիքի անդամներին ասել, եթե ինձ զանգեն կասես տանը չէ և գեռ համեմել ես սուտդ հաստատող պատմություններով: Մանավանդ զգույշ պետք է լինեն մանկահասակ զավակներ ունեցող ծնողները, որոնք հենց իրենք են պատճառ գառնում սեփական երեխայի ստախոս դառնալու մեջ: Ինչո՞ւ. շատ պարզ, հիշի՞ր քանի-քանի անգամ ես վախեցրել փոքրիկի տարբեր տեսակի չեղած «բոբոներով» կամ այլ սարսափազդու մտացածին պատկերներով, մայրեր էլ կան, որ իրենց երեխաներին մի աման ճաշ ուտեցնելու համար այնքան սուտ խոստումներ են տալիս, որ այդ կերակուրը անեծքի է վերածվում: Ու երբ նա մեծացել է, հասկացել է, որ իր ծնողները ընդամենը սուտասան են, իսկ սուտն էլ թույլատրելի է ու երբեմն էլ՝ գովելի: Էլ ինչո՞ւ եք պայքարում մնացած կյանքում նրա ստախոսության ու չար արարքների գեմ. չէ՞ որ հիմքը դուք ինքներդ գրեցիք:

Հիշում եմ մի այսպիսի դեպք. բակի մի քանի մանկահասակ տղաներ լուցկիով ինչ-որ բան այրեցին, և անսպասելիորեն հրդեհը տարածվեց ու մի կերպ

Հանգժնելուց հետո՝ վախեցած փախչելով եկան և պատշաճի տակ թաքնվեցին, որտեղ ես էի կանգնած: Ինձ չնկատելով, նրանք սկսեցին հետևյալ խոսակցությունը. նրանցից մեկն ասաց. «Ես չարեցի հրդեհը»: Մյուսը նայելով նրան ինքն էլ ասաց. «Ես էլ չարեցի»: Երբորդը ավելացրեց. «Ես էլ չարեցի, ես լուցին չունեմ»: Իսկ չորրորդը, որ զարմացած նրանց էր լսում, հարցրեց բոլորին. «Ինչպես թե, չէ՞ որ բոլորս արեցինք ու նախապես պայմանագործել էինք, որ խարույկ անենք, էլ ինչու եք ասում, թե մենք չարեցինք»: Եվ երբ տեսավ, որ բոլորը ստությամբ ժխտում են եղելությունը, այդ ժամանակ հատ-հատ արտասանեց. «Դե որ դուք չարեցիք, ուրեմն ես նույնիսկ ձեզ հետ չեմ էլ եղել այնուել. Դե գնացեք, եթե տուտ եք խոսում, ես ձեզանից ավելի լավ տուտ կասեմ»:

Այս գեպքը հետագայում ինձ խորհելու առիթ է տվել, քանի որ ես ականատես եղա, թե ինչպես է ապականվում երեխայի գեռ անարատ խղճտանըքը և ինչ ահավոր էր ստության մեղքը, որ այնքան անհկատ լկում էր մանուկ հոգիները:

Իսկ մի կրոնավոր այս առիթով ասել է թե՝ «Ստախոսը սատանային իր լեզվի վրա է կրում, իսկ լսողը՝ իր ականջներում»:

Զգույշ լինենք, սիրելի ընթերցող և սեփական օրինակով պատճառ չհանդիսանանք մեր ժառանգորդների հոգիների կործանմանը, ինչպես և Աստծո խոսքն է ասում. «Ստախոս վկա առանց պատիժ չի մնա, և չի փրկվի նա, ով զուր տեղուն է մեղաղըրում» (Առակներ ԺԹ 5):

«Եվ ստախոս բերման կսպամի հոգին» (Իմաստ. Ա. 11):  
Իսկ Անտոն Մեծը զգուշացնում է. «Հեռու ստու-

**թյունից, որը վանում է Աստծու վախը»: Արանից կարող ենք նաև հետեւություն անել, որ ստախոս շրթունքներով մենք մեր ազգն ենք ապականում և Տիրոջ առջև բարկություն դիզում:**

Արժե որ այս պատվիրանի մասին խոսքը ավարտենք Հովհաննես Երգնակացու հետեւյալ խրատով. «Բոլոր ստախոսները, եթե ետ չդառնան ու չապաշխարեն, ստախոսնայի հետ տանջանքի և կորստի պիտի մատնվեն, համաձայն այն խոսքի, թե «Տերը պիտի կորցնի բոլոր սուտ խոսողներին» (Սաղմոս Ե. 7): Ճշմարտախոս բերանը Սուրբ Հոգու դուռն է, իսկ ստախոս բերանը դժոխքի դուռն է և գեերի մուտքը: Հետևաբար ձեր բերանը վարժեցրեք ճշմարտությանը, որպեսզի Սուրբ Հոգին բնակվի ձեր մեջ»:



## ՊԱՏՎԻՐԱՆ ՏԱՄՆԵՐՈՐԴ

### «ՄՇ' յանհացի»

Վերջին պատվիրանն է այս, որ Արարիչ Տերը կամեցավ տալ իր ստեղծած մարդուն, որպեսզի նա իր նմանների մեջ կարողանա ապրել առանց մեղսալից ցանկասիրությունների, որն առաջին քայլն է դեպի կործանում:

Այս պատվիրանը զգուշացնում է, որ զանազան ցանկություններ են առաջանում մարդու սրտում, որոնք կարող են նրան առաջնորդել մեղքի, և ի վերջո Աստծո գեմ հանել:

Չիմացածդ ու չաեսածդ բանը չես էլ ցանկանում, իսկ ինչ որ տեսնում ես և քոնը չէ ու քո մեջ ցանկություն է առաջանում այն ունենալու, ապա լավ իմացիր, որ քո մեջ դժոխքի կրակ է սկսվել, եթե իսկույն չհանդցես, ապա այն տարածվելու ու լափելու է նաև քո ունեցածն էլ:

Սատանան երբ խաբում էր Եվային, նա ամեն ջանք արեց, որպեսզի նա արգելված ծառի պտղին նայի ու ցանկանա, որովհետև այն գեղեցիկ էր ու հաճելի աչքերին և ի վերջո Եվան նայեց և ցանկությունը զորանալով հաղթեց նրան ու մեղքը գործեց, որի հետևանքը եղավ նաև Ադամի անկումն ու նրանց դրախտից վռնդումը:

Տասներորդ պատվիրանը սկսում է նրանով, որ մարդուն նախ բարոյական մաքրության է առաջնորդում և արգելում է դրացու կնոջը ցանկանալ; Եվ այդ մասին Աստվածաշնչից ավելի վառ օրինակ երեք հնարավոր չէ գտնել, քան նորից Դավիթ թագավորի

անկման պատմությունը, որի մասին արդեն խոսեցինք ուրիշ առիթով:

Նախ Հիշենք այդ պատմությունը մեր քննելիք տեսանկյունից. Դավիթը Աստծո ընտրյալն ու սիրելին էր, և իսկապես նրա ողջ կյանքը Աստծո հանդեպ հավատքի ու նվիրվածության մի շարան էր, բացի այն դեպքից, երբ մի օր նա իր պալատի տանիքում շրջելիս տեսավ մի գեղեցիկ կնոջ՝ Բերսաբեկն և մարդ ուղարկեց, իր մոտ կանչեց ու ցանկանալով նրա հմայչությանը, պառկեց նրա հետ....:

Ուշադրություն դարձրի<sup>՞ք</sup>, ինչպես գործեց մեղքին տանող հնարքը. տեսավ-ցանկացավ-կատարեց-ընկապ մեղքի մեջ, այսինքն սատանայի նույն ձեռագիրն էր, ինչպես Եվայի պարագայում:

Որոշ ժամանակ անց, այդ կինը լուր ուղարկեց Դավիթին, որ ինքը հղի է: Թագավորը իմանալով, որ նրա ամուսինը գտնվում է պատերազմում և խայտառակություն է լինելու, իսկույն սուրհանդակ ուղարկեց ուղմաղաշտ և Հրամայեց Բերսաբեկի ամուսնուն՝ քաջ Ուրիային, մայրաքաղաք Կանչել: Ու նրան հարց ու փորձ անելով պատերազմի ընթացքից ու զորքի վիճակից, ասաց. «Տունդ գնա ու ոտքերդ լվա», հանգստացիր ճանապարհից, այսինքն կնոջ մոտ գնա, քանի որ հնում կանայք էին իրենց ամուսինների ոտքերը լվանում: Բայց ի զարմանաս թագավորի, նա իր տունը չգնաց, այլ քնեց Դավիթի ծառաների հետ: Երկրորդ օրը նույնպես հրաժարվեց իր տունը գնալուց ու իր կնոջը տեսնվելուց, պատճառաբանելով, որ Աստծո Սուրբ Տապանակը և իր ժողովուրդը պատերազմի մեջ է, և ինքը որպես զինվոր իրավունք չունի:

այդ ժամանակ իր կնոջ տաքուկ ծոցը մտնել: Ինչպի-սի՝ հավատարմություն, ու երանի Դավիթը այդ պա-հին նրանից օրինակ վերցներ, բայց կատարած մեղքը կուրացրել էր թագավորին ու նա երրորդը անդամ հրավիրելով նրան, առատ հյուրասիրություն արեց և գինովցնելով նրան, երեկոյան ուղարկեց իր տունը՝ կնոջ մոտ պառկելու: Բայց Ուրիան նորից հրաժարվեց տուն գնալուց: Դավիթը համոզվելով, որ Ուրիան անդրդվելի է, մի նամակ գրեց զորագլխին, որ այս պատգամաբեր Ուրիային դնի այնպիսի մի տեղ, որ թշնամին սպանի նրան, և հենց Ուրիայի ձեռքով էլ ուղարկեց այն:

Այդպես էլ կատարվեց և Ուրիան մեռավ: Երբ անցան սգո օրերը, Դավիթը մարդ ուղարկեց և Բերսաբեին իր մոտ առնելով, իրեն կին դարձրեց ու շուտով ծնվեց կատարված մեղքի պատուղը:

Կարծես այս պատմությունը աշխարհի նմանա-տիպ դեպքերից այնքան էլ չի տարբերվում, բայց չմոռանանք, որ մեր առջև Աստծո օծյալն էր՝ Խորայե-լի թագավորը, և շարունակությունը տարբեր է.

«Տերը Նախան մարգարեին ուղարկեց Դավթի մոտ: Սա գալով նրա մոտ, ասաց. «Մի քաղաքում երկու մարդ կար. մեկը հարուստ էր, մյուսն՝ աղքատ: Հարուստն ուներ շատ ու շատ հոտեր ու նախիրներ, իսկ աղքատը ոչինչ չուներ, բացի մի փոքրիկ էդ գառ-նուկից, որը գնել էր ու պահում էր: Գառնուկը մեծա-ցավ նրա ու նրա որդիների հետ: Նա ուտում էր նրա հացից, նրա բաժակից խմում, նրա ծոցում էր քնում. դա կարծես նրա զուստըն էր: Այդ հարուստ մարդու մոտ մի անցորդ եկավ: Հարուստը չուզեց իր հոտերից

ու առջառներից մի անասուն մորթել, որ հյուրասիրի իր մոտ եկած անցորդին, առավ աղքատի գառնուկը և կերակուր պատրաստեց իր մոտ եղած մարդու համար»:

Դավիթը խիստ բարկանալով այդ մարդու վրա՝ ասաց Նախանին. «Կենդանի է Տերը. այդ բանն անող մարդը արժանի է մահվան: Նա այդ գառնուկի համար յոթնապատիկ պետք է հասուցի այն բանի փոխարեն, որ նա արեց. այսինքն՝ մորթեց ուրիշի միակ գառը»: Նախանն ասաց Դավթին. «Դո՛ւ ես այն մարդը, որ արել է այդ բանը: Այսպես է ասում Խորայելի Տեր Աստվածը. «Ես եմ, որ քեզ թագավոր օծեցի ամբողջ Խորայելի վրա, Ես եմ, որ քեզ փըրկեցի Սավուղի ձեռքից, քեզ համձնեցի քո տիրոջ՝ Սավուղի տունը, քո տիրոջ կամացք քո գրկում են, քեզ տվեցի Խորայելն ու Հուղայի երկիրը, և եթե դրանք քիչ ես համարում, նույնքան էլ կավելացնեմ»: Ինչո՞ւ Տիրոջ խոսքն անարդեցիր Նրա աչքի առաջ չարիք գործելով: Դու սրով սպանեցիր քետացի Ուրիային և նրա կնոջը քեզ կնության առար, նրան սպանեցիր ամոնացիների սրով: Արդ, սուրը Հավիտյան թող չհեռանա քո անից փո-խարենն այն բանի, որ Ինձ անարգեցիր և քետացի Ու-րիայի կնոջը քեզ կնության առար» (Բ Թագ. ԺԲ 1-10):

Եվ ի հետևանք այս մեղքի պատմության, Տերը մեռցեց Բերսաբեից ծնված երեխան: Իսկ շուտով Դավթի սիրելի որդին՝ Արքասողոմը, վրեժինդրությու-նից գրդած սպանեց իր եղբորը՝ Ամոնին, որից հետո ապստամբեց հոր դեմ, բոլորի աչքի առաջ Ակեց իր հոր հարձերին և ի վերջո արյունահեղ պատերազմում սպանվեց նաև ինքը: Դրանով մեծ վիշտ առաջացավ

Դավթի հոգում, որը լավ գիտեր, որ, այդ բանը իր մեղավոր ցանկասիրության պատճառով պատահեցին, քանզի չպահեց Տիրոջ պատվիրանը ու յոթնապատիկ հատուցեց պատվիրանազանցության համար:

Այո՛, այս ցավալի գեպքերը չէին լինի, եթե Դավթիթը հիշեր և սրբությամբ կատարեր Տիրոջ պատվիրանը. «Դրացիիդ կնոջը մի՛ ցանկացիր»: Բայց իր ցանկությունը այնքան էր կուրացրել նրան, որ պատվիրանազանց եղավ նաև մնացածների մեջ՝ և շնացավ և մարդ սպանեց ու դրանով իսկ անարգեց իր Տեր Աստծուն: Նույնիսկ Ուրիայի անօրինակ հավատարմությունը հետ չկագնեցրեց դրացիի կնոջով հրապուրված ու կուրության աստիճան գայթակղված Դավթին:

Եկ այս պատմության մեջ թե Աստծո և թե ծողովրդի ու թագավորի հանդեպ, իր գարմանալի հավատարմությունը ցուցաբերած Ուրիային Տերը չմոռացավ, այլ Հիսուսի ազգաբանության մեջ գրվեց. «Դապիթ թագավորը ծնեց Սողոմոնին, Ուրիայի կնոջից...» (Մատթ. Ա. 6):

Յուրաքանչյուրիս համար թող այս գեպքը լինի ուսանելի խորհուրդ Աստծո առջև սրբությամբ և վախով առաջնորդվելու համար, քանզի Տերը անպատիժ չի թողնում իր խոսքը անարդողին և իր պատվիրանները զանց անողին, ով էլ որ նա ուզում է լինի: Եկ այդ պատճառով է, որ Սողոմոնը դրացու կնոջ մոտ գնացող մարդուն համեմատում է սպանդանոց տարփող անաստւնի, կամ էլ կրակի կայծերի վրա քայլողի հետ, որոնց խելքը պակաս է:

Յուրաքանչյուր ազգի հիմքը, ընտանիքի բարոյական սրբությունն է: Խախտվեց այն, համարիր որ

ազգը կործանված է, ինչպես և համոզվել ենք նույնիսկ զորավոր ազգերի պատմությունից, ինչպես հնում Սողոմոն ու Գոմորը, իսկ հետո Հռոմը՝ իր այլասերված կայսրերով հանդերձ: Իսկ Աստվածաշնչի հետեւյալ գեպքը հաստատում է վերը ասվածը. Երբ հրեաները Եգիպտոսից դուրս եկան, ճանապարհին նրանք մովագիների ազգին տեսան, որոնք հրավիրեցին իրենց աստվածներին զոհեր անելու ու նրանց երկրպագելու: Իսկ այս ամենը սկսվեց նրանից, որ հրեա իշխանավորները այդ օտարազգի կանանց ու աղջիկներին տեսնելով, պոռնկացան նրանց հետ և մոռացան իրենց Տեր Աստծո պատվիրանները և ցանկությունով լցվեցին դրացիների հեշտասեր կանանց հանդեպ: Եկ Տիրոջ սաստիկ բարկությունը բորբոքվելով՝ հրամայեց Սողսեսին, որ Խարայելի բոլոր իշխաններին կախի Տիրոջ առջև, արևի տակ: Այդ պահին մի հրեա, երբ մովաբացի մի կնոջ իր վրանն էր տանում պոռնկանալու, Աշարոն քաշանայի որդին՝ Փենեհեսը այդ տեսնելով, ձեռքը մի գեղարդ վերցրեց և նրանց վրանը մտնելով, երկուսին էլ փորից խոցելով սպանեց: Այդ նույն պահին Աստծո բարկությունը դադարեց, բայց Տիրոջ կողմից սպանվածների թիվը արդեն 24.000 հազարի էր հասել:

Այս եղելությունը ցույց է տալիս, թե մեր Տեր Աստվածն ինչքան կարեռ է համարում ազգի բարոյական հիմքերից մեկը, որը սկսվում է «Մի՛ ցանկացիր դրացիիդ ոչ մի բանին» պատվիրանով:

Չմոռանանք, որ այդ ցանկությունից է սկսվել մարդկության չարիքը՝ նախանձը: Նախանձում են պետությունները՝ պետություններին, ազգերը՝ ազգե-

րին, ընտանիքները՝ ընտանիքներին, մարդը՝ մարդուն:  
Նախանձը այն լափող կրակն է, որ դժոխքից է  
բռնկվում, քանզի այն սատանայի գենքն է մարդուն  
կործանելու համար: Զարը ի սկզբանե նախանձեց  
մարդուն, որ Աստծո սերն էր վայելում դրախտում:

Եթե մեկը իր դրացիի կամ որևէ մեկի եղածի վրա աչք  
է դնում և չի հիշում այս պատվիրանը և չի պայքա-  
րում իր չար ցանկության դեմ, թող նորից հիշի Աքա-  
արի կնոջ՝ Հեղաբելի պատմությունը:

Յանկության նախանձն է, որ առիթ է տալիս զա-  
նազան պատերազմների ու կոփների, քանզի ուրիշի  
հողն ու ունեցվածքը հանգիստ քուն չի տալիս ագահ  
աչքին, որը օր ու գիշեր, գիշատիչ թունավոր սարդի  
նման, ծրագրեր է հյուսում իր նպատակին հասնելու  
համար:

Այդ նույն նախանձից դրդված էր, որ Կայենը  
սպանեց իր եղբորը՝ Աբելին, որի զոհարերությունը  
ընդունելի եղավ Աստծո մոտ, իսկ իրենը՝ ոչ:

Իսկ Հակոբոս առաքյալը զգուշացնում է. «Այդ  
որտեղից պատերազմներ և որտեղից կոփներ ձեր  
մեջ. չէ՞ որ ձեր այն ցանկություններից, որնք կոփ  
են մղում ձեր ամսամների մեջ: Յանկանում եք, բայց  
չունեք, ուստի և՝ սպանում եք, նախանձում և չեք  
կրողանում ձեռք բերել ձեր ուզածը. պայքարում եք,  
կրվում և ձեռք չեք բերում, որովհետև չեք խնդրում:

Խնդրում եք և չեք ստանում, որովհետև չարամտորեն  
եք խնդրում, որպեսզի այս ծառայեցնեք ձեր ցանկու-  
թյուններին: Շնացողնե՞ր, չփիտե՞ք, որ սերը այս  
աշխարհի համդեալ՝ թշնամություն է Աստծո դեմ, քա-

նի որ, ով ուզում է աշխարհը սիրել, Աստծուն իրեն

թշնամի կանի» (Հակ. Դ 1-4):

Եվ վերջապես նախանձն էր պատճառը, որ փարի-  
սեցիները մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին խաչեցին:  
«Քանի որ Պիդասոսը գիտեր, որ նախանձից էին մատ-  
նել Նրան» (Մատթ. Իէ 18):

Իմանալով, թե ուր կարող է տանել ցանկությունը  
դեպի դրացիիդ ունեցածը, զգույշ եղիր, ով ընթերցող  
և քննիր արդյոք սրտումդ չկա այդ չար ախտից, որը  
շուտով կարող է քեզ գժոխիքի կրակների առաջնոր-  
դել, քանզի չար ցանկություններից մեղք է հղանում,  
իսկ երբ այն զորանում է, մահ է ծնում:

Մեր սուրբ Հայրերը քաջատեղյակ լինելով նա-  
խանձի ու մեղավոր ցանկությունների մասին, իրենց  
սրանչելի մրատներով ու սեփական վարքով հորդո-  
րել են իրենց քրիստոնյա հետեւորդներին, որպեսզի  
փախչեն դրանից, ինչպես հրդեհից կարող է մարդը  
փախչել, քանզի այն նախ կրակի նման ցանկությամբ  
չերմացնում, թուլացնում է մարդու կամքը, որից հե-  
տո սրտի մեջ նախանձի դժոխային խորհուրդն է սկս-  
վում բորբոքվել, ինչը և հավիտենական հոգու կոր-  
ծանման պատճառ է դաւնում: Ու հիմա խրատի կար-  
դով մեջբերենք սուրբ Հայրերի խոսքերից մի քանիսը.

❖ «Ինչպես ժանգն է երկաթը ուտում, այնպես էլ  
նախանձը այն հոգուն, որի մեջ բնակվում է այն»:

❖ «Նախանձը՝ դա թշնամանքի ամենաանհաղ-  
թահարելի տեսակն է: Քանզի ուրիշ անբարյացա-  
կամների հանդեա արած բարությունը մեղմում է  
նրանց թշնամությունը, իսկ նախանձու մարդը ավե-  
լի է զայրանում իրեն արած լավությունից»:

(Բարսեղ Մեծ)

❖ «Երբ չներին կերակրում ես՝ խելոքանում են, երբ առյուծներին ես խնամում, վարժեցված են դառնում, իսկ նախանձները դառնում են ավելի կատաղի, երբ նրանց ծառայություն ես մատուցում»:

❖ «Նախանձուար ուրիշի դժբախտությունը համարում է իր երջանկությունը, իսկ նրանց հաջողությունը՝ իր անձնական դժբախտությունը»:

❖ «Դեք ուրիշ դեկի չի նախանձում, այլ միայն մարդուն, իսկ ով մարդ, նախանձելով քո նմանին, անում ես այն, ինչ չի անում նույնիսկ դեքը»

(Հովհաննես Ռոկերան)

Այս բոլորից հետո ուզում եմ մի իրական պատմություն պատմել ընթերցողի համար, որպես օրինակ Տիրոջ այդ պատվիրանը անարգողի:

Մի փոքրիկ աղջնակ իր ծննդյան տոնի առթիվ ծնողները որոշեցին ոսկե ականջօղեր նվիրել: Եվ հաջորդ օրը այդ փոքրիկ աղջնակը ուրախ-ուրախ դուրս եկավ բակ խաղալու, հարևան մի պառակ ու բամբասկոտ կին, տեսնելով ոսկե ականջօղերը, նախանձի ցանկությունից դրդված, որ իր թոռնիկը չունի, տարբեր հնարքներով խարեց երեխային և ծնողների նվերը վերցրեց նրանից: Երբ երեխան տուն վերադարձավ, ծնողները իսկույն հարցուփորձ արեցին փոքրիկին, թե՝ ո՞ւր են ականջօղները: Նա էլ ասաց, որ օղերը հարեւանի տատիկը հանեց ականջներից: Երեխայի ձեռքից բռնած գնացին նրա մոտ և պահանջեցին, որ ետ վերադարձնի: Զարությամբ ու նախանձով լցված այդ մեկը, նախ սկսեց ստել, որ ինքը չի վերցրել, բայց երբ փոքրիկը նորից հաստատեց, որ նա է, և մանրամասն պատմեց եղածը, այդ

ժամանակ հարևանների առջև խայտառակվելուց խուսափելու համար, նա մի սարսափելի անեծք-երդում արեց Աստծո անունով, ասելով, որ եթե ինքն է վերցրել, թող Աստված իր թոռանը կտոր-կտոր անի: Երբ այս ահավոր խոսքերը լսեցին, աղջնակի հարա-զատները տեղի տվեցին և հեռացան այնտեղից:

Ու մի քանի օր անց այդ պառակի վոքրիկ թոռնիկը տրամվայի տակ ընկավ...: Մնացած խոսքերը ավելորդ է դառնում, բայց այս իրական պատմությունը ցույց տվեց մեկ բան, նախանձի չար ցանկությունը մարդուն կարող է գերել ու տանել բոլոր տեսակի մեղքերի: Տվյալ գեպքում Աստծո համարյա բոլոր պատվիրանների խախտում կատարվեց. թե գողություն, թե՛ ստություն, թե՛ սուտ երկում, թե՛ ցանկություն ուրիշի ունեցվածքի հանդեպ, թե՛ նաև ամենաառաջին պատվիրանի օրինազանցություն: Այսինքն, եթե այդ կինը ունենար Աստծո սերը, ապա կունենար նաև սուրբ վախը Արարչի հանդեպ, և այդ քայլին չէր դիմի:

Այդ պատճառով Աստծո տասը պատվիրաններից հինգը հորդորում են ճշմարիտ աստվածպաշտության, և կոչվում են հանձնառելիներ, իսկ մնացած հինգը կոչվում են հրաժարելիներ, որոնք հոգիների կորսայան պատճառ են հանդիսանում:

Եվ մինչև այս գրքույկի ավարտին հասնելը, ուզում եմ գրել աննկատելի, բայց մի այլ ապականիչ մեղքի մասին նույնպես, որը այնքան է տարածվել և արմատակալել այս դարի մարդկանց ու նաև մեր հայորդիների մեջ, որ արդեն դարձել է սովորական, առօրյա, նույնիսկ կասեի կենցաղային մի բան: Այդ մեղքի անունն է՝ հայՀոյություն: Միգուցե ընթերցողը

իսորհի, թե ինչ կապ ունի հայՀոյության մեղքը Աստծո պատվիանների հետ, քանզի չկա պատվիրան, որ ասի՝ մի՛ հայՀոյի: Այո՛, թուուցիկ հայացքով նայելիս այսպես է թվում, բայց իրականում, հոգևոր հայացքով, պատկերը բոլորովին այլ է: Երբ Հիսուսը փարիսեցիներին հանդիմանում էր կեղծավորության համար, ասաց նաև հետեւյալը. «Ինչ որ մարդուց դուքս է դալիս, ա՛յն է, որ պղծում է մարդուն, որովհետև ներսից, մարդկանց սրտից են ենում չար խորհուրդները՝ չնություն, պոռնկություն, գողություն, սպանություն, ագահություն, չարություն, նենդություն, գիշություն, չար նախանձ, հայՀոյանք, ամբարտավանություն, անգոգամություն: Այս բոլոր չարիները ներսից են ենում և պղծում մարդուն» (Մարկոս է 21:23):

Եթե ուշադիր կարգացիք, նկատեցիք, որ պատվիրանազանց բոլոր մեղքերի հետ համահավասար դրվեց նաև հայՀոյության մեղքը, որ մարդ ուզի թե չուզի, արտահայտում է նրա սրտի չար, ապականացու վիճակը, քանզի նշեցինք, որ բերանը սրտի ավելցածն է արտաքերում: ՀայՀոյության դիվական ախտը կրողները ու օգտագործողները ամեն օր ամեն ժամ զանցառու են դառնում Տիրոջ բոլոր պատվիրաններին ամբողջությամբ: Բացատրեմ Հիմա, թե ինչու: Երբ մարդը հայՀոյում է մեկ ուրիշ մարդու, չէ՞ որ դա հենց առաջին պատվիրանի խախտումն է, քանի որ արդեն գիտենք ըստ Աստվածաշնչի, մարդը Աստծո պատկերի ու նմանությամբ է ստեղծված: Ուրեմն, միթե Աստծուն սիրող մեկը կարող է հայՀոյել Աստծո պատկերն ունեցող մեկին, անարդելով նրա Ստեղծողին և մանավանդ անպատիժ մնալ: Եվ ավա՛զ, մենք

շատերս լավ գիտենք, թե այդ հայՀոյության ախտը ինչ սարսափելի ու դաւը ավերածություններ գործեց մեր քրիստոնյա ազգի մեջ, որոնց շրթունքները մի ժամանակ իրենց աղոթքներով Աստծուն էին փառաբանում, իսկ այժմ Տիրոջ ճանապարհներից խոտորվելով սատանային են հաճեցնելով ուրախացնում: Այն ապականացու ախտը այն աստիճան առօրյականացավ, որ նույնիսկ մեր մանուկները սկսեցին պղծվել շրջապատից ու երբեմն էլ հենց իրենց ծնողների գարշահու հայՀոյանքներից: Ինքս անձամբ լսել եմ, թե ինչպես են «բարի» ու «հանապչի» կոչվող քեռիները մանուկ երեխաներին պղծաշուրթ դարձնում, զանազան «անմեղ» հայՀոյություններ սովորեցնելով: Իսկ մի անգամ, երբ երկաթուղային կայարանում մի ընկերոջ էի ճանապարհում, հանկարծ այդ կանգնած ամբոխում, միջին տարիքի մի հայր, որն իր 3-4 տարեկան դեռ թոթովախոս երեխային էր գրկել, ասաց իր տղային. «Բալիկ ջան, այս տյույյային մի լավ բան ասա», ցույց տալով իր հարազատներից մեկին: Ես, որ պատահաբար կանգնած էի նրանց կողքին և ակամա մասնակից է այդ խոսակցությանը, ինքս ինձ մտորում էի, թե ինչ լավ բան կարող է ասել այդ երեխան: Հանկարծ, այդ մանկահասակ, կաթներ ու հրեշտականման երեխայի բերանից մի այնպիսի զագրելի, կոպիտ տղամարդուն բնորոշ հայՀոյություն լսեցի, որ ամբողջ հոգիս տակնուրվա եղավ այդ նողկալի տեսարանից: Ես չեմ հավակնում, որ ինքս սուրբ ու անարատ եմ, քանզի այդ մեղքով ես էլ եմ տարիներ շարունակ ապականվել, մինչեւ իմ դարձը առ Աստված, բայց այդ տեսածս ու լսածս սրբապղծու-

թյան քստմնելի վիճակ առաջացրեց նույնիսկ ինձ նման մեղավոր տղամարդու մեջ: Իսկ ներկաները այդ թվում և այդ «այսուան» սկսեցին գոեհկորեն հոգուալ ու գովել երեխային, որը ոգևորվելով, ավելի սարսափելի հայհոյութուններ էր անում ու նրանց հետ ուրախանում: Այդ օրվանից չնայած տարիներ են անցել, բայց չնարավոր չէ մոռանալ այդ գժոխախորհուրդուրդ տեսարանը: Սուրբ Հայրերից մեկը, այդ առիթով ասել է. «Եթե գանակի հարվածով վիրավորենք մանուկին, նվազ վնաս հասցրած կինենք, քան թե վատ օրինակ ցույց տալով գայթակղեցնենք նրան» (Հովհաննես Ոսկեբերան): Իսկ մի օր օտարալեզու հոգևոր մի գրքում պատահաբար կարդացի նման մի գեղքի մասին, և տեսա նաև այդ արարքի սարսափելի հետևանքը: Ուզում եմ թարգմանաբար մեջբերել այդ պատմությունը:

«Պատմում են, որ Հռոմում ապրող մի մարդ կար, որը մի որդի ուներ և շատ սիրելով նրան այնքան էր երես տվել, որ նա այլևս չկարողանալով զսպել իրեն, հայհոյում էր, երբ ինչ որ բան դուրը չէր գալիս: Եվ նա այն աստիճան հանդգնացավ, որ սկսեց Աստծո սրբությունների գեմ բերան բացել: Ու եղավ այնպես, որ այդ ժամանակ սկսվեց ժանտախտ տարածվել այդտեղ: Դրանով վարակված տղան իր հոր ձեռքերի մեջ էր ու գեերը ուզում էին խլել նրա մեղավոր հոգին: Տեսնելով նրանց, փոքրիկը սարսափից ու ահց սկսեց ծչալ. «Հայրի՛կ, Հայրի՛կ, ինձ դրանց ձեռքից պատիր»: Անհանգստացած հայրը հարցորեց նրան. «Ինչ ես տեսնում տղաս»: Որդին պատասխանեց. «Ահա գևերը եկել են և ուզում են տանել ինձ»: Եվ սկսեց

հայհոյել կեղտու բառերով ու նույն ժամին մեռավ հոր գրկում» (Դревնական Պատերիք):

Այս իրական դիպվածք թող սթափեցնի թե՛ հայհոյի հիներին և թե՛ ծնողներին, որոնք իրենց երեխաների այդ անմեղ թվացող խոսքերին անտարբերությամբ են նայում: Իսկ ինչ մնում է Աստծո մնացած պատվիրաններին, այսա մի՞թե երբ մարդ հայհոյություն է անում չի ապականում իր բերանը, որը տրված է Աստծո կողմից օրհնություն ու աղոթքի համար, բայց մենք ապականելով գժոխքի խորխորատ ենք դարձնում այն: Հակոբոս առաքյալը դրանց նմանների համար գրում է. «Լեզվով օրհնում ենք Տիրոջը և Հորը և Նրանով ամիծում ենք մարդկանց, որ ստեղծվեցին Աստծո նմանությամբ: Նույն բերանից դուրս են գալիս օրհնություններ և անեծքներ: Եղբայրնե՛ր իմ, պետք չէ, որ դա այդպես լինի: Մի՞թե մի աղբյուր նույն ակից քաղցր ու դառն ջուր կըխեցնի» (Հակ. 9:9-11):

Եվ հետո մի՞թե հնարավոր է, որ գողը հայհոյիչ չլինի, քանզի նրա արարքը հենց իսկ սատանայի կամքն է, քանզի նա էլ է մարդկանց հավիտենական հոգիները գողանում, գժոխքի կրաների մեջ տանջելու համար: Իսկ շնաբարոները, ստախոսները, ծնողներին անհնազանդները, ուրիշի կնոջն ու նրա ստացվածքին աչք տնկողներին ու նախանձողները, անդադար հայհոյության մեղք են բերում իրենց արարքներով ու չար ցանկություններով, քանզի նման մեղքերով տառապողները չությամբ հայհոյություն են Աստծո սրբության ու նրա պատվիրանների հանդեպ: Ու նաև հիշենք, որ մեր մարդասեր Արարիչը ամեն աշխարհ եկող մարդու համար մի-մի պահապան սուրբ

Հրեշտակ՝ է կարգել մեր հոգիների պահպանության համար։ Չարտամեցնենք մեր խոսքերով ու արարքներով Տիրոջ անարատ, անբիծ ու լույս Հրեշտակներին, որոնք տեսնում ու լսում են ամեն բան, նույնիսկ գաղտնիները, որ գու առանձնության մեջ ես կատարում և նույնիսկ՝ խորհում։ Հիշենք նաև, որ նրանք մեր վկաները պիտի լինեն դատաստանի ժամանակ։ Իսկ առայժմ նրանք, ըստ Նարեկեցու, բարեխսուում են մեզ կարեկցելով՝ հառաջաձայն երգելով։ «Ողորմյա՛, Տե՛ր, գու ստեղծեցիր, գու մի՛ կործանիր»։

Իգուր չէ, որ Տիրոջ ծառան աշխարհի վերջի մասին գրելիս շեշտել է ՀայՀոյիչների մասին, որոնք հանդգնաբար, նույնիսկ պետք է մեծափառներին հայՀոյեն, ինչպես և հաստատում է Հուդա առաքյալն իր ընդհանրական թղթում գրելով. «Նույն ձևով էլ, սրանք ևս, քնի մեջ զառանցելով, մարմին են պղծում, Աստծո իշխանությունն արհամարում, երկնային փառավոր Էակներին ՀայՀոյում, այն դեպքում, երբ Միքայել Հրեշտակապետը, բանսարկու սատանայի հետ, Մովսեսի մարմնի մասին վիճելիս, չհամարձակվեց ՀայՀոյալից խոսքերով դատապարտել նրան, այլ ասաց. «Թող Տերը քեզ սաստի»։ Իսկ սրանք ՀայՀոյում են այն բանի դեմ, որ չգիտեն. և ինչ բաներ, որ բնագդով գիտեն, ինչպես անբան անսառնը, նրանցով էլ ապակմանում են» (Հուդա Ա. 8)։

Իսկ Հիսուսն այդ մեղքի ահավորությունը ընդգծելու համար, ասաց. «Ով ՀայՀոյի Սուրբ Հոգուն, Հավիտյանս թողություն չի ունենա, այլ Համնցապարտ կմնա Հավիտենական մեղքով» (Մարկոս Գ. 29)։

Հովհաննես Երգնկացին, որպես հոգիների բժիշկ,

նույնպես մեր ժողովրդին զգուշացրել է այդ ախտավոր մեղքի սարսափելի հետևանքների մասին. «Մեծ և անքափելի մեղք է ՀայՀոյանքը, և ավելի չար, քան Աղամից մինչև այսօր բոլոր հերձվածները, որոնք նզոված են ժողովով։ Մեծագույն հերձվածը ՀայՀոյանքն է, որ բոլոր մոռացած մեղքերն ու չարիքները հիշել է տալիս Աստծուն, Հրեշտակներին ու սուրբերին, դողացնում է Աստծո արարածները և գարշելի ու զավիր Հոտով լցնում է երկիրը։ ՀայՀոյանքները փակում են Աստծո ողորմության դուռը, թույլ չեն տալիս Արարչին, որ ողորմած աչքով նայի իր արածներին և արգելում են սուրբերին, որ բարեխոս լինեն աշխարհի համար։ Դև ու սատանա են կոչում այդպիսիներին, մինչև որ դառնա չար սովորությունից և պահքով, աղոթքով ու ողորմությամբ քավի իր մեղքերը և Քրիստոսի շնորհով արդարանա։ Այս խրատը ավանդում ենք քրիստոնյաներին այդ մեծ ու ահեղ մեղքերի համար, որպեսզի հրաժարվեն նման չար ու հիմար սովորությունից»։

Եվ այդ քստմնելի արարածները, եթե չապաշխարեն, մնալու են այնքան անգիղ, որ նույնիսկ սկսելու են ՀայՀոյել անձամբ Աստծուն, ինչպես տեղեկացնում է Ավետարանը. «Հինգերորդ Հրեշտակն իր սկավառակը թափեց գաղանի գահի վրա. և գաղանի թագավորությունը խավար դարձավ. մարդիկ ցավից իրենց լեզուներն էին կծոտում։ Եվ իրենց ցավերի ու դառն ախտի պատճառով ՀայՀոյեցին երկնքի Աստծուն, և սակայն չապաշխարեցին իրենց գործերից» (Հայտնություն ԺԶ 10-11)։

Նաև տեղին է հիշենք, որ Հիսուսի հետ խաչված

ավագակներից մեկը, նույնպես հայհոյում էր Հիսուսին, ասելով. «Դու չե՞ս Փրիստոսը, Փրկի՛ր ինքդ քեզ և մեզ»: Իսկ նրա հետ խաչված ընկերը սաստեղով՝ պատասխան տվեց և ասաց. «Աստծուց չե՞ս վախենում, որ դու, որ նույն պատիժն ես կրում: Եվ մենք իրավացիորեն արժանի հատուցումն ենք ստանում այն գործերի համար, որ կատարեցինք, իսկ սա որևէ վաս բան չի արել»: Եվ ասաց Հիսուսին. «Հիշի՛ր ինձ, Տե՛ր, երբ գաս քո թագավորությամբ»: Եվ Հիսուս նրան ասաց. «Ճշմարիտ եմ ասում քեզ, այսօր ինձ հետ դրախտում կլինես» (Ղուկաս հԳ 39-42):

Ահա և ամենահրաշալի ավետարանական դեպքերից մեկը նկարագրվեց բոլորիս աչքի առջև, թե ինչպես հայհոյության ախտով տառապող ավագակը իր սրտի չարությունից բխած լուսանքների պատճառով, ապաշխարանքի ու ներման չարժանացավ, իսկ իր նման հանցագործ ավագակը վախեցավ Աստծուց և հայհոյությամբ չբացեց իր բերանը, և դեռ ավելին՝ զղջումով համարձակվեց Հիսուսից խնդրել որ իրեն հիշի, երբ արքայությունով գա: Ու այդ մի զղջումով և Աստծո հանդեպ ունեցած վախով, նա Հիսուսից լսեց դրախտ մտնելու երանելի խոստումը: Ու տա Աստված, որ մեզանից յուրաքանչյուրն արժանանա այդ սքանչելի խոսքերը լսելուն, մեր Տիրոջ կողմից:

Այս մեղքի նկարագրության առիթով ուզում եմ որպես վերջաբան պատմել մի եղելություն, կապված հայրենական պատերազմի մասնակից հորս հետ: Նրա բազմաթիվ պատմություններից, որոնք պակաս հետաքրքրություն չէին ներկայացնում իրենցից, քանզի դրանք վերաբերվում էին դերության մեջ

եղած տարիների արկածներին, բայց այս մեկը, որ հիմա պիտի շարադրեմ, վերաբերվում է մեր քննարկելիք նյութին:

Նա մի օր պատմեց հետեւյալը. «Զինադադար էր: Մենք չնայած առաջավոր գծում էինք, բայց հարաբերական խաղաղություն էր տիրում: Վաշտով գնացինք ճաշելու, որից հետո ազատ էինք: Դե իհարկե, ծխողի սովորության համաձայն ուտելուց հետո հաճելի էր մի-մի մախորկա քաշելը: Ու ես վառեցի ծխախոտս և դեռ մի քանի ծուխ չքաշած, մի շեկ զինվոր մոտեցավ և ծխախոտ ուզեց: Ասացի նրան, որ սպասի, որ մի քիչ ծխեմ ու մնացորդը իրեն տամ: Այդ տարածված սովորություն էր բանակում: Երբ դեմ դիմաց կանգնած ծխում էի, նա առանց պատճառի, դժգոհությամբ ու չարացած Աստծուն հայհոյեց: Ես սրտնեղած ասացի. «Մի՞թե չես վախենում, պատերազմի ժամանակ, երբ ամեն րոպե մեզ վտանգ է սպառնում, հայհոյում ես Աստծուն»: Նա ուշարդություն չդարձնելով ասածներիս, այս անգամ ավելի թունդ մի հայհոյանք տվեց Մարիամ Աստվածածնին: Ես բարկացած ուզում էի թորնել հեռանալ այդ պղծաշուղթ մարդուց, բայց հանկարծ նույն պահին մի կրակոց լսվեց ու մինչև կհացնեինք թաքնվել, միայն գնդակի ուժգին հարվածի զնդոցը լսեցի իմ սաղավարտին, ծոծորակիս կողմից: Կարծեցի թե վերջ, մահս է. բայց մի պահ հարվածից սթափվելով աչքերս բացեցի և հանկարծ ի՞նչ տեսնեմ, սաղավարտս պտտվել էր գլխիս վրա ու այդ նույն գնդակի, որն ինձ էր ուղղված, անդրադառնալով միսրձվել էր այդ շեկ զինվորի ճակատին, որը անձայն բերանը բաց ու խուփ անելով փլվեց իմ ոտքե-

ըի առաջ: Ես փառք տվեցի Աստծուն, որ ինձ մահվանց փրկեց, բայց և խիստ սարսափեցի Աստծո պատմից, որը չուշացրեց ի գործ դնել սրբապիղ Հայհոյություն անող այս մեկի հանդեպ»:

Հիշված պատմություններն ու խրատները թող սթափեցնի այդ ապականիչ մեղքով տառապող հայրդիներին, քանզի ամեն օր հարատելելով այդ մեղքի մեջ, մենք արհամարում ենք Աստծո համբերությունն ու քաղցրությունը: Չմոռանանք ու նորից հիշենք որ Աստված նաև մաշող կրակ է, Նրա դատաստանը պետք է լինի անաշառ ու արդար, մեղքին տրված արարածների հանդեպ: Եվ Աստվածաշնչի ամենավերջին էջում այսպես է գրված. «Ահա դալիս եմ շուտով և ինձ հետ է իմ վարձը, որպեսզի հատուցեմ յուրաքանչյուրին ըստ իր գործերի» (Հայտ. ԻԲ 12):



Է

## ԵԼՔ

«Եթե Ինչ ու բառ ու մեջ,  
Կողմանք իմ պատմությունները»  
(Հովհ. ԺԴ 15)

Եվ քանի որ մոտենում ենք գրքույկի ավարտին, որպես վերջաբան հիշենք Հիսուսի հետեւյալ խոսքերը. «Մի՛ կարծեք, թե Ես եկա օրենքն ու մարդարեները ջնջելու, չեկա՛ ջնջելու, այլ լրացնելու» (Մատթ. Ե 17):

Իսկ ինչո՞ւմն է կայանում այդ լրացումը ու ո՞րն էր դրա նպատակը, մեզ կօգնի հասկանալու Ավետարանական հետեւյալ հատվածը. «Ահա մեծահարուստ մեկը առաջ վազելով ծնկի իջավ, հարցրեց նրան ու ասաց. «Բարի՛ Վարդապետ, ի՞նչ պետք է անեմ, որ հավիտենական կյանք ժառանգեմ»: Եվ Հիսուսն նրան ասաց. «Ինչո՞ւ ես ինձ բարի կոչում. բարի չէ ոչ ոք, այլ միայն՝ Աստված: Պատվիրամները գիտես. մի՛ չնացիր, մի՛ սպանիր, մի՛ գողացիր, սուս մի՛ վկայիր, պատվի՛ր քո հորն ու մորը»: Նա պատասխանեց և ասաց նրան. «Վարդապե՛տ, այդ բոլորը իմ մանկությունից ի վեր արել եմ. արդ ի՞նչ եմ պակաս թողել»: Եվ Հիսուսն նրան նայելով՝ սիրեց նրան և ասաց. «Քեզ մե՛կ բան է պակասում. եթե կամենում եմ կատարյալ լինել, գնա, վաճառվի՛ր ինչ որ ունես ու աղքատների՛ն տուր և երկնքում գանձեր կունենա. և վերցրո՛ւ խաչդ և արի իմ հետեւից»: Եվ մարդը այդ խոսքի վրա խռովված՝ գնաց տրտում, որովհետև շատ հարուստ էր» (Մարգոս Ժ 17-22):

Եթե ուշադիր եղավ ընթերցողը, ապա այս երկիր-

սության ժամանակ, հանձինս երիտասարդի տեսանք մեկին, որ մանկուց պահել էր Տիրոջ պատվիրանները, բայց նրան կատարելության հանել էր պետք, որ միայն Հիսուսի խոսքով պետք է իրականանար, եթե այս մեկը լսեր և հնազանդվեր Վարդապետին: Իսկ Հիսուսը արդեն պատասխանի մեջ քողարկված ձևով իր Աստվածությունը բացահայտեց, ասելով, որ միայն Աստված է բարի, ու եթե մոտենում ես Հիսուսին, որպես Բարի Վարդապետ, ապա Նրա ասած խոսքերը պետք է ընդունենք որպես Աստծո խոսք և հնազանդվենք Նրան ինչպես Աստծուն, որպեսզի կատարելության համենք: Եվ ահա մեր Բարի Վարդապետը իրեն հավատացողների համար կատարելության ճամփան ցույց տվեց, տալով իր վերջին պատվիրանը. «Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ սիրե՛ք միմյանց, ինչպես ե՛ս ձեզ սիրեցի, դուք միմյանց սիրե՛ք» (Հովհաննես ԺԴ 34):

Այդ հարուստ մարդը եթե պահեր պատվիրաններից ամենասառաջինը՝ այսինքն սիրեր իր Տեր Աստծուն, ապա ամեն բան թողած կդնար Հիսուսի հետեւից և համելով կատարելության, իր փափագած Աստծո արքայությունը կժառանգեր, ինչպես որ գրեց Հովհաննեսը՝ սիրո առաքյալը. «Մրանո՛վ ենք ճանաչում, թե սիրում ենք Աստծու Որդուն, երբ սիրենք Աստծուն և կատարենք Նրա պատվիրանները. քանզի այս է Աստծու համեստ մեր սերը. որ պահենք Նրա պատվիրանները» (Ա Հովհ. Ե 2-3):

Եվ դարձյալ. «Եվ Նրա պատվիրանը այս է, որ հավատանք իր Որդու Հիսուս Քրիստոսի Անվանը և սիրենք միմյանց, ինչպես որ Նա պատվիրեց մեզ: Եվ

ով պահում է Նրա պատվիրանները, բնակվում է Աստծո մեջ, և Աստված՝ Նրա մեջ» (Ա Հովհ. Գ 23-24):

Եվ դարձյալ. «Ով ասում է, թե ճանաչեցի Նրան, բայց Նրա պատվիրանները չի պահում, սուտ է և Նրա մեջ ճշմարտություն չկա: Իսկ ով պահում է Նրա խոսքը, Աստծո սերը Նրա մեջ ճշմարտապես կատարյալ է...» (Ա Հովհ. Բ 4):

«Սիրելինե՛ր, սիրենք միմյանց, քանի որ սերն Աստծուց է. և ամեն ոք, ով սիրում է, Աստծուց է ծնված և ճանաչում է Աստծուն: Իսկ նա, ով չի սիրում, չի ճանաչում Աստծուն, քանի որ Աստված սեր է: Եվ սրանո՛ւմ երևաց Աստծու սերը մեր հանգեպ. այն, որ Աստված որ իր Միածին Որդուն աշխարհ ուղարկեց, որպեսզի Նրանով կենդանի լինենք: Սրանո՛ւմ է սերը. մենք չենք, որ սիրեցինք Աստծուն, այլ Նա՛ սիրեց մեզ և ուղարկեց իր Որդուն մեր մեղքերի քավության համար: Սիրելինե՛ր, եթե Աստված այսպես սիրեց մեզ, ապա մենք ևս պարտավոր ենք սիրել միմյանց:

Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել: Եթե միմյանց սիրենք, Աստված բնակվում է մեր մեջ և Նրա սերը մեր մեջ կատարյալ է» (Ա Հովհ. Դ 7-12):

«Ով ասում է, թե ինքը լույսի մեջ է և ատում է իր եղբօրը, սուտ է և խավարի մեջ է տակալին: Ով սիրում է իր եղբօրը, բնակվում է լույսի մեջ, և Նրա մեջ գայթակղություն չկա: Իսկ ով ասում է իր եղբօրը, խավարի մեջ է, խավարի մեջ է շրջում և չգիտե, թե ուր է գնում, որովհետև խավարը կուրացրել է Նրա աչքերը» (Ա Հովհ. Բ 9-11):

Իսկ սուրբ Հայրերը այդպիսիների մասին գրել են.

«Ով եղբոր հանդեպ թշնամանք ունի և միտք է դրել  
ընծա բերելու Աստծուն, նա կրնդունվի հավասար  
նրանց, որոնք շուն են գոհաբերում, կամ էլ  
պոռնկության վարձն են բերում» (Նեղոս Սինայեցի):

Եվ Սուրբ Անտոն անապատականը լավ ճանաչելով  
մեղավոր մարդու էությունը, իր խրատներից մեկում  
ասել է. «Ի ապացույց, որ մարդը չի սիրում Աստծուն  
և նրա Քրիստոսին, այն է, որ նա չի պահում Տիրոջ  
պատվիրանները»:

Իսւ կատարելության ուղին մեր Տեր Հիսուս  
Քրիստոսը, իր անձնական օրինակով ցույց տվեց,  
սիրելով մեր նման մեղավորներին, մինչև վերջ սիրեց  
ու հոժարությամբ մեր մեղքերի քավության համար  
խաչի տաճնջալից ու անարդ մահը հանձն առավ:  
Դրանով իսկ ապացուցելով և՛ իր և՛ Հոր սերը մեր  
հանդեպ ու հորդորեց, պատվիրելով բոլորիս, որ  
մե՞նք նույնպես միմյանց այդ սիրով սիրենք, որպես-  
զի մեր երկնավոր Հոր զավակները լինենք:

Իսկ երբ մի անգամ Հիսուսին հարցրեցին. «Վար-  
դապետ, օրենքի մեջ ո՞ր պատվիրանն է մեծ», Հիսուսն  
այդ հարցին պատասխանեց այսպես. «Պիտի սիրես քո  
Տեր Աստծուն քո ամբողջ սրով քո ամբողջ հոգով ու  
ամբողջ մտքով: Այս է մեծը և առաջին պատվիրանը. և  
երկրորդը սրա նման է. պիտի սիրես քո ընկերջը, ինչ-  
պես քո ամենը: Այս երկու պատվիրաններից են կախ-  
ված ամբողջ օրհնեքն ու մարդարենները» (Մատթ. իԲ 36-  
40): Այս պատասխանով Հիսուս հասկացրեց բոլոր իր  
խոսքը լսողներին, որ եթե մարդը սիրում է Աստծուն,  
ապա այդ սերը պետք է արտահայտվի նաև իր նմա-  
նին սիրելով, եթե չկա սեր մերձավորի հանդեպ,

ուրեմն այն սերը, որ ունի Աստծո հանդեպ թերի է ու  
կատարելության կարիք ունի, ու լրացվում է իր նմա-  
նի հանդեպ սիրով: Այդ նույնն է գրում նաև Հովհան-  
նես առաքյալը. «Եթե մեկն ասի, թե սիրում է  
Աստծուն, և ատի իր եղբորը, սուտ է խոսում. ով չի սի-  
րում իր եղբորը, որին տեսնում է, ինչպես կարող է սի-  
րել Աստծուն, Որին չի տեսել: Եվ Նրանից ունենք այս  
պատվիրանը՝ ով սիրում է Աստծուն, նա պետք է սիրի  
նաև իր եղբորը» (Ա. Հովհ. Դ 20-21):

Ու թող ընթերցողը հիշի, որ Տիրոջ պատվիրաննե-  
րը քննելիս հաճախ էր խոսվում աղքատասիրության,  
ողորմության ու գթասրտության մասին, քանզի ի՞նչ  
սեր, եթե նրա մեջ չկա ողորմություն, ինչ ողորմու-  
թյուն, եթե առանց գթասրտության է: Եթե չկան  
դրանք, ուրեմն այդ սերը կեղծ է, այսինքն փարիսեցի-  
ական, որոնք նույնպես Տիրոջ առջև իրենց արդար  
էին կարծում, յուրովի կատարելով տված պատվի-  
րանները, իսկ արդյունքը եղավ այն, որ նրանք  
Աստծո Որդուն խաչեցին: Եվ այդ էր պատճառը, որ  
Հիսուսը գատապարտեց նրանց, ասելով. «Վայ ձեզ  
կեղծալիրներիդ՝ օրենսգետներիդ և փարիսեցիներիդ,  
որ տալիս եք ամանութիւն և սամիթի ու չամանի տասա-  
նորդը, բայց թողել եք օրենքի ամենից կարևորները՝  
արդարադատությունը, ողորմությունը և Հավատը.  
Հարկ էր այս ամել և այն չթողնել: Կույր առաջնորդ-  
ներ, որ մժողովները քամում եք և ուղտերը կուլ եք  
տալիս:

Վայ ձեզ կեղծալիրներիդ՝ օրենսգետներիդ և  
փարիսեցիներիդ, որ բաժակի ու պնակի դուրսը մաք-  
րում եք, մինչդեռ ներսից դրանք լի են ձեր գողու-

թյամբ և անժուժկալությամբ» (Մատթ. հԳ 23-25):

Իսկ Հովհաննեսը, սիրո առաքյալը մեզ հորդորելով զգուշացնում է. «Ամեն ոք, ով ատում է եղբօրը, մարդասպան է. և գիտենք, որ ամեն մարդասպան իր մեջ հավիտենական կյանք չունի: Սերը նրանով՝ ճանաչեցինք, որ Հիսուսն իր կյանքը տվեց մեզ համար. մենք էլ պարտավոր ենք մեր եղբայրների համար տալ մեր կյանքը: Ով այս աշխարհի բարիքներից ունենա և տեսնի իր եղբօրը մի բանի կարոտ ու փակի իր սիրտը նրա առաջ, Աստծու սերը ինչպե՞ս կարող է բնակվել նրա մեջ: Որդյաններ, խոսքերով և լեզվով՝ չսիրենք, այլ, գործով և ճշշմարտությամբ» (Ա. Հովհ. Գ 15-18):

Ինչպես բերքատու ծառն է առանց քաղցրահամ պտուղների անկատար ու կրակի մեջ ալրմելու արժանի, այդպես էլ պատվիրանապահություն՝ առանց սիրո և ողորմության: Եվ գարձալ. ինչպես աղն է ամբողջացնում կերակուրի համը, նույնպես էլ Հիսուսի խոսքերը լրացրեցին Աստծո պատվիրաններն ու օրենքները, ի հայտ բերելով դրանց բուն էությունը՝ որ Ա.ՍՏՎ.ԱԾ Սեր է: Այդ Սիրո մասին գրենք մեծառառով, քանզի այն երկնային է ու հենց այդ Սիրով մեզ սիրեց Աստված, և այդ Սիրո նշանն ու կնիքը Հիսուս Քրիստոսի հաշն է, ինչպես որ գրեց Հովհաննես առաքյալը. «Քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր միածին Որդուն տվեց, որպեսզի, ով որ նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը» (Հովհ. Գ 16):

Եվ ինչ որ այս կյանքում անենք, եթե այն Աստծո համար ու Աստծո Սիրով է, ապա միայն դա է մնայուն ու հավիտենական, իսկ եթե չկա այդ Սերը, դեռևս

մեր գործերից ու խոսքերից սանդարամետի հոս է փչում: Այդ պատճառով Պողոս առաքյալը հորդորեց. «Ձեր ամեն ինչը Սիրով թող լինի» (Ա. Կորնթ. ԺԶ 14), ու հետո տվեց երկնային Սիրո օրհներգը. «Եթե խոսեմ մարդկանց լեզուները և հրեշտակներինը, բայց սեր չունենամ, կնմանվեմ մի պղնձի, որ հնչում է կամ՝ ծննդամերի, որ զողանշում են: Եվ եթե մարդարեություն անելու շնորհ ունենամ և հասկանամ բոլոր խորհուրդներն ու ամբողջ գիտությունը, և եթե ունենամ ամբողջ հավատը՝ մինչև իսկ լեռները տեղափոխելու չափ, բայց սեր չունենամ, ոչինչ եմ: Եվ եթե իմ ամբողջ ունեցվածքը տամ ալքատներին և իմ այս մարմինը մատնեմ այրվելու, բայց սեր չունենամ, ոչ մի օգուտ չեմ ունենա» (Ա. Կորնթ. ԺԳ 1-4): Ու այս բոլոր գրածները հաստատեցին որ Աստծո պատվիրանների կատարելության կնիքը Սերն է և այդ Սիրո մեջ է պարփակված երկնային ու հոգեւոր բոլոր գանձերը: Եվ հենց այդ Սիրո հենքի վրա էլ Հիսուսն իր վերջին պատվիրանը հաստատեց: Մեր Տերը ոչ թե պատվիրեց սիրել ով ինչպես կարող է, այլ տվեց նաև սիրո չափը «Ինչպիս որ Ես ձեզ սիրեցի ...»: Եվ այն քրիստոնյաները, որոնց սրտերում կա երկնքի արքայության ճանապարհները ու Սեր առ Աստված, կատարելագործվում է Տիրոջ այս վերջին պատվիրանով՝ «Կատարյալ եղեք, ինչպիս ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. Ե 48):

Իսկ Աստծո տված օրենքների ու պատվիրանների կատարելությունը երևաց Հիսուսի լեռան քարոզում, երբ ասաց ի լուր ամենքիս. «Բայց ասում եմ ձեզ, դուք, որ լսում եք ինձ. սիրեցեք ձեր թշնամիներին,

ձեզ ասողներին բարությո՛ւն արեք. օրհնեցե՛ք ձեզ մականական էք առաջանական էք առաջանական էք: Ով խփում է քո ծնոտին, նրան մյո՛ւնս էլ մոտեցրու. և ով որ քեզնից ուզում է, տո՛ւր, և ինչ որ մեկը քեզնից վերցնի, ետ մի՛ պահանջիր: Եվ ինչպես կամենում էք, որ անեն ձեզ մարդիկ, այնպես արե՛ք և դուք նրանց: Եվ եթե դուք ձեզ սիրողներին սիրեք, ո՞րն է ձեր արած չնորհը, որովհետև մեղավորն էլ են սիրում իրենց սիրողներին: Եվ եթե ձեր բարերարներին բարություն անեք, ո՞րն է ձեր արած չնորհը, որովհետև մեղավորներն էլ նույն անում: Եվ եթե փոխ եք տալիս նրանց, որոնցից ետ առնելու ակնկալություն ունեք, ո՞րն է ձեր արած չնորհը, որովհետև մեղավորներն էլ փոխ տալիս մեղավորներն, որպեսզի նույն չափով ետ առնեն: Բայց դուք սիրեցե՛ք ձեր թշնամիներին և բարությո՛ւն արեք ձեզ ասողներին ու փո՛խ տվեք նրանց, ումից ետ առնելու ակնկալություն չունեք: Եվ ձեր վարձը շատ կլինի, և դուք Բարձրյալի որդիներ կլինեք, որովհետև նա բարեհած է չարերի և ապերախտների համդեպ: Գիտակիրտ եղեք, ինչպես որ ձեր Հայրն է գթասարտ»:

«Մի՛ դատեք, որ Աստծուց չդատվեք, մի՛ դատապարտեք և չպիտի դատապարտվեք, ներեցե՛ք, և ներում պիտի գտնեք Աստծուց, տվե՛ք, և պիտի արվի ձեզ. ձեր գողը պիտի լցնեն առատ չափով՝ թաթախուն. այն չափով, որով չափում եք, նո՞ւյն չափով պիտի չափվի ձեզ համար» (Ղուկ. Զ 27-38):

Ահա և Աստծո ողորմությամբ ընթերցողին հնարավորին չափ հաղորդվեց մեր բոլորի Արարիչ ու Տեր Աստծո պատվիրանները և Նրա Միածնի՛ Հիսուս

Քրիստոսի խոսքերը, պատվիրանապահության ու կատարելության ճանապարհը ցույց տալով նրանց, ովքեր լսելով Տիրոջ կամքը, ի պահե, ահով ու երկուդուզով կկամենան հնագանդվել իրենց Արարչին: Եվ թող այս ամենից հետո բոլորիս համար ուղեցույց լինի աստվածային Դավթի սաղմոսերգության հետևյալ տողերը, որոնցով առաջնորդվել են նաև մեր սուրբ հայրերը.

«Քո պատվիրանների

ճանապարհներով ընթացա,

քանզի անդորրություն տվեցիր իմ սրտին:

Մերձեցա Քո պատվիրաններին,

Տե՛ր, մի ամաչեցրու ինձ:

Թող Քո ձեռքը փրկի ինձ,

քանզի Քո պատվիրանները ընտրեցի»:

(Սաղմոս Ճժկ. 31-32, 173)

Բայց մի կենսական հարց է ծագում, կարո՞ղ է արդյոք մեղավոր մարդը Սուրբ Աստծո նման սիրել ու ներել: Աշխարհի պատմությունը ի սկզբանե եղբայրասպան Կայենից սկսած մինչև դավաճան Հուդան ապացուցում է, որ՝ ո՛չ: Գետը ակունքից հեռանալով ավելի է պղտորգում. մարդկություն կոչվող գետը նույնպես: Ամենօրյա մեր տեսած ու լսած ահասարսուռ դաժանությունները, որ կատարում է մարդը իր նմանի հանդեպ, նրա բարոյական խիստ անկման ապացույցն է, չնայած որ բոլոր ազգերն ու պետությունները ունեն իրենց հավատքն ու կրոնը, որոնք օր ու գիշեր բարոյականություն են քարոզում: Բայց արդյո՞ք մարդը ավելի լավն է դառնում դրանից. նորից ո՛չ: Ու հեռու չգնանք, մեր աչքի տեսածով ու

լամազով քննենք: Ավելի մարդասիրական ու երանելի մարդկային հասարակության ծրագիր, քան կոմունիզմի գաղափարն էր, աշխարհը երբեք չի տեսել ու լսել, այն Աստվածաշնչյան դրախտի օրինակն էր, միայն թե առանց Աստծո: Բայց կարողացա՞վ արդյոք մարդը առանց իր Արարչի մի բարի բան անել: Ո՞չ: Չնայած «փորձադաշտը» աշխարհի 1/6-րդ մասն էր կազմում իր ամենահարուստ ու բերրի հողերով ու ընդերքի հանածոներով, լայնահուն ծովերով ու գետերով, տասնյակ մեծ ու փոքր ազգերով ու լեզուներով, էլ ի՞նչ էր պետք, որ մարդը իր սրտի ուզածը կատարեր ու երկնային դրախտը կառուցեր: Բայց կարողացա՞ն արդյոք եղբայրական հանրապետություններով ուսումնական տվյալ կոմունիզմի լայն ճանապարհներով: Այսօրվա «եղբայրական հանրապետությունների» միմյանց գեմ լսվող կրակոցները նորից ասում են, որ ո՞չ: Մարդը կարող է միայն բարին խորհել, բայց անկարող է այն ի կատար ածել, նա պարզապես չունի այդ զորությունը, ինչպես ասում է Պոլոս առաքյալը. «Գիտեմ որ իմ ներսում, այսինքն իմ մարմնի մեջ բարի բան չի բնակվում, քանի որ կամեցողություն կա մոտս, բայց բարին ի գործ դնել չեմ կարողանում: Քանզի ոչ թե բարին, որ ուզում եմ անել, ապա չարը, որ չեմ ուզում, այդ եմ անում» ու վերջում ավելացնում. «Ինչ խղճալի մարդ եմ ես, ո՞վ ինձ պետք է ապատի այս մահկանացու մարմնից» (Հռոմ. է 18-19, 24):

Այսինքն ըստ առաքյալի վկայության մարդկային տկար ու խղճալի բնությանը մի ուրիշ երկնային զորություն ու օգնություն է անհրաժեշտ, որպեսզի նա

կարողանա Աստծո կամքը ի գործ դնել ու կատարել տվյած պատվիրանները: Բայց ո՞ւր է այդ զորությունը և ինչպես հաղորդ լինենք դրան: Այս հարցին պատասխանալու համար հիշենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի խոսքը, որ ասաց իր քառասնօրյա անապատային փորձությունից հետո. «Աստծո թագավորությունը մոտեցել է, ապաշխարեցեք ու Ավետարանին հավատացեք» նաև մի ուրիշ անդամ ասաց. «Եթե չապաշխարեք, բոլորդ էլ կկորչեք» (Սարկոս Ա 15 և Ղուկաս ժԳ 3): Քանզի ճշշմարիտ ապաշխարությունը մահացու հարված է կեղծ ամոթով վարակված մեր հին ադամական էությանը ու փրկության լույս մեղքերով հյուսված սատանայի որոգայթում: Իսկ երկինք համբարձկելուց առաջ մեր Տերը պատվիրեց. «Գնացե՛ք ամբողջ աշխարհով մեկ և քարոզեցե՛ք Ավետարանը բոլոր մարդկանց: Ով հավատա և մկրտվի, պիտի փրկվի, և ով չհավատա, պիտի դատապարտվի» (Սարկոս ժԶ 15): Ավետարան, հավատ, ապաշխարություն և մկրտություն - ահա այս չորս բառերի մեջ է թաքնված Աստծո զորության ու փրկության գաղտնիքը: Բայց նորից մի ուրիշ հարց է ծագում, ինչպես կարող է մեղավոր մարդը սուրբ զորություն կրել, չէ՞ որ այն կարող է նորից իր մեղավոր նպատակներին ծառայեցնել ու ընկնել հպարտության ու փառասիրության ավելի ահավոր մեղքի մեջ: Եվ վերջապես հնարավո՞ր է, որ մեղանչական ու հողեղեն արարածը կարողանա երկնային անապական կյանքը կրել իր մեջ ու չայրվել այդ զորությունից: Այդ հարցին Հիսուս Քրիստոսը իր քարոզություններից մեկում պատասխանեց այսպես. «Նոր գինին հին

տիկերի մեջ չեն դնում, ապա թե ոչ տիկերը կպատվեն. և գինին դուրս կթափի, և՝ տիկերը կիշանան, այլ նոր գինին նոր տիկերի մեջ են լցնում և երկուսն էլ պահպում են» (Մատթ. Թ 17): Այսինքն հին՝ աղամական մարդը չի կարող կրել սուրբ զորությունը ու հարկավոր է մի նոր էռովյուն, որ կարողանա իր մեջ երկնայինը պարփակել: Եվ երբ մի գիշեր Հիսուսի մոտ եկավ մի փարփեցի իշխանավոր, նիկոդիմոս անունով, նա ուղեց իմանալ Աստծո արքայություն մտնելու գաղտնիքը, և այդ զրույցի ժամանակ բացվեց երկնային մի սքանչելի խորհուրդ, որով մեղավոր մարդուն հնարավորություն է տրվում ժառանգել Աստծո արքայությունը. «Եթե մարդը նորից չճնվի, չի կարող մտնել Աստծո թագավորությունը» (Հովհ. Գ 3): Ու բնական է, որ մարդը հարցնի, իսկ ինչպես՝ կարող է ինքը նորից ծնվել, մի՞թե հնարավոր է մոր որովայնը մտնել ու նորից ծնվել: Ճիշտ այդ հարցն էլ նիկոդիմոսը տվեց Հիսուսին ու նրանից ստացավ հետեւյալ պատասխանը. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում, եթե մարդը ջրից ու Հոգուց չճնվի, չի կարող Աստծո թագավորությունը մտնել: Մարմնից ծնվածը մարմին է, Հոգուց ծնվածը՝ Հոգի» (Հովհ. Գ 5): Ահա և այդ գաղտնիքը՝ մարդը նորից, ի վերուստ պետք է ծնվի Սուրբ Հոգու միջոցով, որը կատարվում է երկրի վրա, մկրտության Սուրբ Ավագանի միջոցով: Այս՝ միայն Սուրբ Երրորդության անունով մկրտությունն է մարդուն հնարավորություն տալիս հոգով վերստին ծնվելու ու Աստծո արքայությունը ժառանգելու, մնացած բոլոր ձևերը մարդկային են, կամ էլ դիվական ու փուչ: Միայն մկրտության միջոցով է

մարդը մաքրվում իր աղամական և սեփական մեղքերից ու վերածնվելով նոր մարդ է լինում, երկնային սուրբերի ժառանգակից դառնալով: Ու այստեղ շատերի մոտ մի ուրիշ հարց կարող է ծագել. իսկ ինչ անեն անգիտակից տարիքում մկրտվածները, քանզի մեր եկեղեցին ունի մանկամկրտության խորհուրդ ու շատ-շատերը իրենց ծնողների հավատով մանուկ հասակում են մկրտվել, բայց հետո ոչ մի հոգեւոր դաստիրակություն չստանալով, ոչ կնքահոր, ոչ ծնողների, ոչ շրջապատի կողմից, մնացել են հոգեւոր տղիտության մեջ, և գեռ ավելին. ուսման ժամանակ մանկավարժների կողմից, աթեհստ, այսինքն՝ անաստված կրթություն ես ստացել: Մանկամկրտության վերաբերյալ, որին գեմ են աղանգավորական մտածելակերպ ունեցող քրիստոնյաները, պատասխանենք այսպես. մեզ ավելի իմաստուն չկարծենք, քան մեր նախնի հայրերը, որոնք Սուրբ Հոգով ընդունել են մանկամկրտությունը, քանզի ինչպես Հիսուսը ութերորդ օրը թլպատվեց, որպեսզի ընդունի Հին ուխտի կնիքը, այդպես էլ մեր նախնի սուրբ հայրերը ութերորդ օրվանից մկրտում են մանուկին, որով նա նոր ուխտի կնիքն է ստանում սուրբ Մեռոնի դրոշմով: Եվ ի վերջո՝ Մեսրոպ Մաշտոցը, Ներսես Շնորհալին, Նարեկացին, Գրիգոր Տաթևացին և բոլոր հայ սրբերը մանուկ հասակում են հանձնվել Տիրոջը և ի ապացույց այդ ճշմարիտացիության, դարձել են հավատի մեջ հաղթող մեր սուրբ հայրերը, որոնց հավատի պտուղներն են դարերով վկայված նրանց կյանքն ու գործերը: Իսկ մկրտված քրիստոնյային միայն հարկավոր է ամենօրյա ապաշխարությամբ

մագլցել իր փրկության Գողգոթան, քանզի ապաշ-խարությունը հոգու բաղնիք է Սուրբ Հոգու սրբա-րար կրակով, որով մարդը հոգու աղավնակերպ թևեր է ստանում վեր ճախրելու մեղքի ապականությունից:

Եվ որպես ապաշխարության աղոթքի ուսանելի օրի-

նակ բոլորիս համար կարող է հանդիսանալ մեղան-

չած Դավթի զղջման սաղմոսի հետևյալ խոսքերը.

«Ողորմիր ինձ, Աստված, քո մեծ ողորմությամբ և ըստ Քո առատ գթության քավիր իմ անօրենություն-ները:

Առավել լվա ինձ իմ անօրենություններից և մաքրիր ինձ իմ մեղքերից...

Դարձրու երեսեղ իմ մեղքերից և քավիր իմ բոլոր անօրենությունները:

Սուրբ Միքայատիր իմ մեջ, Աստված, և ուղիղ Հոգի նորոգիր իմ ներսում:

Մի՛ զրկիր ինձ, Տեր Քո երեսից և մի՛ համիր ինձանից Քո Սուրբ Հոգին:

Տո՛ւր ինձ Քո փրկության ցնծությունը և Քո Տիրական Հոգով զորացրու ինձ»:

(Սաղմոս Ծ 3-4, 11-12)

Քանի որ ըստ եկեղեցու վարդապետների, մարդ էակը իրենից ներկայացնում երեքմասնյա ամբողջու-թյուն՝ Հոգին, միտքը և մարմինը, ապա մարդը մեղան-չում է այդ ամենով։ Օրինակ, երբ Եվան լսեց բանար-կուին ու պատասխանեց նրան՝ դա մտքով մեղանչելն է, հետո տեսավ արգելված պատուղը հաճելի է աչքե-րին ու ցանկացավ այն ուտել՝ դա Հոգու մեղանչական դրսերումն էր, քանի որ Հոգու զորություններն են՝ բանականը, ցանկականը ու ցասմականը, և կինը Հոգով

ցանկանալով առավ և կերավ մահաբեր պտուղը ու դրանով իսկ մեղանչեց նաև մարմնով, քանի որ ուտե-լը, խմելը շնանալը, սպանելը, գողանալը մարմնի դործեր են:

Բայց ինչպես օձի թույնը կարող է բժշկել մարմի-նը, եթե իմաստությամբ վարգենք, այդպես էլ պատ-վիրանները, որոնք մեզ մահվան դատապարտության տակ փակեցին, քանի որ եթե չլիներ օրենքը, մարդը անպարտ կլիներ Աստծո առաջ, բայց պատվիրաններն ու օրենքները մարդու մեղավոր էությունն են ի հայտ բերում, և զրանով իսկ զղջման ու ապաշխարության տանում ու մահվան դատապարտության փոխարեն փրկության և օրհնության պատճառ դառնում։ Ինչպես և գրված է. «Օրենքը դաստիարակ եղավ՝ մեզ Քրիստոս Հիսուսին բերելու» (Գաղ. Գ 24): Ավետարա-նական անառակ որդին երբ զղջաց իր մեղքերի հա-մար, նա չմնաց նորից խողեր արածացնելու, այլ վեր կացավ և գնաց Հոր մոտ խոստվանելու ու ներում խընդրելու իր արարքների համար։ Այս գիպվածը հուշում է մկրտվածների մասին, որոնք ժամանակին ստանալով վերսախն ծնունդ, համարվեցին Աստծո զավակներ, բայց քանի գեռ մեղքի մեջ են մնում, ապա անառակ որդու գիրքում են ու միայն ապաշխա-րության միջոցով է հնարավոր վերականգնել ճշմա-րիս որդիական դիրքը։ Ու ինչպես ասում է Պողոս առաքյալը, պլատի զղջումով հաշտվել Աստծո հետ ու նորոգել խաթարված վիճակը։ Այդ պատճառով մեր հայ առաքելական եկեղեցին ապաշխարությունը որ-պես կարևորագույն Հոգերոր խորհուրդ, այն դասել է եկեղեցու յոթ խորհուրդների շարքում։ Այս բոլորը

մեզ կօգնի հասկանալ ապաշխարության, մկրտության ու դրանով իսկ Սուրբ Հոգու զորությանը հաղորդ լինելու խորհուրդը, որով մարդը կարող է պատերազմել թե հին մարդու մեղավոր ցանկությունների և թե աշխարհից եկող գայթակղությունների դեմ ու հաղթող դուրս գալ Տիրոջ զորությամբ, դրանով իսկ պահելով պատվիրանները սրբությամբ ու երկյուղով: Քանզի պատվիրաններով ու օրենքներով մարդը իր մեղավոր վիճակն է ճանաչում, իսկ Տիրոջ շնորքով պատերազմում է այդ մեղերի դեմ:

Իսկ ճշմարիտ, ի սրտե եղած ապաշխարությունը բժշկում է հոգիները ու նոր կյանքի շունչ փչում մեռնող մարդու մեջ, նրան փրկության հույս տալով ասում է. «Արթնացիր, դու, որ քսած ես և կանգնիր մեռելների միջից ու Քրիստոս քեզ լույս պիտի տա» (Եփես. 6 13-14): Այսինքն մեր գաղտնի ու հայտնի բոլոր մեղերը խոստովանությամբ ու զլցումով մահվան խալարից ի լույս հանելով այն մաքրվում է ապաշխարությամբ, որը նույն բանն է, ինչպես մահվան քնով քնած մարդու վերակենդանացումը: Անառակ որդու հայրը նույնակես վկայեց, որ իր որդին կորած էր՝ գտնվեց, մեռած էր՝ կենդանացավ:

Փրկության շնորհը մեզ սիրող Հոր Աստծո կողմից ձրիաբար է տրված, իսկ ապաշխարությամբ ու պատվիրանապահության ջանքը ինքներս պետք է անենք, ինչպես հորդորում է բոլորին Պետրոս առաքյալը. «Եղայրնե՛ր, առավել ջանացեք որպեսզի գործերով ձեր կոչումն ու ընտրությունը հաստատ պահեք» (Բ Պետրոս Ա 10):

Եվ վերջապես. մենք Տիրոջից մի կարեոր հորդոր

ունենք. «Եթե մեկը կամենում է հետեւել ինձ, թող ուրանա իր անձը, վերցնի իր խաչը և գա իմ ետեից» (Մատթ. Ժ 24): Իսկ ինչ է նշանակում խաչ վերցնել, եթե ոչ ամեն գնով պահել Տիրոջ պատվիրանները, որովհետև այս չար ու մեղավոր աշխարհում Տիրոջ սուրբ պատվիրանները պահելը, նման է կատաղի ու պղտոր հորձանուտով սրնթաց գետին հակառակ լողալուն: Եվ մենք գիտենք, որ մարդ արարածը նման կարողություն չունի ու նա իր անձի ջանքերով ընդամենը կարող է որոշ ժամանակով հակառակվել գետի հոսանքին, բայց շուտով թուլացած ու հուսալքված կանձնվի մահաբեր ալիքներին: Մեղավոր մարդկությունը սրնթաց գահավիժում է գեպի հավիտենական գժոխքի կրակները, և միայն Հիսուսին հետևող, Սուրբ Հոգով զորացածները կարող են Աստծո շնորհով, պատվիրանապահությամբ դիմակայել մեղքի այդ մահաբեր ընթացքին ու հասնել երկնային նավահանգիստ: Ինչպես վախկուս և ուրացող Պետրոսը մինչև չըստանար Սուրբ Հոգով զորությունը չէր կարող հազարավորների առջև վկայել հարուցյալ Հիսուսի մասին, այդպես էլ մեղավոր մարդը չի կարող պահել Տիրոջ սուրբ պատվիրանները, մինչև նույն Հոգով զորությանը հաղորդ չլինի: Դրա համար Հիսուսը իր աշակերտներին ասաց. «Նստեցե՛ք Երուսաղեմ քաղաքում, մինչև որ երկնքից զորությամբ զգեստավորվեք» (Ղուկ. Ի 49): Եվ այդ կատարվեց Սուրբ Հոգու պալսայան օրը:

Իսկ Աստծո օրենքներն ու պատվիրանները փրկության ճանապարհի նախազգուշացնող նշաններն են, որոնց մերժումը կամ անտեսումը ողբերգական վախ-

ճանի կհասցնի յուրաքանչյուր հոգու. ով էլ որ նա ուղում է լինի՝ հոգեորական կամ աշխարհիկ:

Սիրելի ընթերցող, ահա զու արդեն իմացար մեր Տիրոջ պատվիրանները և դրանք պահելու զորության աղբյուրը, այժմ իմաստուն եղիր, ապաշխարի՛ր զղջումով ու պահի՛ր դրանք Աստծո Սուրբ Հոգու դորությամբ: Ու մի՛ վհատվիր, եթե այստեղ կարդացած խոսքերով հանդիմանվել ես մեղավոր արարքներիդ համար, Աստված տեսնելով քո անկեղծ զղջումը ու մեղքերիցդ պատապրվելու ջանքերդ, կօնի և կզորացնի քեզ, քանզի դու Նրա օրհնյալ կամքն ես ուղում կատարել: Ու որպես օգնություն կարող ես ամեն օր մեր սուրբ հայրերի հետեւյալ աղոթքը կատարել (իսաչափների և ասա).

«Գոհանում եմ Քեզանից մեր Տեր Աստված, որ քո տեսանելի լույսով զվարճացրեցիր Քո բոլոր արարածներին և Քո պատվիրանների իմանալի լույսով լուսավորեցիր բոլոր Քեզ հավատացողներին: Մեզ էլ զորացրու Տե՛ր, այսօր և ամեն ժամանակ՝ պահելու Քո պատվիրանները, որպեսզի լուսավորված մտքով միշտ Քեզ հաճելին անենք և Քո բոլոր սուրբերի հետ հասնենք հանդերձյալ բարիքներիդ: Շնորհներով և մարդասիրությամբ մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի, Որին վայել է փառք և իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»:

Նաև իմանանք որ այս պատվիրանները կատարողին մեծ օրհնություններ է սպասվում (ինչպես կարդացիր գրքույկի սկզբում) թե՛ այստեղ՝ երկրի վրա, և թե՛ երկնային արքայության մեջ: Բայց և իմանանք,

որ Տիրոջ պատվիրանները մերժողին ու արհամարողին, կամ էլ ծուլությամբ ու ձանձրությամբ կատարողին, կյանքը մաշեցնող պատիմներ է սպասվում (ինչպես կկարդաս գրքույկի վերջում), և ապա ահեղ դատաստան, իսկ հետո տանջանք ու ցավ հավիտենական կրակների մեջ:

Ուրեմն ինչո՞ւ կորչենք. իմաստուն լինենք ու կյանքը ընտրենք որպեսզի ապրենք:

Համառոտելով այս ամենը կարող ենք համարձակաբար ասել. պատվիրանապահությունը դա մեր Սիրո կնիքն է երկնավոր Հոր հանդեպ, և ով որ պահի «Քո Տեր Աստծուն պիտի սիրես քո ամբողջ հոգով, քո ամբողջ էությամբ ու քո ամբողջ ուժով» պատվիրանը, ապա կապահի և մնացած բոլորը, քանզի գրված է.

«Ով Իմ պատվիրաններն ընդունում և պահում է դրանք, նա՛ է, որ Ինձ սիրում է» (Հովհ. Ժ՛ 21):

Եվ թող մեր Արարիչ ու Տեր Աստվածը իր Սուրբ Հոգու չնորհաց զորությամբ օդնի ճշմարտապես իրեն սիրողներին, պահելու իր սուրբ պատվիրանները, որպեսզի հավիտենական Սիրո թագավորությունը ժառանգեն, ինչպես որ մեր Տեր Հիսուս Քրիստոսն ասաց.

«Եթե իր ՊԼՏՎԻՐԵԼ ՊԼՇԵՒ, իր ԼԻՌ ԼԵԶ ԿՐԵՒ, ԻՇՎԻՌ ԵԼ ԻՐ ՀԼՌ ՊԼՏՎԻՐԵԼ ՊԼՇԵՑԻ ԵՎ ՆԻՌ ԼԻՌ ԼԵԶ ԿՐԵՑԻ»:

## ԱՐԵՎ ՎԵՐՋԻԼԻՆ

Այս գրքի առաջին հրատարակությունից ինը տարի անց՝ 2002թ. ինձ հրավիրեցին Եղիպատու՝ ուխտագնացության, Հիսուսի սուրբ Ընտանիքի ապրած վայրերով։ Այդ ծրագրի մեջ կար նաև այցելություն դեպի Սինա լեռ։ Չնայած որ արդեն նոյեմբեր ամիսն էր, բայց այդ երկրում բավականին շոգ էր, այդ պատճառով պետք է բարձրանայինք գիշերով, որպեսզի չթուլանայինք շոգից։ Ոմանք գերադասեցին տեղաբնակ բեդվինների ուխտերից օգտվել, բայց Հայերս որոշեցինք այդ սուրբ լեռը բարձրանալ ինչպես Մովսես մարգարեն, այսինքն ուսքով։ Գիշերային արշավը գետի Սինա լեռան գագաթ, որտեղ Տեր Աստված իր Արարչական Մատով գրեց տասը պատվիրանները, տեղեց մոտ չորս-հինգ ժամ, մինչև որ հասանք ճիշտ այն ժամանակ, երբ բացարձակապես ամայի լեռան վրա սկսեց արեածագը։ Պահը խորհրդավոր էր, քանզի աշխարհի տասնյակ ազգերի ու այլակրոն գալանակների մարդիկ, կանգնած այդ սուրբ լեռան վրա սրտի հուզմունքով կասկարմիր հուրհացող արեն էին դիմավորում, ի խորհուրդ այն բանի, որ այստեղ՝ այս սուրբ վայրում գրված պատվիրանները վերաբերվում է Համայն մարդկությանը։ Իսկ ծագող արեգակը խորհրդանշում էր մեր Տեր Հիսուս Քրիստոն, որն ի լուր համայն աշխարհին ասաց. «**ԵՍ ԵՄ ՀՈՒՅՍՆ ԱՇԽԱՐՀԻ**»։ Եղ մենք՝ Հայորդիներս, ներփին հուզմունքով մի կեհ զգացմունք ապրեցինք, որ այստեղ Հավաքված բոլոր մեծ ու փոքր ազգերի նախնիներից առաջինը եղանք, որ Հավատքով որպես Տեր ու Փրկիչ ընդունեցինք ծագող Արեգակին՝ Աստծո Որդուն։

Թող Տերը օրհնի Հայաստան աշխարհը, որ ճշմարիտ պատվիրանապահությամբ մինչև իր երկրորդ գալուստը հավատարիմ մնանք Տեր Եղիպատու Վեճ Անվանը։ Ամեն:

## ԱՍՏԾՈ ՊԱՏԻԺՆԵՐԸ

Բայց եթե չմեք ինձ և չկատարեք իմ այս բոլոր հրամանները, արհամարեք դրամք, իմ կարգադրություններից ձանձրանալով չկատարեք իմ պատվիրանները, վերացնեք իմ հաստատած ուխտը, ապա ես նույնը կամեմ ձեր նկատմամբ. տագնապալից տառապանքների կմատնեմ ձեզ, քոսով ու գեղնախտով կհիվանդացնեմ ձեզ, որ պակասի ձեր աչքերի լույսը, և դուք հալումաշ լինեք։ Այսժամ զուր տեղը պիտի ցանեք ձեր սերմերը, և ձեր արտերի բերքը ձեր հակառակորդները պիտի ուտեն։ Ես իմ զայրացած հայացքը ձեր վրա պիտի հառեմ, և դուք պիտի ընկնեք ձեր թշնամիների առաջ։ Զեզ ասողները ձեզ հալածական պիտի ամենն, և դուք փախստական պիտի լինեք, եթե անգամ որևէ մեկը չհալածի ձեզ։ Եթե նման պատիժներից հետո էլ ինձ չլսեք, ձեր գործած մեղքերի համար յոթնապատիկ ավելի պիտի պատժեմ։ Ես պիտի խորտակեմ ձեր ամբարտավան պարծենկոտությունը, երկինքը ձեզ վրա երկաթի պես ծանր պիտի դարձնեմ, իսկ ձեր հողը՝ պղնձի պես կարծը։ Ձեր զորությունը ի չիք պիտի դառնա, հողը ձեր ցանած սերմի չափով իսկ բերք պիտի չտա, ոչ էլ երկրի ծառերը պտուղ պիտի տան (Ղետական, 26, 14-20):